



Հեղափոխական խմբի ղեկավար՝

ԶՈՅԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

յնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Հեղափոխական խմբի խորհրդարու՝

ՎԱՀԵ ԲՈՒԼԱՆԻԿՅԱՆ

յնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Հեղափոխական խմբի անդամներ՝

ԹԱԴԵՎՈՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

յնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՏԱԹԵՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

յնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ԱԼԲԵՐՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

յնտեսագիտության թեկնածու

ԴԻԱՆԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային յնտեսական հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ

ՀԱՄԼԵՏ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային յնտեսական հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ

ԱԼԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՊՏՀ մակրոեկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ

**ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

DOI: 10.52174/978-9939-61-282-9

Ե Ր Ե Վ Ա Ն

«ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՏԴ 331.556:314
ԳՄԴ 65.240.7+60.7
Ե 859

Հրատարակման է երաշխավորել
ՀԳՏՀ գիրական խորհուրդը

Մասնագիտական խմբագիր՝

Վ. Բովանիկյան

տ.գ.թ., դոցենտ

Խմբագրական խորհուրդ՝

Դ. Գալոյան

տ.գ.դ., պրոֆեսոր

Թ. Մկրտչյան

տ.գ.դ., պրոֆեսոր

Դ. Հալավերդյան

տ.գ.դ., պրոֆեսոր

Գ. Նազարյան

տ.գ.թ., դոցենտ

Ե 859

Երիտասարդների աշխատանքային միգրացիայի ազդեցությունը և կանխարգելման հնարավորությունները համայնքների ժողովրդագրական իրավիճակի փոփոխության գործընթացում / Զ. Թադևոսյան և ուրիշներ.- Եր.: Տնտեսագետ, 2024. 176 էջ («Ամբերդ» մատենաշար 69):

Երիտասարդ միգրանտները, լինելով առավել շարժունակ սոցիալական խումբ, տարեկան միգրացիոն հոսքերի հիմնական մասն են ներկայացնում: ՀՀ միգրացիոն հոսքերի կազմում երիտասարդ տարիքի բնակչության միգրացիայի սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների և արտագաղթի աշխարհագրական ուղղությունների ուսումնասիրության, տնտեսամաթեմատիկական մոդելների օգնությամբ մակրոտնտեսական և ժողովրդագրական հիմնական ցուցանիշների հետ դրանց փոխառնչությունների գնահատման հիման վրա, ըստ ՀՀ մարզերի ընտրանքային դիտարկումների՝ կատարվել է մանրակրկիտ հետազոտություն: Երիտասարդ աշխատուժի արտագաղթի սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշների վերլուծության, մարզային համայնքների ղեկավարների հետ հարցազրույցների միջոցով երիտասարդների շրջանում միգրացիայի դրդապատճառների, արտագաղթի ուղղությունների, ժողովրդագրական իրավիճակի վրա միգրացիայի ազդեցության և հետևանքների պարզաբանմամբ բացահայտվել են երիտասարդ տարիք ունեցող անձանց արտագաղթի հետևանքները, մշակվել է միջոցառումների համալիր:

Հետազոտական խումբը խորին շնորհակալություն է հայտնում ՀՀ էկոնոմիկայի նախարարության խորհրդական Արտակ Մարկոսյանին, Հայաստանի բանկերի միության նախագահի տեղակալ Արման Մարգարյանին, «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն Վանանդ Կարապետյանին, Գործատուների միության նախագահ Գագիկ Մակարյանին համագործակցության և արժեքավոր փորձագիտական գնահատականների համար:

ՀՏԴ 331.556:314

ԳՄԴ 65.240.7+60.7

ISBN 978-9939-61-282-9

© «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2024

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2024

Ներածություն 5

Գլուխ 1. ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԴՐԴՎՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ9

1.1. Երիտասարդների միգրացիայի դրդապատճառների տեսագործնական հետազոտություն.....9

1.2. Երիտասարդների միգրացիայի ազդեցությունը դոնոր երկրների տնտեսությունների վրա և կանխարգելման ու վերադարձի պետական քաղաքականությունների համաշխարհային փորձը..... 20

Գլուխ 2. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 31

2.1. ՀՀում երիտասարդների արտագաղթի միտումների, սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների և աշխարհագրական հիմնական ուղղությունների գնահատումը..... 31

2.2. ՀՀում երիտասարդների միգրացիայի և ժողովրդագրական իրավիճակի տարածքային անհամաչափությունները և միտումները.... 47

2.3. Երիտասարդ միգրանտների արտագաղթի ինտենսիվության, մակրոտնտեսական և ժողովրդագրական հիմնական ցուցանիշների հետ դրանց փոխառնչությունների գնահատումն ու կանխատեսումը ... 57

Գլուխ 3. ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԶՄԱՄԱԿԱՐԴԱԿ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ..... 65

3.1. Երիտասարդների միգրացիայի ընտրանքային հետազոտության արդյունքների վերլուծություն 65

3.2. Երիտասարդների միգրացիայի համայնքային հետազոտության արդյունքների վերլուծություն 85

3.3. Երիտասարդների արտագաղթի կանխարգելման միջոցառումների պարզաբանման փորձագիտական հարցումների արդյունքները 96

Եզրակացություն..... 106

Օգտագործված գրականություն 122

Հավելված 129

Համառոտագրեր..... 134

Ազգային աշխատուժի օգտագործման լավագույն միջոցը եղել և մնում է երկրի ներսում աշխատատեղերի ստեղծումը, այնուհանդերձ, մի շարք երկրներ արտերկրում զբաղվածության ապահովումը համարում են ազգային զարգացման ռազմավարության մի մասը: Զարգացող, ինչպես նաև անցումային տնտեսություն ունեցող մեծաթիվ երկրներ ընդունում են գործողությունների ծրագրեր, մշակում են օրենսդրական ակտեր և ստեղծում ինստիտուցիոնալ կառույցներ, որոնց նպատակը արտերկրում իրենց քաղաքացիներին աշխատանքի տեղավորման աջակցությունն է, միգրանտների դրամական փոխանցումների խթանումը և, միևնույն ժամանակ, վերջիններիս անվտանգության ապահովումը:

Միգրացիան ազդում է ինչպես բնակչության թվի, այնպես էլ տարիքային, մասնագիտական և սոցիալական կառուցվածքի վրա, ինչը, ի վերջո, արտացոլվում է աշխատաշուկայում և տնտեսական գործունեության մեջ: Բնակչության միգրացիայի բազմաբնույթ հետևանքները դրսևորվում են ինչպես հենց աշխատուժը կրողների, այնպես էլ աշխատուժ արտահանող և ներմուծող երկրների սոցիալ-տնտեսական միջավայրում: Այդ հետևանքները միանշանակորեն չեն գնահատվում: Դրանք և՛ դրական են, և՛ բացասական, ի հայտ են գալիս դոնոր և ռեցիպիենտ երկրների սոցիալական, տնտեսական, ժողովրդագրական, մշակութային զարգացման համատեքստում:

Ընդհանուր առմամբ, ռազմական կամ քաղաքական դրդապատճառներով պայմանավորված, կրթության, բնակչություն հաստատելու, աշխատանք փնտրելու և այլ նպատակով բնակչության ցանկացած տարածքային տեղաշարժերն ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս գիտական գրականության մեջ գնահատվում են որպես բնակչության միգրացիա: Ըստ ՄԱԿ-ի «Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին» միջազգային կոնվենցիայի դրույթների (ընդունվել է 1990 թվականի դեկտեմբերի 18-ի 45/158 բանաձևով)՝ աշխատանքային միգրանտն այն անձն է, ով զբաղվել, զբաղվում կամ զբաղվելու է վճարովի աշխատանքային գործունեությամբ պետությունում, որի քաղաքացին չի հանդիսանում:

Երիտասարդ տարիքի բնակչության միգրացիան ներկայում աշխարհի ամենանշանակալից միգրացիոն հոսքերից մեկն է: 20-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ աշխարհի երկրների մեծ մասում գրանցվում է միգրացիոն գործընթացների ակտիվացում: Դրանցում տեղի ունեցող զգալի որակական փոփոխություններով, որոնք ուղեկցվում են հմուտ և բարձր որակավորում ունեցող մասնագետների, գիտաշխատողների, ինչպես նաև ուսանողների մեծածավալ արտագաղթով, ավելի ցայտուն է դրսևորվում միգրացիոն հոսքերի երիտասարդացման միտումը: Այսպես՝ 2020 թվականին 15–34 տարեկան

միգրանտների թիվը հասնում էր մոտ 90 միլիոնի, որոնց 36%-ը 15–24 տարեկաններն են, 64%-ը՝ 25–34 տարեկանները: 1990 թվականին նույն տարիքային խմբի միգրանտների թիվը հասնում էր 52 միլիոնի, որոնց 42%-ը 15–24 տարեկաններն էին, իսկ 58%-ը՝ 25–34 տարեկանները¹:

Միգրացիոն շարժունակությունը դարձել է բնակչության՝ նոր սոցիալ-տնտեսական բարեփոխումների փուլին հարմարվելու պաշտպանական մեխանիզմ: Ավելին, միգրացիոն գործընթացներում տեղի են ունեցել որակական փոփոխություններ, որոնք լրացվել են նոր գծերով: Այսպես՝ եթե նախկինում օտարերկրյա աշխատուժի ձգողության կենտրոններ են համարվել առավելապես զարգացած երկրները, ապա ներկայում զարգացող երկրները ևս հանդես են գալիս որպես ռեցիպիենտ երկրներ: Այդ առումով Հայաստանը ևս բացառություն չէ, որտեղ տևական ժամանակ, անկախացման տարիներից ի վեր, ձևավորված քաղաքական, սոցիալ-տնտեսական պայմանները, տարածաշրջանային զարգացման անհամամասնությունները, աշխատավարձի ցածր մակարդակը եղել և շարունակում են մնալ բնակչության, մասնավորապես՝ երիտասարդների արտագաղթի հիմնական շարժառիթները:

Չնայած միգրացիան տեղի է ունենում երիտասարդների գործազրկության բարձր մակարդակի և հայրենիքում արժանապատիվ աշխատանք գտնելու հնարավորության բացակայության համատեքստում, այնուհանդերձ, կարևոր է արձանագրել նաև, որ երիտասարդությունը տարիքային այն խումբն է, որն ավելի է հակված սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում փոփոխություններին աջակցելուն, ունի նորարարությունների, նախաձեռնողականության մեծ ձգտում: Այդ տեսանկյունից՝ երիտասարդների արտագաղթի բոլոր հետևանքներն ավելի ակնառու են ՀՀ մարզերում: Մարզերի ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարները, սոցիալական կայունության ամրապնդումը ուղղակիորեն պայմանավորված են երիտասարդ տարիքի բնակչության առկայությամբ: Սահմանամերձ բնակավայրերում նրանց արտագաղթը, ի թիվս այլ սպառնալիքների, ծնում է ազգային անվտանգության լուրջ սպառնալիք ևս:

Հետազոտության նպատակը ՀՀ աշխատաշուկայում երիտասարդության զբաղվածությունը բնութագրող որակական և քանակական ցուցանիշների, նրանց միգրացիայի սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների ուսումնասիրության և դաշտային հետազոտությունների հիման վրա ոչ միայն երիտասարդ միգրանտների արտագաղթի պատճառների ու հետևանքների բացահայտումն է, այլև միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության հիման վրա միջոցառումների համալիրի մշակումը, որոնց կիրառումը թույլ կտա նվազագույնի հասցնել երիտասարդ աշխատուժի միգրացիայի հավանականությունը:

¹ Sr'u Hall S., Youth, Migration and Development: A New Lens for Critical Times, KNOMAD PAPER 41, 2022, էջ 10, <https://www.knomad.org/publication/youth-migration-and-development-a-new-lens-critical-times>

Հետազոտության խնդիրներն են.

1. Երիտասարդների միգրացիայի դրդապատճառների տեսագործական հետազոտությունը, դոնոր երկրների տնտեսությունների վրա երիտասարդների միգրացիայի ազդեցության և կանխարգելման, ինչպես նաև վերադարձի պետական քաղաքականությունների համաշխարհային փորձի ուսումնասիրությունը:
2. ՀՀ-ում երիտասարդների արտագաղթի միտումների, սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների և աշխարհագրական հիմնական ուղղությունների գնահատումը:
3. ՀՀ-ում երիտասարդների միգրացիայի և ժողովրդագրական իրավիճակի տարածքային անհամաչափությունների և միտումների, երիտասարդ միգրանտների արտագաղթի ինտենսիվության, մակրոտնտեսական և ժողովրդագրական հիմնական ցուցանիշների հետ դրանց փոխառնչությունների գնահատումն ու կանխատեսումը:
4. Ընտրանքային հետազոտությունների հիման վրա ՀՀ մարզերի և ըստ Երևան քաղաքի երիտասարդ աշխատուժի արտագաղթի սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշների ուսումնասիրությունը և վերլուծությունը:
5. Մարզային համայնքների ղեկավարների հետ հարցազրույցների միջոցով երիտասարդների շրջանում միգրացիայի դրդապատճառների, նրանց արտագաղթի ուղղությունների, ժողովրդագրական իրավիճակի վրա միգրացիայի ազդեցության և հետևանքների պարզաբանումը:
6. Փորձագիտական հարցումների հիման վրա երիտասարդ տարիքի աշխատանքային միգրացիայի կանխարգելման հնարավոր ուղիների, միջոցառումների հստակեցման միջոցով վերջիններիս արտագաղթի հետևանքների բացահայտումը և կանխարգելման համալիր միջոցառումների մշակումը:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտությունում օգտագործվել են համակարգային, տրամաբանական և պատմական, արտածության և մակածության մեթոդները՝ երիտասարդների միջազգային միգրացիայի բնույթն ու միտումներն ուսումնասիրելու նպատակով: Տեսական ընդհանրացումներն ու վերացարկումները հնարավորություն են տվել բացահայտելու երիտասարդության միգրացիայի սոցիալական և տնտեսական հետևանքները:

Ըստ ՀՀ մարզերի երիտասարդ տարիքի աշխատուժի արտագաղթին առնչվող սոցիալ-ժողովրդագրական ցուցանիշների շարժընթացի ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են կաբինետային հետազոտության մեթոդները՝ վիճակագրության ու էկոնոմետրիկայի ընդհանուր տեսության մեթոդների կիրառմամբ: Բոլոր քանակական ու որակական վերլուծությունների արդյունքները հենվում են հավաստիության, ամբողջականության, համադրելիության ու հասցեականության մեթոդաբանական սկզբունքների վրա:

Կիրառվել են վիճակագրական վերլուծության հետևյալ գործիքները. Դինամիկայի շարքի ցուցանիշներ, դինամիկայի շարքի բաշխման ցուցանիշներ, կառուցվածքային վերլուծություն, կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծություն, տեխնիկական վերլուծություն, նորմավորում, դասակարգում, վարկանշավորում: Երիտասարդների էմիգրացիայի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածությունը գնահատվել է ռեգրեսիոն մոդելների հիման վրա, կանխատեսումներ իրականացնելու նպատակով կիրառվել է ARIMA դասի մոդելը:

Երիտասարդների միգրացիոն տրամադրությունների գնահատման համար հիմք են հանդիսացել հարցման արդյունքները: Որակական հետազոտություններն իրականացվել են փաստացի միգրացվածների, գյուղական համայնքների ղեկավարների հետ հարցազրույցների, ինչպես նաև փորձագիտական հարցումների հիման վրա: Փաստացի միգրանտների մասին տեղեկատվությունը ստացվել է ըստ Երևան քաղաքի և մարզերի՝ տնային տնտեսություններում իրականացվող ընտրանքային հարցումների հիման վրա: Փորձագիտական հարցազրույցը խորքային հարցազրույցի տեսակ է, որի ղեկավարում հարցվողները հետազոտվող ոլորտի բարձր որակավորում ունեցող մասնագետներ են: Դա նախապես պլանավորված հարցազրույց է փորձագետի հետ դեմ առ դեմ՝ օգտագործելով մեթոդներ, որոնք հարցվողներին ուղղորդում են դեպի խոր և մանրակրկիտ քննարկում՝ մի շարք հետաքրքրող թեմաների շուրջ: Խորքային հարցազրույցը ենթադրում է հետազոտական հարցերի մանրամասն պատասխանների ստացում:

Հետազոտական խմբի կողմից մշակվել են համապատասխան հարցաթերթեր:

Տեղեկատվական նյութերի աղբյուր են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի, միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, Համաշխարհային բանկ, Եվրոստատ, ԱՄԿ) տվյալները, ազգային և արտասահմանյան գիտնականների աշխատությունները և հոդվածները:

Հետազոտության արդյունքները

Հետազոտության խնդիրների իրացմամբ՝ միգրացիայի ոլորտում ձևավորված իրավիճակի, միգրացիայի և սոցիալ-տնտեսական մի շարք ցուցանիշների փոխառնչությունների քանակական և որակական գնահատումների, փորձագիտական և սոցիոլոգիական հետազոտությունների, հարցումների, երիտասարդ միգրանտների շրջանակներում միգրացիայի կանխարգելման համաշխարհային փորձի ուսումնասիրության հիման վրա ներկայացվել է երեք հոդված և ամփոփ զեկույց, որոնք, բովանդակային առումով, ներառում են ՀՀ մարզերի և Երևան քաղաքի երիտասարդ տարիքի միգրանտների տեղաշարժի շարժառիթների, միտումների վերլուծությունն և համալիր գնահատումը, ինչպես նաև ներկայացվել է նշված տարիքային խմբի միգրացիայի կանխարգելմանն ուղղված առաջարկությունների փաթեթ՝ կազմված այդ ոլորտում միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության հիման վրա:

**ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ
ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**1.1 Երիտասարդների միգրացիայի
դրդապատճառների տեսագործնական
հետազոտություն**

Երիտասարդների միգրացիա տեղի ունի աշխարհի գրեթե բոլոր զարգացող երկրներում: Նշվածը հաստատվում է բազմաթիվ գիտական հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքում, համաձայն որոնց, երիտասարդների միգրացիան հիմնականում պայմանավորված է ապագայի ավելի նպաստավոր պայմաններ ստեղծելու ձգտումով²:

Միգրացիայի դրդապատճառները բազմաթիվ են և բազմազան, որոնց դրսևորման առանձնահատկություններով է նաև պայմանավորված միգրացիոն հոսքերի ծավալը, ձևը, ուղղությունը և ժամկետը: Ըստ վերլուծության մակարդակի՝ դրանք կարելի է բաժանել 3 խմբի³.

1. **Մակրոտնտեսական դրդապատճառներ**, որոնց շարժիչ ուժերը բաժանվում են հետևյալ ենթախմբերի.

- *ժողովրդագրական* (բնակչության դինամիկան, ընտանիքի կազմը և կառուցվածքը),
- *տնտեսական* (տնտեսական և գործարար միջավայրի պայմանները, աշխատաշուկան և զբաղվածությունը, քաղաքների և գյուղերի զարգացման մակարդակը և կենսամակարդակը, աղքատությունը և անհավասարությունը),
- *միջավայրային* (կլիմայի փոփոխությունը և շրջակա միջավայրի պայմանները, բնական աղետները և շրջակա միջավայրի շոկերը),
- *մարդկային զարգացման* (կրթություն և վերապատրաստման հնարավորություններ, առողջապահական ծառայություններ և իրավիճակ),

² St’u Ginsburg C., Philippe Bocquier Ph., Afolabi S., Otiende M., Odhiambo F., Augusto O., Béguy D., Derra K., Wak G., Zabre P., Soura A., White M. J. & Collinson M.A., Determinants of internal migration in Africa: Does human capital necessarily end up in cities? Comparative analysis of health and demographic surveillance systems. Princeton University Paper, 2014, էջ 6-15, <https://paa2014.populationassociation.org/papers/141818>: Awumbila M., Teye J. K., Litchfield J., Boakye-Yiadom L., Deshingkar P. & Quartey P., Are migrant households better off than non-migrant households? Evidence from Ghana. Migration Out of Poverty Working Paper No. 28., 2015, էջ 16-20, <https://paa2014.populationassociation.org/abstracts/141818>

³ St’u Czaika M. and Reinprecht C., Drivers of migration: A synthesis of knowledge, IMI Working Paper Series 2020, No. 163, էջ 6, <https://emm.iom.int/handbooks/global-context-international-migration/drivers-international-migration#:~:text=There%20are%20five%20primary%20macrolevel.from%20one%20location%20to%20another>

- *անվտանգության* (բախումներ, պատերազմներ և բռնություն, քաղաքական իրավիճակ, բռնաճնշումներ և քաղաքական ռեժիմի փոփոխություններ),
- *վերազգային* (գլոբալացում և գաղութայնացում/հետգաղութայնացում, վերազգային կապեր, միջազգային կապեր և գեոքաղաքական կերպափոխումներ),
- *քաղաքական-ինստիտուցիոնալ* (հասարակական ենթակառուցվածքները, ծառայությունները և պայմանները, միգրացիայի կառավարումը և ենթակառուցվածքները, քաղաքացիական և քաղաքական իրավունքները):

2. **Մեզոտնտեսական դրդապատճառներ**, որոնց շարժիչ ուժերը սոցիալ-մշակութային են (միգրանտների համայնքներ և ցանցեր, մշակութային նորմեր և կապեր, սեռային հարաբերություններ):

3. **Միկրոտնտեսական դրդապատճառներ**, որոնց շարժիչ ուժերը անձնական են (անձնական ռեսուրսներ և միգրացիայի փորձ, միգրանտի ձգտումները և աշխարհայացքը, սեռը, տարիքը, հաշմանդամությունը և այլն):

Միգրացիայի շարժառիթների որոշ մասը բնութագրական է բոլոր տարիքի միգրանտների համար, ինչպես, օրինակ, տնտեսական պատճառները, շրջակա միջավայրի կազմալուծումը, ինստիտուտների և կառավարության գործունեությունից դժգոհությունները, կոռուպցիան, կառավարության նկատմամբ վստահության պակասը կամ բացակայությունը, հարկադիր տեղահանությունները, բռնությունն ու անպաշտպան լինելը: Այնուամենայնիվ, կան շարժառիթներ, որոնք բնորոշ են միայն երիտասարդներին: Դրանք են տնտեսական դրդապատճառները, վարկերը և պարտքային պարտավորությունները, մարդկային զարգացումը, ամուսնությունը և անձնական կապերը, մշակույթը և տարիքային հասունացումը, պատերազմները և հակամարտությունները⁴:

Տնտեսական դրդապատճառներն ամենավառ ձևով արտահայտված են այնպիսի երկրներում, որտեղ երիտասարդ բնակչության տեսակարար կշիռը մեծ է և աճում է ավելի արագ տեմպերով, քան առկա աշխատատեղերն են: 2018–2019 թթ. հետազոտությունները⁵ ցույց են տալիս, որ Արևմտյան Բալկաններում երիտասարդների արտագաղթի գլխավոր դրդապատճառներն

⁴ Տե՛ս **Belmonte M., Conte A., Ghio, D., Kalantaryan S., McMahon S.**, Youth and migration: an overview, Luxembourg: Publications Office of the European Union, 2020, էջ 23-24, <https://publications.jrc.ec.europa.eu/repository/handle/JRC122402>

⁵ Սույն հետազոտության շրջանակներում ներկայացված է Բալթյան, Կենտրոնական և Հարավարևելյան Եվրոպայի (Արևմտյան Բալկանյան), Կենտրոնական Ասիայի երկրների վերաբերյալ վիճակագրությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տասնամյակում, տնտեսական դրդապատճառներով պայմանավորված, աճել են այս երկրներից արտագաղթի տեմպերը. մեծամասնություն են կազմում 20–39 տարեկան համեմատաբար բարձր կրթական մակարդակ ունեցող երիտասարդները: Ընդ որում, արտագաղթը երկարաժամկետ է, կայուն և քիչ վերադարձով:

են կենսամակարդակի բարելավումը (45%), զբաղվածության ավելի լավ հնարավորությունները (17%) և ավելի բարձր աշխատավարձերը (12%)⁶: Կենտրոնական Ասիայի երկրներից Ուզբեկստանում նույնպես գործազրկության բարձր մակարդակը, ցածր աշխատավարձերն ու սոցիալական երաշխիքների բացակայությունն է երիտասարդների արտագաղթի առաջին դրդապատճառը (38.2%): Ղրղզստանում, Ղազախստանում և Տաջիկստանում նույն դրդապատճառներով են բացատրում իրենց արտագաղթը հետազոտվող միգրանտների համապատասխանաբար 54,8, 23,8 և 18,3%-ը⁷: Սույն խմբի շարժառիթների շարքում գործարար միջավայրի ազդեցությունը երիտասարդների վրա այնքան էլ մեծ չէ. Բալկանյան երկրներում դրանք որպես խոչընդոտ ներկայացրել է հետազոտվող միգրանտների ընդամենը 2%-ը: Բալթյան երկրներում նույնպես արժանավայել աշխատանքի հնարավորությունների պակասն է համարվում երիտասարդների արտագաղթի հիմնական դրդապատճառ: Չնայած 2009–2019 թթ. այս երկրներում նվազագույն աշխատավարձը գրեթե կրկնապատկվել է, այնուամենայնիվ, հետ է մնում ԵՄ անդամ զարգացած երկրների աշխատավարձից, որն էլ հանգեցնում է դեպի այդ երկրներ արտագաղթի աճի: Բալթյան երկրներում հարցումները ցույց են տալիս, որ արտագաղթի հիմնական շարժիչ ուժը իրական աշխատավարձի կրճատումն է՝ ինֆլյացիայի բարձր տեմպերի պայմաններում: Երկրորդ ամենակարևոր դրդապատճառը առողջապահական ծառայությունների և սոցիալական պաշտպանվածության ոչ պատշաճ մակարդակն է⁸:

Երկրում գործազրկության և/կամ թերզբաղվածության բարձր մակարդակի դեպքում երիտասարդների համար կրթության հասանելիության մակարդակի աճը հանգեցնում է որակավորված երիտասարդների թվի աճին, որոնք պատրաստ են լքել երկիրը՝ ավելի բարձր վարձատրության, ավելի մեծ անձնական ազատություն ձեռք բերելու և իրենց ընտանիքի սոցիալական խնդիրները լուծելու համար: Օրինակ՝ Ալբանիայում և Սլովենիայում, ի տարբերություն մյուսների, բնակչության ամենաբարձր քվարտիլային խմբին պատկանող երիտասարդներն ունեն արտագաղթելու ավելի մեծ հակվածություն, մինչդեռ Բուլղարիայում արտագաղթում են հիմնականում ավելի ցածր կրթական մակարդակ ունեցող և ավելի աղքատ տնային տնտեսությունների երիտասարդները:

⁶ Sl'u Esch V., Palm V., Brey H., Hagemann C., Emigration From the Western Balkans, Aspen Institute Deutschland, 2020, էջ 24, <https://www.aspeninstitute.de/wp-content/uploads/2020-Emigration-from-the-Western-Balkans.pdf>

⁷ Sl'u UN, International Organization for Migration Subregional, External Youth Migration in the Countries of Central Asia: Risk Analysis and Minimization of Negative Consequences, 2019, էջ 38-39, <https://publications.iom.int/books/external-youth-migration-countries-central-asia-risk-analysis-and-minimization-negative>

⁸ Sl'u Birka I., Can Return Migration Revitalize the Baltics? Estonia, Latvia, and Lithuania Engage Their Diasporas, with Mixed Results, 2019, <https://www.migrationpolicy.org/article/can-return-migration-revitalize-baltics-estonia-latvia-and-lithuania-engage-their-diasporas#:~:text=Another%20major%20concern%20driving%20emigration,to%20the%202018%20Eurobarometer%20survey>

«Պարտքային արտագաղթը» նոր երևույթ չէ և բնութագրական է թե՛ երիտասարդ կանանց, թե՛ տղամարդկանց համար: Այս երևույթը առավել արդիական է դարձել մասնավորապես մեր օրերում, երբ վարկային կազմակերպությունները հեշտացրել են միկրովարկերի տրամադրումը և մեծացրել երիտասարդների պարտքային բեռը: Հատկապես գյուղական շրջանի երիտասարդների համար վարկերը և մեծ պարտքային պարտավորությունները վճարելը հիմնականում հնարավոր է դառնում միգրացիայի շնորհիվ:

Կրթությունը երիտասարդների միգրացիայի վրա երկակի ազդեցություն է ունենում. մի կողմից՝ երկրում կրթության բարձր մակարդակն է միգրացիայի դրդապատճառ հանդիսանում, մյուս կողմից՝ երիտասարդներն արտագաղթում են ավելի որակյալ կրթություն ստանալու ակնկալիքով: Տարբեր հետազոտություններ փաստում են, որ միգրացիայի հնարավորություններն ավելի մեծ են բարձր կրթական մակարդակ ունեցող երիտասարդների շրջանում: Ընդ որում, բարձրագույն կրթություն ունեցող երիտասարդների շարժունությունն ավելի բարձր է, քան հասարակության մյուս խմբերինը: Ոչ լրիվ միջնակարգ կրթություն ունեցող միգրանտները նույնպես գերակշռում են շարժուն բնակչության կազմում: Ավելին, հետմիջնակարգ կրթությունը խթանում է երիտասարդների միգրացիան զարգացող երկրներում, ընդ որում՝ ամենաբարձր կրթական մակարդակ ունեցողներն ավելի արդյունավետ են պլանավորում իրենց արտագաղթը⁹:

Ժամանակակից աշխատաշուկայի պահանջները բավարարելու և մրցունակ լինելու պայմանն երիտասարդների համար անհրաժեշտություն է դարձնում որակյալ կրթություն ստանալը, որը երբեմն հնարավոր չէ իրականացնել հայրենիքում, ինչն էլ հանգեցնում է երիտասարդների արտագաղթի: Դրան նպաստում են նաև ուսանողների փոխանակման ծրագրերը, որոնք յուրօրինակ հնարավորությունների պատուհան են երիտասարդների համար: Վերջին 20 տարիների ընթացքում ուսանողների միջազգային շարժունության աննախադեպ աճ է արձանագրվել. 2000–2018 թթ. միջազգային ուսանողների թիվը 2 մլն-ից դարձել է 5.5 մլն¹⁰: ՀՀ-ում ուսանողների միջազգային շարժունությունն աճել է 49,3%-ով՝ 2022 թ. կազմելով 6735 մարդ¹¹: Օրինակ՝ Erasmus+ շարժունության ծրագրերի շնորհիվ հետսոցիալիստական երկրները դարձել են դեպի ԵՄ երկրներ երիտասարդների միգրացիայի հիմնական դռնը պետություններ: Ի դեպ, այն երիտասարդները, ովքեր կրթություն ստանալու նպատակով գտնվել են արտերկրում, ունեն արտագաղթելու բարձր հակվածություն: Իհարկե, նույնիսկ արտագաղթելու դեպքում պետությունը կարող է օգուտներ քաղել «ուղեղների շրջապտույտի» միջոցով: Անշուշտ, անհրաժեշտ է չնոռանալ, որ արտերկրում կրթություն ստանալու գործ-

⁹ St' u Hall S., նշվ. աշխ., էջ 23-24:

¹⁰ St' u նույն տեղը, էջ 10:

¹¹ St' u UN, Sustainable Development Goals, <http://data.uis.unesco.org/index.aspx?queryid=3806>

ընթացն առանց խոչընդոտների չի ընթանում: Դրանցից են, օրինակ՝ ֆինանսական խոչընդոտները, մշակութային և լեզվական տարբերությունները, սոցիալական ինտեգրման խոչընդոտները, որակավորումների փոխադարձ ճանաչելիության խնդիրները և այլն:

Ջարգացող երկրներից բարձր որակավորում ունեցող երիտասարդները ձգտում են արտագաղթել զարգացած երկրներ, որտեղ իրենց կրթական մակարդակով կարող են ապահովել ավելի բարձր եկամուտներ և կենսական պայմաններ¹²: Նախքան 2022 թվականի ռազմական գործողությունների մեկնարկը՝ Ուկրաինայում, այսպես կոչված, «ուղեղների արտահոսքի» պատճառների վերաբերյալ հետազոտությունից պարզվել է, որ «երկրում նկատվում է ինտելեկտուալ միգրացիայի աճող միտում»՝ երիտասարդ մասնագետների, ուսանողների և գիտնականների թվի աճով պայմանավորված, որոնք հնարավորություններ են փնտրում արտասահմանում¹³: Այդ միտումները հիմնավորվում են օտար երկրներում մասնագիտական առաջխաղացման, կրթության և կյանքի ավելի բարձր որակ ապահովելու իրական և էական ձգտումներով: Հեղինակները նաև կանխատեսել են, որ գիտակրթական զարգացման պայմաններով և միտումներով պայմանավորված՝ Ուկրաինայից գիտական և մասնագիտական կադրերի արտահոսքի ռիսկը մեծանում է:

Երիտասարդների արտագաղթի ամենաազդեցիկ պատճառներից են կլիենտելիզմն ու կոռուպցիան: Օրինակ՝ Արևմտյան Բալկանյան երկրներում, երիտասարդների մեծամասնության կարծիքով, իրենց երկրներում ընդունված են ոչ ֆորմալ գործողությունները: Ի տարբերություն Եվրամիության անդամ Հարավարևելյան Եվրոպայի երկրների երիտասարդների՝ նրանք պնդում են, որ քաղաքական կուսակցություններին անդամակցությունը զբաղվածություն գտնելու գործիք է: Ոչ ֆորմալ ինստիտուտների նկատմամբ հանդուրժողականությունը երիտասարդների շրջանում և որևէ խնդիր լուծելու համար կոռուպցիայի դիմելը դարձել է նորմալ երևույթ: Մինևույն ժամանակ, տարածաշրջանում համար մեկ վախ հանդիսացող կոռուպցիային հաջորդում է էկզիստենցիալ վախը¹⁴: Հարավարևելյան Եվրոպայի երկրներում այս դրդապատճառներով պայմանավորված արտագաղթը գերակշռել է մինչև 2000-ականները, իսկ արդի պայմաններում դրանք թույլ ազդեցության գործոն են: Կենտրոնական Ասիայի երկրներում իրականացված հարցումների համաձայն՝ Ղազախստանից, Ղրղզստանից, Տաջիկստանից և Ուզբեկստանից երիտասարդ արտագաղթողների համապատասխանաբար՝ 51,3%,

¹² St' u European Communities, Push and pull factors of international migration: A comparative report. Theme 1 – General statistics, Luxembourg, Eurostat, 2000, էջ 64-70, <https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/90913700-dbbb-40b8-8f85-bec0a6e29e83>

¹³ Lubov Semiv L., Hvozdoevych Yu., The intellectual migration of the youth in Ukraine: the backgrounds for «brain circulation». Journal of International Studies, Vol. 5, No 2, 2012, էջ 74, <https://www.jois.eu/files/SemivV5N2.pdf>

¹⁴ St' u Esch V., Palm V., Brey H., Hagemann C., նշվ. աշխ., էջ 44:

57,4%, 18,3% և 36,8%-ի մեկնման պատճառը կոռուպցիան է, բոլոր մակարդակներում առկա բյուրոկրատիան և անարդյունավետ կառավարումը¹⁵:

Պատերազմների և հակամարտությունների ժամանակ արտագաղթում են հիմնականում դեռահասներն ու երիտասարդները, ովքեր ենթակա են պարտադիր զորակոչի: Վերջիններս են հիմնականում դառնում նաև տարբեր բնույթի բռնությունների զոհ: Օրինակ՝ Էրիթրեայում երիտասարդների համար արտագաղթը ընկալվել է որպես անժամկետ զորակոչից և ձգձգվող ճգնաժամից փրկվելու միակ միջոցը: Սիրիայից երիտասարդների արտագաղթի պատճառ են հանդիսացել ընդհատված կրթությունն ու ռազմական գործողություններում ներգրավվելը¹⁶:

Ամուսնությունը և երեխաներ ունենալու որոշումն ազդում են երիտասարդների միգրացիայի վրա: Երեխա պլանավորելու կամ ունենալու դեպքում նրա համար ավելի լավ կենսապայմաններ ապահովելու նպատակով են հաճախ երիտասարդներն արտագաղթում: Երիտասարդ կանանց շրջանում արտերկրում ամուսնանալու պատրաստակամությունը նույնպես միգրացիայի շարժառիթներից մեկն է:

Երիտասարդներին դեպի հասունություն ազատ անցման անհրաժեշտությունն է երբեմն դրդում արտագաղթի: Դա որոշակիորեն պայմանավորված է ավելի պահպանողական երկրների գյուղական միջավայրից ավելի զարգացած և արդիական քաղաքային միջավայր տեղափոխվելու ցանկությամբ: Օրինակ՝ Էստոնիայում կատարված հետազոտության համաձայն, գյուղաբնակ երիտասարդներն արտագաղթելը ներկայացնում են որպես ինքնահաստատման և ինքնարտահայտման ձև: Մեքսիկայում էմիգրացիան երիտասարդ տղաների համար սոցիալական կարգավիճակը բարձրացնելու միջոց է, իսկ չարտագաղթողների նկատմամբ հասակակիցներն ունեն բացասական վերաբերմունք¹⁷: Չինաստանում երիտասարդ կանանց շրջանում էմիգրացիան դիտվում է որպես «ավելի ժամանակակից, անկախ և գեղեցիկ դառնալու» հնարավորություն¹⁸: Երկրում ինքնարտահայտման և մասնագիտական ինքնաիրացման հնարավորությունների բացակայությունը հաճախ խոչընդոտում է երիտասարդների անցումը դեպի հասուն կյանք՝ սահմանափակելով նրանց տնտեսական և անձնական ազատությունը և մեծացնելով արտագաղթի հակվածությունը: Օրինակ՝ Ղազախստանում երիտասարդների 31,3%-ը, Ղրղզստանում՝ 27,4%-ը, Ուզբեկստանում՝ 21,1-ը և Տաջիկստանում՝ 7,6%-ը իրենց արտագաղթը պայմանավորում են ինքնաիրացման և

¹⁵ UN, International Organization for Migration Subregional, External Youth Migration in the Countries of Central Asia: Risk Analysis and Minimization of Negative Consequences, 2019, էջ 38-39, <https://publications.iom.int/books/external-youth-migration-countries-central-asia-risk-analysis-and-minimization-negative>.

¹⁶ Տե՛ս Belmonte M., Conte A., Ghio D., Kalantaryan S., McMahon S., նշվ. աշխ., էջ 24:

¹⁷ Տե՛ս նույն տեղը:

¹⁸ Տե՛ս Hall S., նշվ. աշխ., էջ 28:

մասնագիտական առաջխաղացման հնարավորությունների պակասով¹⁹ : Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրներում նույնպես երիտասարդների արտագաղթը կապված է եղել մասնագիտությամբ աշխատելու հնարավորությունների պակասով, որը խոչընդոտում է տնտեսական անկախության ձեռքբերումը և դեպի հասունություն անցումը²⁰ :

Միգրացիայի առաջացման դրդապատճառների վերաբերյալ ամենահայտնի տեսություններից մեկը «Աշխատուժի միգրացիայի նոր տնտեսագիտություն» մոդելն է, որի հեղինակներն են տնտեսագետներ Օ. Սթարքը²¹ և Է. Թեյլորը²² : Ըստ այդ տեսության՝ միգրացիայի վրա ազդող գործոնները բաժանվում են երեք խմբի՝ մարդու անձնական գործոններ, ընտանիքի հետ կապված գործոններ և շրջապատող սոցիալ-տնտեսական պայմաններին առնչվող գործոններ :

Մարդու անձնական գործոններից է մարդու տարիքը : Տարիքի և միգրացիոն հակումների միջև փոխազդեցությունն ուսումնասիրվել և ապացուցվել է ոլորտում հայտնի բազմաթիվ տնտեսագետների կողմից^{23,24,25} : Ըստ վերջիններիս վերլուծությունների՝ երիտասարդ տարիքում մարդիկ առավել հակված են արտագաղթելու : Դա հիմնականում պայմանավորված է քնակչության շրջանում կարծրացած բարքերով և ավանդույթներով, որակյալ կրթություն ստանալու հնարավորության բացակայությամբ և ենթակառուցվածքների թերի զարգացմամբ : Մարդու տարիքի և նրա արտագաղթելու հակման միջև փոխազդեցության առանձնահատկությունն այն է, որ, տարիքի ավելացմանը զուգահեռ, արտագաղթելու հակումը որոշակի տարիքում աճում է, հասնում առավելագույնի, որից հետո, որոշակի տարիքից սկսած, այդ հակումը սկսում է նվազել : Իրականացված հետազոտությունների հիման վրա նման եզրակացության են հանգել տնտեսագետներ Աքքահը և Մեդվեդևը²⁶ : Մասնավորապես՝ նրանք պարզել են, որ անհատի միգրացիոն

¹⁹ Տե՛ս UN, International Organization for Migration Subregional, External Youth Migration in the Countries of Central Asia: Risk Analysis and Minimization of Negative Consequences, 2019, էջ 38-39, <https://publications.iom.int/books/external-youth-migration-countries-central-asia-risk-analysis-and-minimization-negative>.

²⁰ Տե՛ս Dibeh G., Fakh A., Marrouch W., Labour Market and Institutional Drivers of Youth Irregular Migration: Evidence from the MENA Region. IZA Institute of Labour Economics Discussion Paper Series, 2018, էջ 6, <https://www.iza.org/publications/dp/11903/labor-market-and-institutional-drivers-of-youth-irregular-migration-evidence-from-the-mena-region>

²¹ Տե՛ս Stark O., The migration of labor. Cambridge, Basil Blackwell, 1991, <https://www.jstor.org/stable/3643909>

²² Տե՛ս Taylor Edward J., The new economics of labour migration and the role of remittances in the migration process. International Migration, 1999, 37(1), էջ 66-67, [Doi: 10.1111/1468-2435.00066](https://doi.org/10.1111/1468-2435.00066)

²³ Տե՛ս Bell M. & Charles-Edwards E., Measuring internal migration around the globe: A comparative analysis. Knomad Working Paper No. 3. Global Knowledge Partnership on Migration and Development. 2014, էջ 15-18, <https://www.knomad.org/publication/measuring-internal-migration-around-globe-comparative-analysis>

²⁴ Տե՛ս Bell M. & Muhidin S., Cross-national comparisons of internal migration. Human Development Research Paper. New York, UNDP, 2009/30, էջ 13-15, <https://www.un.org/en/development/desa/population/publications/pdf/technical/TP2013-1.pdf>

²⁵ Տե՛ս Ackah Ch. & Medvedev D., Internal migration in Ghana: Determinants and welfare impacts. Background paper for the 2010 World Bank Ghana Poverty Assessment. WB. 2010, էջ 7-8, [Doi: 10.1596/1813-9450-5273](https://doi.org/10.1596/1813-9450-5273)

²⁶ Տե՛ս նույն տեղը :

հակումը հասնում է իր գագաթնակետին 36 տարեկանում, իսկ դրանից հետո սկսում է նվազել²⁷:

Մարդու միգրացիոն հակումների վրա ազդող մեկ այլ անձնական գործոն է մարդու սեռը: Սեռի և միգրացիոն հակումների միջև փոխազդեցության վերաբերյալ տնտեսագետներն իրենց մոտեցումներում ներհակ են: Մի կողմից՝ որոշ տնտեսագետներ կարծում են, թե իգական սեռի ներկայացուցիչներն ավելի քիչ են հակված արտագաղթելու, որը պայմանավորված է կանանց վերարտադրողական ֆունկցիայով և ընտանիքներում երեխաների խնամքի հիմնական պատասխանատուն լինելու հանգամանքով²⁸: Մյուս կողմից՝ ավելի տարածված է դառնում հակառակ մոտեցումը, ըստ որի՝ հատկապես գյուղական բնակավայրում կանանց իրավունքների ոտնահարումը, կարծրատիպերն ու ոչ առաջադեմ բարքերը այդպիսի բնակավայրերից կանանց արտագաղթի պատճառ են դառնում²⁹:

Մարդու անհատական ձգտումները, նպատակներն ու պահանջմունքները նույնպես արտագաղթելու հակման վրա ազդող գործոն են համարվում: Մասնավորապես՝ Պորտերը և այլք եկել են այն եզրահանգման, որ մարդու անհատական ձգտումները և ապագայի վերաբերյալ պատկերացումներն ամենամեծ ազդեցությունն են ունենում մարդկանց արտագաղթելու որոշման վրա³⁰: Նման դրսևորումները հատկապես ակնառու են հեռավոր գյուղական բնակավայրերում, որտեղ մարդկանց անհատական ձգտումները և գյուղական միջավայրի ու անհատի կյանքի պայմանները կարող են անհամադրելի լինել:

Բացի անհատական գործոններից՝ մարդու միգրացիոն հակման և վերջնական որոշման վրա ազդում են նաև ընտանեկան գործոնները: Այդպիսի գործոններ են, օրինակ՝ ընտանիքի ղեկավարի սեռը, տարիքը և կրթությունը³¹: Ըստ տնտեսագետներ Ֆեռոնի և Ջիաներիի՝ եթե ընտանիքի ղեկավարը ավելի մեծ տարիքի է և ունի ցածր կրթական մակարդակ, ապա վերջինս ավելի քիչ է հակված ռիսկային գործոնների: Հետևաբար՝ նման դեպքում ընտանիքի ղեկավարը մեծ ներգործություն կունենա ընտանիքի մյուս անդամների վրա՝ փորձելով վերջիններին գերծ պահել ռիսկային

²⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 7:

²⁸ Տե՛ս Awumbila M., Teye J. K., Litchfield J., Boakye-Yiadom L., Deshingkar P. & Quartey P., նշվ. աշխ., էջ 24-27:

²⁹ Տե՛ս Zachariah K.C., Mathew E.T. & Irudaya R. S., Social, economic and demographic consequences of migration on Kerala. International Migration, 2001, 39(2), էջ 55-58, <https://ideas.repec.org/p/ind/cdswpp/303.html>

³⁰ Տե՛ս Porter G., Hampshire K., Mashiri M., Dube S. & Maponya G., Youthscape and escapes in rural Africa: Education, mobility and livelihood trajectories for young people in Eastern Cape, South Africa. Journal of International Development, Special Issues: Children and Young People in a Changing World, 2010, 22(8), էջ 1092-1093, [Doi: 10.1002/jid.1748](https://doi.org/10.1002/jid.1748)

³¹ Տե՛ս Ferrone L. & Giannelli G. C., Household migration and child educational attainment: The case of Uganda. IZA Discussion Paper No. 8927, 2015, էջ 14-17, <https://www.iza.org/publications/dp/8927/household-migration-and-child-educational-attainment-the-case-of-uganda>

գործողությունների դիմելուց, այդ թվում՝ բնակության վայրը փոխելուց և արտագաղթելուց³²:

Ընտանիքի ղեկավարի սեռը նույնպես մեծապես ազդում է ռիսկային որոշումներ կայացնելու վրա: Աքքահը և Մեդվեդևը եկել են այն եզրահանգման, որ կանայք ավելի հակված են ռիսկային գործողությունների, քան տղամարդիկ³³: Հետևաբար՝ եթե ընտանիքի ղեկավարը կին է, ապա այդ ընտանիքի անդամները ավելի են հակված ռիսկային որոշումների, կյանքի պայմանների փոփոխությունների, այդ թվում՝ արտագաղթելու³⁴: Ռումինիայում իրականացված հետազոտությունը, որի նպատակն էր բացահայտել այն գործոնները, որոնք ազդում են երիտասարդ ռումինացիների միգրացիոն մտադրությունների վրա, ցույց է տվել, որ ռումինացի երիտասարդների շրջանում արտագաղթելու մտադրությունը պայմանավորված է արտերկրում ավելի լավ կյանքի ձգտումով, ընտանիքի հոր կրթական մակարդակով և ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակով, այլ ոչ թե մակրոտնտեսական գործոններով³⁵:

Մարդու միգրացիոն հակման վրա ազդում են նաև ընտանիքի կազմը և կառուցվածքը: Եթե անհատն ապրում է մեծ ընտանիքում, որտեղ մեկ շնչի հաշվով ընտանեկան եկամուտներն ավելի ցածր են, ապա նա ավելի է հակված արտագաղթելու³⁶: Սա հատկապես վերաբերում է ընտանիքի երկրորդ կամ երրորդ արական սեռի զավակներին, որոնք պարտավորվում են մեկնել արտագնա աշխատանքի, որպեսզի կարողանան ապահովել ընտանիքի կարիքները³⁷:

Ընտանիքի անդամներից որևէ մեկի արտագաղթած լինելու հանգամանքը, իր հերթին, մեծացնում է միգրացիայի հավանականությունը: Դա պայմանավորված է նրանով, որ երբ ընտանիքի անդամներից մեկը գտնվում է արտերկրում, այդ ընտանիքի անդամներն ընդունող երկրի մասին ավելի տեղեկացված են լինում, որն էլ նվազեցնում է այդ երկիր տեղափոխվելու և

³² Տե՛ս նույն տեղը:

³³ Տե՛ս Ackah Ch. & Medvedev D., նշվ. աշխ., էջ 7-8, [Doi: 10.1596/1813-9450-5273](https://doi.org/10.1596/1813-9450-5273)

³⁴ Տե՛ս նույն տեղը:

³⁵ Տե՛ս Monica R. and Vasilescu M. D., Explaining the Migration Intentions of Romanian Youth: Are Teenagers Different? 2016, Romanian Statistical Review 64, no. 4, էջ 79-82, <https://www.revistadestatistica.ro/2016/12/explaining-the-migration-intentions-of-romanian-youth-are-teenagers-different/>

³⁶ Տե՛ս Thorat V.A., Dhekale J.S., Patil H.K. & Tilekar S.N., Determinants of rural-urban migration in Konkan Region of Maharashtra. Agricultural Economics Research Review, 24, 2011, էջ 505-507, <http://dx.doi.org/10.22004/ag.econ.119399>

³⁷ Տե՛ս Taylor Edvard J., Migration: New dimensions and characteristics, causes, consequences and implications for rural poverty. In K.G. Stamoulis (ed.) Food, agriculture and rural development: Current and emerging issues for economic analysis and policy research. FAO, 2001, էջ 177, <https://www.fao.org/3/x9808e/x9808e07.htm>

սեփական կենսագործունեությունը կազմակերպելու անորոշությունները և վերախնտեգրման հնարավոր ծախսերը³⁸:

Մարդու միգրացիոն հակումների վրա ազդող ընտանեկան գործոններից է ընտանիքի նյութական և ոչ նյութական կարողությունների ու եկամուտների չափը: Եթե ընտանիքը հարուստ է, ունի համապատասխան կարողություններ, հետևաբար՝ կայուն եկամուտներ ապահովելու հիմքեր, ապա նվազում է սոցիալական նպատակներով իրականացվող միգրացիայի հավանականությունը³⁹: Միևնույն ժամանակ, եթե ընտանիքն ունի մեծ հողատարածքներ, ապա ավելանում է այդ հողատարածքներում աշխատուժի պահանջարկը, հետևաբար՝ նվազում է ընտանիքի երիտասարդ անդամների արտագաղթելու հավանականությունը⁴⁰:

Անհատին շրջապատող սոցիալ-տնտեսական պայմանները առաջնային և ուղղակի ազդեցություն ունեն նրա որոշումների ընդունման վրա: Արտագաղթելու որոշում կայացնելը նույնպես բացառություն չէ և մեծապես կախված է անհատին շրջապատող միջավայրից: Այդպիսի հիմնական գործոններից է անհատի կենսագործունեության տնտեսական միջավայրը: Օրինակ՝ գյուղատնտեսության զարգացման մակարդակը, ռիսկերը և գյուղմթերքի գները մեծապես ազդում են գյուղական բնակավայրերում մարդկանց միգրացիայի մակարդակի վրա⁴¹: Գյուղատնտեսական զարգացման մակարդակի և երիտասարդների շրջանում միգրացիայի միջև փոխկապվածության հետազոտություն իրականացվել է նաև Վրաստանում: Արդյունքները ցույց են տվել, որ երիտասարդների գրադվածությունը Վրաստանի գյուղատնտեսության ոլորտում ցածր է և խոչընդոտվում է այնպիսի գործոններով, ինչպիսիք են հողի թերզարգացած շուկան, գյուղական բնակավայրերում բնակչության ծերացումը, որոնք էլ, իրենց հերթին, պատճառ են դառնում են գյուղական բնակավայրերից միգրացիայի բարձր մակարդակի և կառուցվածքային գործազրկության⁴²: Հեղինակները պնդում են, որ գյուղատնտեսության ոլորտում բարեփոխումները, հողերի գրանցման ընթացակարգերի պարզեցումը, են-

³⁸ St' u **Petrozziello A.**, Gender on the move: Working on the migration-development nexus from a gender perspective. Training Manual. UN Women, 2013, էջ 75-85, <https://www.unwomen.org/en/digital-library/publications/2013/12/gender-on-the-move>

³⁹ St' u **Waddington H. & Rachel Sabates-Wheeler R.**, How does poverty affect migration choice? A review of literature. Working Paper T3. Institute of Development Studies, Sussex, 2003, էջ 10-18, https://www.sussex.ac.uk/Units/SCMR/drc/publications/working_papers/WP-T3.pdf

⁴⁰ St' u **Kok P., Gelderblom D., Oucho J. & Van Zyl J.**, Migration in South and Southern Africa. Dynamic and determinant. Cape Town, Human Sciences Research Council, 2006, էջ 205-227, <https://www.hsrcpress.ac.za/books/migration-in-south-and-southern-africa>

⁴¹ St' u **Van de Glind H.**, Migration and child labour – Exploring child migrant vulnerabilities and those of children left behind. Geneva, ILO-IPEC, 2010, էջ 4-5, https://www.ilo.org/ipec/Informationresources/WCMS_145643

⁴² St' u **Kharaisvili E., Chavleishvili M., Lobzhanidze M., Damenia N., Sagareishvili N.**, Problems of Youth Employment in Agricultural Sector of Georgia and Causes of Migration, International Journal of Social, Behavioral, Educational, Economic, Business and Industrial Engineering Vol:11, 2017, No:10, էջ 2117-2118, <https://dspace.tsu.ge/handle/123456789/825>

թակառուցվածքների զարգացումը, գյուղատնտեսական կրթության արդիա-
կանացումը և գյուղական վայրերում երիտասարդների ոչ գյուղատնտեսա-
կան զբաղվածությունը խթանող քաղաքականության արդյունավետ իրակա-
նացումը կարող են հետևողականորեն լուծել նշված խնդիրները:

Մեկ այլ օրինակ է ֆինանսական միջոցների հասանելիության ցածր մա-
կարդակը, որը կարող է արտագաղթելու պատճառ դառնալ: Եթե տնտեսա-
կան միջավայրում առկա են ֆինանսական գործիքներից օգտվելու անհաղ-
թահարելի դժվարություններ և անմատչելիություն կամ սահմանափակ հա-
սանելիություն, ապա մարդիկ կբախվեն իրենց նորմալ կենսագործունեու-
թյան իրականացման դժվարությունների, որն էլ, ի վերջո, կհանգեցնի ար-
տագաղթի⁴³:

Մարդուն շրջապատող միջավայրում աղքատության բարձր մակարդա-
կը, եկամուտների մեծ բևեռվածությունը ևս կարող են ազդել միգրացիոն
հակվածության մեծացման վրա: Աղքատության պատճառով մարդկանց հա-
մար սահմանափակվում են կրթական և առողջապահական որակյալ ծառա-
յություններից օգտվելու հնարավորությունները, որն էլ ստեղծում է աղքա-
տությունից դուրս գալու անբարենպաստ իրավիճակ⁴⁴: Սոցիալ-առողջապա-
հական ծառայությունների անհասանելիությունը մեծացնում է ինչպես էմի-
գրացիան, այնպես էլ իմիգրացիան, քանի որ սեփական երկրի խոշոր քա-
ղաքները կամ այլ երկրները հաճախ ընկալվում են որպես հնարավորու-
թյունների և բարեկեցության կենտրոններ, որը նույնպես հատկապես երի-
տասարդների արտագաղթելու պատճառ է դառնում⁴⁵:

Զգալի է նաև երկրում զբաղվածության իրական մակարդակի և մարդ-
կանց միգրացիոն հակումների միջև փոխկապակցվածությունը: Բազմաթիվ
վերլուծություններ ապացուցում են, որ գործազուրկները (հատկապես՝ երկա-
րաժամկետ) ավելի են հակված արտագաղթելու⁴⁶: Դրա հիմնական պատ-
ճառներ կարող են լինել սեփական երկրում բավարար վարձատրությամբ
կայուն զբաղվածություն գտնելու դժվարությունները կամ անհնարիություն-
ը: Կարծում ենք՝ աշխատատեղերի բացակայությանը կարելի է ավելացնել
նաև աշխատանքային ոչ բավարար պայմանները՝ ցածր վարձատրություն,
աշխատանքի սեզոնային կամ ոչ մշտական բնույթ, առողջության համար
վտանգավոր, ֆիզիկական ծանր աշխատանք և այլն:

⁴³ Տե՛ս **Fletschner D. & Kenney L.**, Rural women's access to financial services. Credit, savings and insurance. ESA Working Paper No. 11-07. FAO, 2011, էջ 4-5, <https://www.fao.org/3/am312e/am312e.pdf>

⁴⁴ Տե՛ս FAO. FAO's Strategic Objective 3: Reduce rural poverty, 2014, էջ 23-24, <https://www.fao.org/3/i6835e/i6835e.pdf>

⁴⁵ Տե՛ս **Herrera C. & David Sahn D.**, Determinants of internal migration among Senegalese youth. New York, Cornell University, 2013, էջ 20-22, https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2229584

⁴⁶ Տե՛ս **Besharov D. & Lopez M.**, Adjusting to a world in motion. Trends in global migration and migration policy. Oxford University Press, 2015, էջ 11-12, [Doi: 10.1093/acprof:oso/9780190211394.001.0001](https://doi.org/10.1093/acprof:oso/9780190211394.001.0001)

Անփոփելի կարելի է եզրակացնել, որ միգրացիայի վրա ազդող բազմաբնույթ գործոնների ամբողջական ուսումնասիրությունը պահանջում է հաշվի առնել ինչպես անհատական որոշումները ձևավորող միկրոնակարգակի հիմնական բնութագրիչները, այնպես էլ մակրոնակարգակի զարգացման համակարգային միջավայրը, միտումները պայմանավորող հիմնական դրդապատճառները:

Այս որոշիչ գործոնների բարելավման հավաքական և կայուն լուծումները կարող են ճանապարհ հարթել ավելի հավասարակշռված զարգացման համար՝ գործնականում նվազեցնելով միգրացիոն ճնշումները և խթանելով միգրացիոն ռիսկ ունեցող բնակչության՝ համայնքային կյանքին ինտեգրվելու կայուն բնույթը: Իրենց հերթին՝ հատկապես երիտասարդների էմիգրացիոն միտումները հանրային կյանքի զարգացման տվյալ փուլում և երկարաժամկետում ժողովրդագրական իրավիճակը պայմանավորող անկյունաքարային գործոններ են:

1.2

Երիտասարդների միգրացիայի ազդեցությունը դոնոր երկրների տնտեսությունների վրա և կանխարգելման ու վերադարձի պետական քաղաքականությունների համաշխարհային փորձը

Վերջին 30 տարիներին միջազգային միգրանտների թիվն աճել է մոտ 128 միլիոնով⁴⁷, իսկ 2020 թ. մոտավորապես 90 մլն միգրանտ եղել է 15–34 տարեկան, որոնց 36%-ը՝ 15–24, իսկ 64%-ը՝ 25–34 տարեկան: Ընդ որում, ՄԱԿ-ի տվյալների համաձայն, 1990–2020 թթ. ընթացքում 15-ից 24 տարեկան երիտասարդ միգրանտների թիվն աճել է 43.4%-ով, իսկ 25–34 տարեկանների՝ 83%-ով՝ 30.1 մլն-ից դառնալով 55.8 մլն: Ընդ որում, 2020 թ. 15–24 տարեկան երիտասարդ միգրանտների թիվը կազմել է ընդհանուր միգրանտների 11.3%-ը և աշխարհի երիտասարդ բնակչության 2.6%-ը⁴⁸: Երիտասարդ միգրանտների տեսակարար կշիռն ավելի մեծ է եղել ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում. 15–24 և 25–34 տարեկան բոլոր միգրանտների համապատասխանաբար՝ 43 և 37%-ը եղել են այս երկրներից⁴⁹:

⁴⁷ Տե՛ս IOM, UN Migration, World Migration Report 2022, էջ 23-24, <https://publications.iom.int/books/world-migration-report-2022>

⁴⁸ Հաշվարկը՝ ըստ United Nations Department of Economic and Social Affairs (UN DESA), International Migrant Stock 2020, Population Division, New York, <https://www.un.org/development/desa/pd/content/international-migrant-stock>

⁴⁹ Տե՛ս Hall S., նշվ. աշխ., էջ 10:

Ընդհանուր առմամբ, արտագաղթի, մասնավորապես՝ երիտասարդների արտագաղթի ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցությունները բավականին խորն են և հաճախ՝ երկարաժամկետ ու դժվարհաղթահարելի⁵⁰: Երիտասարդների արտագաղթի հավանական *դրական էֆեկտներ* կարելի է համարել ավելի արժանավայել աշխատանքի հնարավորությունները և աշխատաշուկայում աշխատանքի ավելցուկի ճնշումների թեթևացումը, ավելի որակյալ կրթություն ստանալու հնարավորությունները և գիտելիքները հայրենիքին ծառայեցնելը, տրանսֆերտների աճի շնորհիվ տնտեսական աճին նպաստումը, աղքատության մակարդակի կրճատումը, ներդրումների խթանումը, մարդկային կապիտալի զարգացումը, սփյուռքի շնորհիվ տեխնոլոգիաների փոխանցումը, ներդրումների և վենչուրային կապիտալի աճը, որակյալ աշխատողների վերադարձի և նույնիսկ վիրտուալ վերադառնալու դեպքում հմտությունների փոխանցումը և օտարերկրյա ցանցային կապերի ստեղծումը: Երիտասարդների արտագաղթի հավանական *բացասական էֆեկտներն են* ժողովրդագրական խնդիրները, բնակչության ծերացումը և պետության սոցիալական ծախսերի աճը, մարդկային կապիտալի կորուստը, տնտեսական աճի և արտադրողականության աճի տեմպերի դանդաղումը, գործուսային արտադրողականության կրճատումը, եկամուտների անհավասարության խորացումը, ֆինանսական կայունության ռիսկերի առաջացումը, զբաղվածների հարկային բեռի մեծացումը:

Դոնոր երկրների տնտեսությունների վրա արտագաղթի ազդեցությունները կարելի է բաժանել ըստ ուղղությունների՝ մասնավոր հատվածի (աշխատաշուկայի, ներդրումների և արտադրողականության), պետական հատվածի (բյուջեի հաշվեկշռվածության, բյուջեի կառուցվածքի) և արտաքին մրցունակության (աշխատանքի ծախսերի, համեմատական առավելությունների և իրական արդյունավետ փոխարժեքի) վրա ազդեցություններ:

Արտագաղթը դոնոր երկրներում կարող է նշանակալի ազդեցություն ունենալ աշխատանքի և ֆինանսական շուկաների վրա: Որակյալ աշխատուժի արտահոսքը կարող է հանգեցնել ուղեղների արտահոսքի՝ ազդելով արտադրողականության վրա, իսկ դրամական փոխանցումները կարող են կրճատել աշխատանքի առաջարկը՝ բարձրացնելով զսպող աշխատավարձի մակարդակը: Դրամական փոխանցումները կարող են խթանել մասնավոր ներդրումները ֆիզիկական և մարդկային կապիտալում՝ կրճատելով վարկային սահմանափակությունները: Դրանք կարող են հանգեցնել ֆինանսական խորացման և միջտրոլության մակարդակի աճի:

Կենտրոնական, Արևելյան և Հարավարևելյան Եվրոպայի երկրներում 25 տարիների արտագաղթը մեծացրել է բարձրորակ աշխատուժի պակաս

⁵⁰ St' u Atoy an R., Christiansen L., Dizioli A., Ebeke Ch., Ilahi N., Ilyina A., Mehrez G., Qu H., Raei F., Rhee A., and Zakharova D., Emigration and Its Economic Impact on Eastern Europe, IMF Staff Discussion Note, July 2016, <https://www.imf.org/external/pubs/ft/sdn/2016/sdn1607.pdf>

սուրդը, մինչդեռ դրամական փոխանցումները կրճատել են ռեցիպիենտների աշխատելու դրդապատճառները: 2000 թվականից սկսած՝ այս երկրներում եղել է դրական կոռեկցիա բարձրագույն կրթությամբ աշխատողների և այդպիսի աշխատողների պակասուրդի միջև: Փաստորեն, 2000-ական թվականների սկզբին բարձրագույն կրթություն ունեցող աշխատողների արտագաղթը խորացրել է բարձրորակ աշխատուժի արդեն գոյություն ունեցող պակասուրդը: Այս ազդեցությունն ամենավաղը դրսևորվել է Բայթյան և Հարավարևելյան Եվրոպայի և Եվրամիության երկրներում: Դրամական փոխանցումները նշանակալի ազդեցություն են ունեցել Կենտրոնական, Արևելյան և Հարավարևելյան Եվրոպայի երկրների աշխատաշուկայի անցումների վրա, այնպես որ, դրանք ազդում են աշխատանք փնտրելու և զբաղվածությունն ընդունելու որոշման վրա: Այս երկրներում ՀՆԱ-ի նկատմամբ դրամական փոխանցումների ներհոսքի 1% աճը կապված է տնտեսական ակտիվության մակարդակի աճի հետ՝ միջինում 2,5 տոկոսային կետով⁵¹:

Արտագաղթը կրճատել է Կենտրոնական և Հարավարևելյան Եվրոպայի երկրների հավանական աճը: Կրճատվել են աշխատունակ տարիքի բնակչության միջին տարեկան աճի տեմպերը 0,5–1 տոկոսային կետով 1990-ականներից սկսած՝ ցույց տալով, որ աշխատանքի առաջարկը կարող էր 10–20%-ով ավելի մեծ լինել, քան փաստացի արձանագրվել է: Ջուտ միգրացիայի հաշվառման տվյալները ցույց են տալիս, որ այս երկրների մոտ 1/3-ում ՀՆԱ աճի դանդաղումը պայմանավորված է եղել կամ միգրացիայի պատճառով աշխատանքի կորստով, կամ առկա աշխատուժի հմտությունների մակարդակի կրճատմամբ: Մասնավորապես՝ 1999–2014 թթ. Ալբանիայում, Մոնտենեգրոյում և Ռումինիայում, Լատվիայում և Լիտվայում միգրացիան 0,6–0,9 տոկոսային կետով կրճատել է տարեկան տնտեսական աճի տեմպերը: Կրճատման մոտավորապես 2/3-ը կարելի է վերագրել աշխատանքի առաջարկի վրա արտագաղթի ուղղակի ազդեցությանը, մնացած մասը՝ հմտությունների մակարդակի կրճատմանը: Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանում և Թուրքիայում տարեկան տնտեսական աճը 0,3 տոկոսային կետով ավելի բարձր էր հարևան երկրների տնտեսական աճից՝ ներգաղթի շնորհիվ: Թուրքիայում ազդեցության կեսը վերագրվում է հմտությունների փոփոխություններին: Սլովենիայում, Հունգարիայում և Չեխիայի Հանրապետությունում նույնպես տնտեսական աճի տեմպերն արագացել են աշխատուժի ներհոսքի շնորհիվ՝ չնայած որ այդ աճը դանդաղել է որակյալ աշխատուժի արտագաղթի պատճառով⁵²:

Այն երկրներում, որտեղ տրանսֆերտ/ՀՆԱ հարաբերությունը գերազանցում է 10%-ը, դրանք վճռորոշ ազդեցություն են ունենում ֆինանսական խորացման վրա (ցույց է տալիս, թե անհատական վարկերը կամ ավանդներ

⁵¹ Տե՛ս նույն տեղը, էջ 17:

⁵² Տե՛ս նույն տեղը, էջ 17–18:

րը ՀՆԱ քանի տոկոսն են կազմում)՝ խթանելով մասնավոր գործարար ակտիվությունը: Տրանսֆերտներն ազդում են նաև մասնավոր ներդրումների վրա: Իրականում, տրանսֆերտների դրական ազդեցություններն ապագայում կարող են նաև կրճատվել, եթե արտագաղթը մշտական բնույթ կրի: Քանի որ տրանսֆերտները կարևոր դերակատարություն ունեն աղքատության կրճատման գործում, դրանք կարող են նաև խորացնել եկամուտների անհավասարությունը և կրճատել կառուցվածքային բարեփոխումներ իրականացնելու կառավարությունների շարժառիթները:

Բալթյան և Հարավարևելյան Եվրոպայի երկրներից որակյալ աշխատուժի արտագաղթը նպաստել է աշխատավարձերի բարձրացմանը: Որակյալ աշխատուժի արտահոսքը բացասաբար է անդրադարձել նաև աշխատանքի արտադրողականության վրա: Կենտրոնական և Հարավարևելյան Եվրոպայի երկրներում կումուլյատիվ իրական աշխատանքի արտադրողականությունը 6 տոկոսային կետով ավելի բարձր կլիներ 1995–2012 թթ. արտագաղթի բացակայության դեպքում: Որակյալ աշխատուժի արտագաղթը կրճատել է նաև ընդհանուր գործունային արտադրողականությունը դոնոր երկրներում: Դիտարկվող երկրներում կումուլյատիվ գործունային արտադրողականությունը 2,5 տոկոսային կետով ավելի բարձր կլիներ 1995–2012 թթ. որակյալ աշխատուժի արտագաղթի բացակայության պայմաններում: Ընդ որում, ուժեղ բացասական կապ գոյություն ունի որակյալ կրթված էմիգրանտների տեսակարար կշռի և երկրի ներսում ինստիտուտների որակի զարգացման միջև, որն ամենամեծ բացասական ազդեցությունն է ունենում աշխատանքի արտադրողականության վրա:

Նշանակալի և դրական կապ կա տրանսֆերտների և իրական փոխարժեքի արժևորման միջև: Մասնավորապես՝ տրանսֆերտ/ՀՆԱ հարաբերության 1 տոկոսային կետով աճը հանգեցնում է իրական արդյունավետ փոխարժեքի արժևորմանը՝ 4%-ով: Դա կապված է եղել հիմնական արտահանվող ոլորտի մրցունակության կրճատման հետ, որի համեմատական կարևորությունը դոնոր երկրներում կրճատվել է: Տրանսֆերտների աճը կարող է հանգեցնել նաև անշարժ գույքի գների բարձրացմանը տրանսֆերտ ստացող երկրներում, ինչը նշանակում է, որ տրանսֆերտները կարող են հանգեցնել նաև երկրների միջև ռեսուրսների անարդյունավետ բաշխմանը և բարձրացնել ֆինանսական կայունության ռիսկերը:

Աշխատուժի արտագաղթի պատճառով տնտեսական ակտիվության կրճատման հետևանքով կարող են կրճատվել պետական բյուջեի՝ եկամտային հարկից մուտքերը և աճել շրջանառությունից գանձվող հարկային մուտքերը, քանի որ տրանսֆերտները նպաստում են սպառողական ծախսերի աճին: Բնակչության ծերացումն էլ, իր հերթին, մեծացնում է կենսաթոշակային համակարգի վրա բեռը և պետության առողջապահական ու սոցիալական ծախսերը: Նշված երկրներում 1990–2012 թթ. արտագաղթի հետևանքով

ՀՆԱ-ում պետական ծախսերի տեսակարար կշիռն աճել է 6,2 տոկոսային կետով: Վերջին 25 տարիների ընթացքում կենսաթոշակային և առողջապահական ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ աճել են մոտավորապես 2,5 տոկոսային կետով: Այս աճը հիմնականում պայմանավորված է եղել ՀՆԱ աճի դանդաղմամբ, և դա կայուն ազդեցություն է: Պետական բյուջեի վրա այս լրացուցիչ բեռի ավելացումը հանգեցրել է եկամտային հարկի բարձրացման. բնակչության մեջ էմիգրանտների թվի 1%-ային կետով աճը ուղեկցվել է աշխատանքային հարկային բեռի ավելացմամբ՝ 4,4%-ով⁵³:

Պետական պարտքը և պետական բյուջեի պարբերաշրջանային պակասուրդը դիտարկվող երկրներում արտագաղթի պատճառով նշանակալի աճ չեն արձանագրել: 1990–2012 թթ. կումուլյատիվ ազդեցությունը եղել է փոքր և վիճակագրորեն ոչ նշանակալի. պարտք/ՀՆԱ հարաբերությունն աճել է 1,5, իսկ պակասուրդ/ՀՆԱ հարաբերությունը՝ 0,4%-ով⁵⁴:

Գրականության մեջ բազմաթիվ են հետազոտություններն այն մասին, որ միգրացիայի փորձը մեծացնում է հայրենիքում քաղաքական փոփոխություններ իրականացնելու երիտասարդների հակվածությունը և ցանկությունը: Օրինակ՝ երիտասարդ միգրանտների վերադարձի և Մալիի տեղական ընտրություններին մասնակցության միջև կապերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ոչ աֆրիկյան երկրներից վերադարձողները տանը տարածում են քաղաքական նորմեր, որոնք դրական փոփոխություններ են առաջ բերում ընտրական գործընթացում⁵⁵:

Դոնոր երկրների կողմից ազգային մակարդակում երիտասարդների միգրացիայի կարգավորման և արտագաղթի կանխարգելման քաղաքականությունները պետք է ներառեն հետևյալ հիմնական ուղղությունները.

- *Միգրացիայի քաղաքականություն*, որի շրջանակներում պետք է տարիքային սահմանափակությունների միջոցով կառավարվեն երիտասարդների միգրացիոն հոսքերի ծավալը և կառուցվածքը:
- *Մարդկային կապիտալի զարգացման քաղաքականություն*, որը պետք է ներառի պետական ինստիտուտների դերի ուժեղացման և գրավիչ միջավայրի ստեղծման միջոցառումներ, որոնք կշահադրդեն երիտասարդներին չհեռանալ և կխթանեն էմիգրանտների (հատկապես որակյալ կադրերի) վերադարձը, կբարձրացնեն երկրում մնացած աշխատուժի տնտեսական ակտիվության մակարդակը և արտադրողականությունը:
- *Արտագաղթի օգուտները տնտեսական աճի վերածելու քաղաքականություն*, որի հիմնական ուղղությունները տրանսֆերտների միջոցով ոչ թե սպառման, այլ ներդրումների աճին նպաստումն ու տնտեսության վրա

⁵³ Տե՛ս նույն տեղը, էջ 25:

⁵⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 23:

⁵⁵ Տե՛ս Hall S., Youth, Migration and Development: A New Lens for Critical Times, KNOMAD PAPER 41, 2022, էջ 23-24, <https://www.knomad.org/publication/youth-migration-and-development-a-new-lens-critical-times>.

երիտասարդների արտագաղթի բացասական ազդեցությունների կրճատումն են:

Երիտասարդների արտագաղթի պատճառների վերլուծությունը ցույց տվեց, որ դրանցից են սեփական երկրում թույլ ինստիտուտները, օրենքի գերակայության սկզբունքի պակասը, պետական կառավարման բոլոր մակարդակներում բյուրոկրատիայի, կոռուպցիայի և կլիենտելիզմի դրսևորումները: Ըստ այդմ՝ ժամանակի հրամայական են դառնում պետական ինստիտուտների որակի բարձրացումը, կոռուպցիայի դեմ պայքարը, երիտասարդների հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովումը, ինչը շարունակական գործընթաց է, և դրա անհրաժեշտությունը պայմանավորված է ոչ միայն երիտասարդների արտագաղթի կանխարգելման խնդրի լուծմամբ:

Երիտասարդների արտագաղթը կանխարգելելու առավել գրավիչ միջավայր ստեղծելու համար դոնոր երկրները պետք է իրականացնեն տնտեսական աճի, արժանապատիվ զբաղվածության և տնտեսական կայունության ապահովման քաղաքականություն, որը հնարավորություն կտա նաև նպաստելու միգրանտների վերադարձին: Ավելին, դրանք կլիթանեն օտարերկրյա ուղղակի ներդրումները, արտադրողականությունը և տեխնոլոգիաների ու նոր հատման փոխանցումը: ՏՀԶԿ-ի կողմից իրականացված հետազոտության համաձայն՝ երիտասարդների կայուն և հարմար զբաղվածության ապահովման վրա էական ազդեցություն կարող են ունենալ զբաղվածության պետական ծառայությունները՝ նպաստելով աշխատանքի շուկայում առաջարկի և պահանջարկի համապատասխանեցմանը: Հետազոտվող երկրներում արտագաղթի նպատակ չունեցող երիտասարդների տեսակարար կշիռն ավելի մեծ է այնտեղ, որտեղ երաշխավորվում է զբաղվածություն այս ծառայությունների միջոցով՝ շատ դեպքերում պետական հատվածում զբաղվածության մեծ տեսակարար կշռի դեպքում: Կարևոր է նաև այս ծառայությունների կողմից երիտասարդների մասնագիտական վերապատրաստմանն ու որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, որը, իհարկե, կարող է նաև բարձրացնել երիտասարդների աշխատունակության մակարդակը ու դրդել արտագաղթի: Նշված հետազոտության շրջանակներում հարցման մասնակցած երկրներում մասնագիտական վերապատրաստման ծրագրերի մասնակցած երիտասարդներն արտագաղթելու ավելի մեծ հակվածություն են դրսևորել, քան նմանատիպ ծրագրերին չմասնակցածները: Հայաստանն այս երկրների շարքում բացառություն է կազմում, ինչը ենթադրում է, որ այդպիսի ծրագրերը կարող են մեր երկրից երիտասարդների արտագաղթի կանխարգելիչ գործիք հանդիսանալ⁵⁶: Աշխատաշուկայի ակտիվ քաղաքականությունները պետք է հիմնականում ուղղել երիտասարդների խոցելի խմբերին:

⁵⁶ St' u Hall S., նշվ. աշխ., էջ 37-38:

Երիտասարդների շրջանում զբաղվածությունը և գործարար ակտիվությունը խթանելու և արտագաղթը կանխելու համար դոնոր երկրները կարող են սահմանել դրամաշնորհների, սուբսիդիաների և կրթաթոշակների հատուկ սխեմաներ: Օրինակ՝ Մոնտենեգրոյում, Հյուսիսային Մակեդոնիայում և Սերբիայում ներդրվել է երկակի կրթական համակարգը, ըստ որի՝ մասնագիտական կրթությունը և մասնագիտական փորձառության ձեռքբերումը զուգակցվում են: Հարավային Մակեդոնիան, Ալբանիան և Սերբիան ներդրել են Երիտասարդների երաշխիքի համակարգը, որի նպատակն է ապահովել դպրոցից դեպի աշխատանք սահուն անցումը, աջակցել աշխատաշուկային ինտեգրմանը և երաշխավորել բոլոր երիտասարդների աշխատանքով ապահովվածությունը: Համակարգը երաշխավորում է, որ 29 տարեկանից ցածր տարիք ունեցող բոլոր երիտասարդները պետք է ստանան պատշաճ և ըստ մասնագիտության զբաղվածության, կրթությունը շարունակելու, մասնագիտական փորձառություն անցնելու առաջարկ՝ աշխատանքը կորցնելուց կամ ֆորմալ կրթությունը ավարտելուց հետո 4 ամսվա ընթացքում: Իրականում պետությունը ոչ թե պետք է սահմանափակվի միայն աշխատաշուկայի ակտիվ քաղաքականություններով, այլ պետք է առաջարկի արժանավայել աշխատանք երիտասարդներին՝ ապահովելով աշխատողների իրավունքների պաշտպանությունը, խթանելով զբաղվածության ձևայնացումը և երաշխավորելով համարժեք աշխատավարձ: Պետության եկամտային հարկի քաղաքականությունը պետք է մշակվի՝ հաշվի առնելով նաև ցածր աշխատավարձով աշխատողներին: Անհրաժեշտ է նաև բարձրացնել սոցիալական երկխոսության և կոլեկտիվ համաձայնագրերի ինստիտուտների դերը:

Երիտասարդների արտագաղթի կանխարգելման պետական քաղաքականության հիմնական ուղղություններից է կրթության ոլորտի քաղաքականությունը: Համեմատվող երկրներում պետությունների առջև ծառայած է կրթական համակարգերի բարեփոխումների հրամայականը: Ձեռք բերված մասնագիտական հմտությունների և աշխատաշուկայի պահանջների միջև անհամապատասխանությունը վերացնելու համար անհրաժեշտ է բարելավել մասնագիտական կրթության, վերապատրաստման և բուհերի կրթական ծրագրերը: Ուսանողների արտագաղթը կանխարգելելու համար պետությունը պետք է ներդրումներ իրականացնի «նոր տնտեսությունում» պահանջվող այնպիսի հմտությունների զարգացման նպատակով, ինչպիսիք են նորաստեղծական, սոցիալական, խնդիրներ լուծելու և նոր մարտահրավերներին ճկուն արձագանքելու ունակությունները: Կառավարությունը պետք է խթանի ընկերություններում իրականացվող վերապատրաստումները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունների վերապատրաստված կամ ընկերության կողմից փոխհատուցվող վերապատրաստման ծրագրերի մասնակցած աշխատողները նույնպես կարող են արտագաղթել. ընդունող երկրների հետ կարելի է կնքել համաձայնագրեր ուսանողների՝ արտերկրում

որոշակի վերապատրաստում անցնելու և պարտադիր վերադառնալու պայմանների շուրջ: Դա նաև կապահովի արժանավայել աշխատանքային պայմաններ: Այսպես՝ Դանիայի և Լեհաստանի առողջապահության նախարարությունների միջև կնքված համաձայնագրի համաձայն, լեհ բուժքույրեր են պատրաստվում Դանիայի առողջապահական համակարգում առավելագույնը 2 տարի ժամկետով աշխատելու համար, որից հետո նրանք պարտավոր են վերադառնալ և վերաինտեգրվել Լեհաստանի առողջապահական համակարգին: Այս դեպքում կարող է կիրառվել նաև այլ տարբերակ, ըստ որի՝ նպատակակետ երկիրը ֆինանսավորում է որոշակի թվով մասնագետների վերապատրաստումն ըստ իր չափորոշիչների (որոնց պահանջարկը տվյալ պահին դոնոր երկրում առկա չէ), այնուհետև նրանց տրամադրում է վիզա որոշակի ժամանակով՝ երաշխավորելով նրանց վերադարձը հայրենիք:

Երիտասարդ որակյալ աշխատուժի վերադարձի քաղաքականության մշակման ժամանակ կարելի է շեշտադրումը կատարել թե՛ արտերկրից ներդրումներ ներգրավելու և ուղեղների շրջապտույտն ապահովելու, թե՛ նրանց վերադարձը կազմակերպելու վրա: Օրինակ՝ առաջին նպատակի իրականացման համար Բանգալոր, Բոմբեյ, Պեկին, Շանհայ և Տայպեյ քաղաքներում նրանց նախկին քաղաքացիների կողմից ստեղծվել են ԱՄՆ-ի Սիլիկոնյան հովտի հետ զուգահեռ գործունեություն իրականացնող Սիլիկոնյան հովիտներ և արդյունաբերական պարկեր⁵⁷: Նույնատիպ գիտականակադեմիական ցանցերն աշխարհում գերազանցում են մոտ չորս տասնյակը, սակայն ոչ բոլորն են արդյունավետ գործունեություն իրականացնում: Ամենահաջողված փորձերից մեկը Թայվանի Hsinchu Science-Based Industrial Park-ն է, որի ընկերությունների գրեթե կեսը ստեղծվել է ԱՄՆ-ի Սիլիկոնյան հովտից վերադարձածների կողմից:

Արտերկրում կրթություն ստացած և վերապատրաստում անցած երիտասարդների վերադարձը և վերաինտեգրումը սահուն և անխոչընդոտ կազմակերպելու համար անհրաժեշտ է ներդնել օտարերկրյա հավաստագրերը և աշխատանքային փորձառությունը ճանաչելու համակարգ, իսկ ծառայությունների ոլորտի աշխատողների դեպքում վերացնել հայրենիքում պարտադիր հավաստագրերի և արտոնագրերի պահանջը:

Երիտասարդների միգրացիայի կարգավորման պետական քաղաքականությունների ժամանակակից գործիքներից է ժամանակավոր շրջանաձև միգրացիայի քաղաքականությունը: Օրինակ՝ 2020 թվականին Կանադան և Անդորրան համաձայնագիր են կնքել՝ թույլ տալով 18–30 տարեկան երիտասարդներին աշխատելու և ճանապարհորդելու միմյանց երկրներում մինչև 1

⁵⁷ Sit'u Wickramasekara P., Perspectives on Labour Migration, 5 E, Policy responses to skilled migration: Retention, return and circulation, ILO, 2002, էջ 12-13, https://www.ilo.org/wcmsp5/groups/public/-ed_protect/-protrav/-migrant/documents/publication/wcms_232366.pdf

տարի ժամկետով⁵⁸: 2021 թ. Կանադան և Իտալիան երիտասարդների շարժունության համաձայնագիր են կնքել՝ թույլ տալով 18–35 տարեկան երիտասարդներին երկու անգամ, մինչև 1 տարի ժամկետով, ճանապարհորդել և աշխատել միմյանց երկրներում⁵⁹: Երիտասարդների շարժունության համաձայնագիր ունեն նաև Պորտուգալիան և Անգոլան⁶⁰:

2021 թ. միգրացիայի յուրօրինակ համաձայնագիր է կնքվել Միացյալ Թագավորության և Հնդկաստանի միջև, որի մասն է կազմում Երիտասարդ մասնագետների սխեման, ըստ որի՝ երկու երկրների երիտասարդ մասնագետները կարող են ապրել միմյանց երկրներում մինչև 2 տարի ժամկետով⁶¹:

Պետության արդյունավետ միգրացիայի քաղաքականության ուղղություններից մեկն էլ պետք է լինի սփյուռքի ներուժն ի շահ տնտեսության զարգացման ծառայեցնելը: Օրինակ՝ Իռլանդիան և Լեհաստանը սփյուռքի հետ կապերի հաստատման ծրագրեր ունեն, որոնց շրջանակներում գովազդում են հայրենիքում առկա գործարարությամբ զբաղվելու և ներդրումներ իրականացնելու հնարավորությունները: Օրինակ՝ 1990–2004 թթ. դեպի Իռլանդիա ներգաղթողների 1/4-ը նախկինում արտագաղթածներ էին, որոնք վերադառնում էին հայրենիք՝ երկրում առկա զբաղվածության հնարավորությունների մասին սփյուռքին տեղեկացնելու կառավարության ջանքերի, ինչպես նաև զբաղվածության և վերապատրաստման գործակալությունների կողմից վերադարձողների հետ աշխատանքների շնորհիվ⁶²: Այդ նպատակով պետությունը պետք է ստեղծի տվյալների բազա՝ տեղեկատվություն հավաքագրելով սփյուռքում առկա մասնագետների մասին և պարբերաբար տվյալներ փոխանցելով մեր երկրում գոյություն ունեցող պահանջարկի վերաբերյալ: Օրինակ՝ Ալբանիան կազմակերպում է Սփյուռքի գազաթնաժողովներ՝ բարձրացնելու երկրում սփյուռքի հայրենակիցների կողմից ներդրումներ իրականացնելու ներուժի մասին տեղեկացվածության աստիճանը⁶³:

Ուղեղների արտահոսքն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե որպես ամբողջությամբ ռեսուրսների կորուստ, այլ էմիգրանտների տեխնիկական և գործարարության հմտությունները, առևտրային կապերը և ֆինանսական կապիտալը կարելի է համարել երկարաժամկետ տնտեսական աճի աղբյուր՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների, վենչուրային ֆինանսավորման, ֆինանսական ներդրումների, առևտրային և կրթական փոխանակությունների

⁵⁸ Տե՛ս <https://www.canada.ca/en/immigration-refugees-citizenship/news/2020/06/canada-signs-new-youth-mobilityarrangement-with-andorra-in-a-virtual-ceremony.html>.

⁵⁹ Տե՛ս <https://www.canadianchamberitaly.com/canada-and-italy-sign-new-youth-mobility-agreement>

⁶⁰ Տե՛ս <https://www.verangola.net/va/en/042021/Politics/25113/Portugal-is-discussing-visa-and-youth-mobility-agreements-withAngola.htm>.

⁶¹ Տե՛ս <https://www.gov.uk/government/news/uk-india-agree-partnership-to-boost-work-visas-for-indian-nationals>

⁶² Տե՛ս Atoyan R., Christiansen L., Dizioli A., Ebeke Ch., Ilahi N., Ilyina A., Mehrez G., Qu H., Raei F., Rhee A., and Zakharova D., նշվ. աշխ., էջ 31:

⁶³ Տե՛ս Esch V., Palm V., Brey H., Hagemann C., նշվ. աշխ., էջ 95:

հիմքով: Սփյուռքի ներուժն ի նպաստ տնտեսությանը ծառայեցնելու և սփյուռքից ներդրումներ ներգրավելու համար պետությունները ստեղծում են նաև նոր ֆինանսական ինստիտուտներ, գործիքներ և հնարավորություններ: Օրինակ՝ Ալբանիայում, Բոսնիա և Հերցեգովինայում, Կոսովոյում ստեղծվել են Սփյուռքի զարգացման հիմնադրամներ, գործարար միություններ, որոնք իրականացնելու են սփյուռքի հայրենակիցների միկրովարկավորում, աջակցելու են սփյուռքի ներդրողներին և երաշխավորելու են ներդրումները սփյուռքից, բարելավելու են ձեռներեցությանը զբաղվելու միջավայրը՝ կրճատելով նոր բիզնես սկսելու ծախսերը, աջակցություն ցուցաբերելով բիզնես նախագծերի մշակման և իրագործման գործընթացներում⁶⁴: Շրի Լանկայի՝ այլ երկրում բնակություն հաստատած քաղաքացիների կամ երկքաղաքացիություն ունեցող անձանց դեպքում գործում է ոչ ռեզիդենտների համար արտարժույթի սխեմա, ըստ որի, վերջիններս կարող են արտարժույթով խնայողական կամ ընթացիկ հաշիվներ բացել Շրի Լանկայի բանկերում՝ արտոնյալ տոկոսադրույքով և փոխարժեքով⁶⁵:

Երիտասարդ ուղեղների արտահոսքը կարող է նպաստել նաև տեխնոլոգիաների և նոու հաուների զարգացմանը: Օրինակ՝ Թաիլանդում Thai Reverse Brain Drain Project-ը ստեղծվել է այդ նպատակով: Դրա շրջանակներում հատուկ նախագծերի իրականացման համար ներգրավվում են արտերկրում գտնվող լավագույն մասնագետները/թիմերը՝ խթանելով և համակարգելով տեխնոլոգիաների փոխանցումը կարճաժամկետ այցելությունների և ինստիտուտների միջև կապեր ստեղծելու ճանապարհով, առաջարկելով դրամաշնորհային ծրագրերի, զբաղվածության երկարաժամկետ պայմանագրեր, մրցունակ աշխատավարձ⁶⁶: Սփյուռքի գիտական ներուժն ի շահ պետության ծառայեցնելու համար երկրները հնարավորություն են տալիս սփյուռքում գտնվող իրենց հայրենակիցներին նաև դասախոսություններ կարդալու, պետության ֆինանսավորմամբ հայրենիքում իրականացնելու համատեղ գիտական հետազոտություններ: Էստոնիայի «Համերկրացիների ծրագրի» համաձայն՝ վերադարձող էստոնացիները կարող են աջակցության նպաստ ստանալ Իստեգրման և միգրացիայի հիմնադրամի «Մեր մարդիկ» ծրագրով, իսկ վերադարձող գիտնականները հնարավորություն ունեն դրամաշնորհներ ստանալու:⁶⁷ Այնուամենայնիվ, Էստոնիան զգույշ է բարձր որակավորում ունեցող անձանց վերադարձնելու իր ջանքերում. «Bringing Talent Home» 2010–2012 թթ. վերադարձի միգրացիոն նախաձեռնությունը չկարողացավ հասնել առաջադրված նպատակներին և նույնիսկ որպես խիստ վիրա-

⁶⁴ Տե՛ս նույն տեղը էջ 94-97:

⁶⁵ Տե՛ս <https://www.lolcfinance.com/savings-and-deposits/personal-foreign-currency-accounts-non-resident/#:-:text=PFCA%20Non%20Resident%20accounts%20are.eligible%20to%20open%20PFCA%20accounts>.

⁶⁶ Տե՛ս <http://www.thailink.com/rbd.htm>

⁶⁷ Տե՛ս <https://www.migrationpolicy.org/article/can-return-migration-revitalize-baltics-estonia-latvia-and-lithuania-engage-their-diasporas>

վորական ընկավվեց սփյուռքի հայրենակիցների կողմից, ովքեր չկարողացան համապատասխանել ծրագրի պահանջներին:

Լիտվայում գործում է Արտերկրում ապրող լիտվացիների արտաքին գործերի նախարարության վարչությունը, որը համակարգում է «Գլոբալ Լիտվայի սփյուռք» ծրագիրը 2011 թվականից: «Գլոբալ Լիտվայի առաջնորդներ» ոչ պետական կազմակերպությունը նույնպես աշխատում է սփյուռքի հետ, որին անդամակցում են 10.000-ից ավելի լիտվացի մասնագետներ ավելի քան 60 երկրից⁶⁸: Սփյուռքի ներգրավման պետական քաղաքականությունը և Լիտվայի համաշխարհային առաջնորդները միասին իրականացնում են տարբեր ծրագրեր, որոնք խրախուսում են երիտասարդներին և մասնագետներին վերադառնալ և աշխատել Լիտվայում կամ փոխանցել իրենց ձեռք բերած գիտելիքներն ու փորձը: Ավելին, կառավարությունը գործարկել է «Ես ընտրում եմ Լիտվան» պաշտոնական կայքը, որը նվիրված է միգրանտների վերադարձի խթանմանը⁶⁹:

Վերադարձի միգրացիայի քաղաքականություն է իրականացնում նաև Լատվիան՝ վերադարձողներին տրամադրելով զբաղվածության հնարավորություններ, օգնություն՝ բնակարան գտնելու, երեխաների խնամքի և դպրոցում երեխաների գրանցման հարցում, ցուցաբերում ֆինանսական աջակցություն՝ բիզնես սկսելու համար: Ծրագրի շնորհիվ միայն մեկ տարվա ընթացքում 185 ընտանիք է վերադարձել Լատվիա⁷⁰:

⁶⁸ Տե՛ս <https://lithuanianleaders.org/>

⁶⁹ Տե՛ս <https://www.migrationpolicy.org/article/can-return-migration-revitalize-baltics-estonia-latvia-and-lithuania-engage-their-diasporas>

⁷⁰ Տե՛ս նույն տեղը:

**ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**


**2.1 ՀՀ-ում երիտասարդների արտագաղթի
միտումների, սոցիալ-ժողովրդագրական
բնութագրիչների և աշխարհագրական
հիմնական ուղղությունների գնահատումը**

Սույն հետազոտության շրջանակներում բնակչության էմիգրացիայի ուսումնասիրության թիրախ է ընտրվել 15–34 տարիքային խումբը: ՀՀ վիճակագրական կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ՎԿ) հրապարակումներում առկա չէ նշված տարիքային խմբում գտնվող միգրանտների վերաբերյալ առանձին վիճակագրություն: Ուստի, հետազոտության շրջանակներում առանձնացված թիրախային խմբին վերաբերող տվյալները հաշվարկելու համար իրականացվել է կոհորտային վերլուծություն (cohort-component analysis): Մասնավորապես, կատարվել է ուղղակի հաշվարկ՝ համադրելով ՀՀ ՎԿ պաշտոնական վիճակագրության մի քանի աղբյուրի ցուցանիշ⁷¹: Այսպես՝ նախ հաշվարկվել է 15–34 տարիքային խմբի բնակչության թվի ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանի (տարվա) ցուցանիշների տարբերությունը: Նշված տարբերությունը կարելի է ներկայացնել որպես բնական և միգրացիոն շարժերի հանրագումար: Բնական շարժը կարելի է ընդունել որպես մահացածների թիվ, քանի որ դիտարկվում է բնակչություն 15+ տարիքային խումբը, որտեղ ծնվածների թվի փոփոխությունը բնական շարժի վրա ազդեցություն չունի: 15–34 տարիքային խմբի բնակչության թվաքանակի ընթացիկ և նախորդ ժամանակահատվածի ցուցանիշների տարբերությունից հանելով մահացածների թիվը՝ ստացվել է այդ տարիքային խմբում միգրանտների գնահատված ցուցանիշը:

Ըստ այդմ՝ ուսումնասիրության նպատակով ստորև բերված է նախորդ տասնամյակում ՀՀ-ից երիտասարդ միգրանտների թվի դինամիկան բնութագրող ցուցանիշների ժամանակային շարքը: Ուսումնասիրության պահին ՀՀ ՎԿ-ի հրապարակած վերաբերելի ցուցանիշներն ավարտվում են 2021 թվականով:

⁷¹ Տե՛ս **Kashnitsky I.**, Russian periphery is dying in movement: a cohort assessment of internal youth migration in Central Russia. *GeoJournal*, 85(1), 2018, էջ 176., Doi: [10.1007/s10708-018-9953-5](https://doi.org/10.1007/s10708-018-9953-5)

Գծապատկեր 2.1-ից երևում է, որ 15–34 տարիքային միջակայքում գտնվող միգրանտների առավելագույն թիվը գրանցվել է 2016 թվականին՝ 28,660 մարդ, որը էապես պայմանավորված էր ապրիլյան քառօրյա պատերազմով: Նվազագույն արժեքը գրանցվել է 2020 թվականին՝ 13,914 մարդ, որը հիմնականում պայմանավորված է եղել COVID-19 համավարակի սահմանափակումներով: Դիտարկվող ժամանակահատվածում միջին արժեքը կազմել է 22,199 մարդ: Միջին հավելաճի տեմպը կազմել է -0.6%, ըստ որի, դիտարկվող ժամանակահատվածում միգրացիոն հոսքը տարեկան, միջին հաշվով, նվազել է 0.6%-ով:




Գծապատկեր 2.1 | Երիտասարդ էմիգրանտների թիվը ՀՀ-ում, 2013–2021 թթ.⁷²

Նշյալը, ընդհանուր առմամբ, կարելի է գնահատել որպես ոչ էական դրական միտում: Մասնավորապես՝ ըստ տարիների արձանագրվել է հետևյալ պատկերը. պաշտոնական վերջին ամենաթարմ տվյալներով 2021 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, միգրացիան աճել է 28.7%-ով: Դիտարկվող ժամանակահատվածում առավելագույն հավելաճը գրանցվել է 2015 թվականին՝ 5,448 մարդ, նվազագույնը 2020 թվականին՝ -9,841: Դիտարկվող ժամանակահատվածի սկզբի նկատմամբ արձանագրվել է երիտասարդ էմիգրանտների թվի նվազում՝ 5.1%-ով:

Վերոնշյալ մեթոդաբանությամբ երիտասարդների միգրացիայի տվյալների հաշվարկից բացի, ուսումնասիրվել են նաև միգրացիայի վերաբերյալ ՀՀ ՎԿ հրապարակած ցուցանիշները: ՀՀ ՎԿ-ն պարբերաբար հրապարակում է ՀՀ սահմանային գրանցումների բաշխումը՝ ըստ ներկայացված փաստաթղթերի տրման երկրի: Ըստ այդմ՝ ՀՀ մուտք գործած և ՀՀ-ից դուրս եկած մարդկանց թվաքանակի տարբերության հիման վրա, որոնք ՀՀ սահ-

⁷² Հաշվարկել են հեղինակները. աղբյուրը՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածուները (2008–2022):

մանը հատելիս ունեցել են ՀՀ քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ, կարելի է որոշակիորեն բնութագրել ընդհանուր միգրացիայի միտումները: Իհարկե, այդ ցուցանիշը միգրացիայի գնահատման տեսանկյունից առավելագույն ճշգրիտ համարել հնարավոր չէ: Օրինակ՝ նման մեթոդով միգրացիայի հաշվարկը չի ներառում այն քաղաքացիներին, ովքեր ունեն երկքաղաքացիություն և ՀՀ սահմանը հատելիս ներկայացնում են ոչ թե ՀՀ քաղաքացիությունը, այլ որևէ այլ երկրի քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ: Նշյալից գատ, սահմանահատումների հիման վրա հնարավոր չէ հաշվարկել երիտասարդների շրջանում միգրացիան, քանի որ ՀՀ ՎԿ-ն այդ ցուցանիշը, ըստ տարիքային խմբերի, չի հրապարակում: Այնուամենայնիվ, սահմանահատումների վիճակագրությունը, կարծում ենք, որոշակի հնարավորություն տալիս է մտավոր գնահատելու, թե ինչ տեսակարար կշիռ ունի երիտասարդ միգրանտների թիվը ընդհանուր միգրացիայի մեջ, ինչպես նաև պարզելու ուսումնասիրվող ժամանակահատվածում երիտասարդ միգրանտների թվաքանակի և ընդհանուր միգրացիայի շարժընթացների տարբերությունները:



Գծապատկեր 2.2

ՀՀ մուտք գործած և ՀՀ-ից դուրս եկած քաղաքացիների թվաքանակների տարբերությունը, 2013–2021 թթ.⁷³

Գծապատկերներ 2.1-ի և 2.2-ի համադրումից պարզ է դառնում, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ սահմանահատումների ընդհանուր մնացորդի և երիտասարդ միգրանտների թվաքանակի փոփոխություններն ունեցել են նույն շարժընթացը: Ըստ վերը բերված մեթոդաբանության գնահատականի՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում երիտասարդ միգրանտների տեսակարար կշիռը միգրանտների ընդհանուր թվաքանակում, միջին հաշվով, կազմել է 53%:

⁷³ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Տարեգրքեր, Բնակչություն, 2013–2022, <https://www.armstat.am/file/doc/99535998.pdf>

2017 թվականին երիտասարդ միգրանտների տեսակարար կշիռը ընդհանուր միգրացիայի մեջ հասել է իր առավելագույն արժեքին՝ կազմելով ընդհանուր միգրանտների 74.7%-ը: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ընդհանուր էմիգրացվածների մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն հենց 15–34 տարիքային խմբի միգրանտները:

ՀՀ ՎԿ-ն միգրանտների տեղաշարժի աշխարհագրական ուղղությունների վերաբերյալ տրամադրում է երեք տեսակի տվյալներ՝ մեկնածներ, որոնք հեռացել են ՀՀ-ից և 1–3 ամիսների ընթացքում չեն վերադարձել, վերադարձածներ, որոնք մեկնել են ՀՀ-ից և վերադարձել են 1–3 ամիսների ընթացքում, նոր ժամանածներ, որոնք եղել են տնային տնտեսությունների նորեկ անդամներ: ՀՀ ՎԿ-ի կողմից տրամադրված տվյալների համար որպես հիմք են ծառայել «Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն (ՏՏԿԱՀ)» հաշվետվության շրջանակներում իրականացված հարցումների արդյունքները: Աղյուսակ 2.1-ում ներկայացված է ՀՀ-ից մեկնած և 1–3 ամիսների ընթացքում չվերադարձած միգրանտների թվաքանակը՝ ըստ աշխարհագրական հիմնական ուղղությունների:

Աղյուսակ 2.1

ՀՀ-ից մեկնած և 1–3 ամիսների ընթացքում չվերադարձած միգրանտների թվաքանակը՝ ըստ աշխարհագրական հիմնական ուղղությունների, 2013–2021 թթ.⁷⁴

Տարի/Երկիր	Ռուսաստան	ԱՊՀ այլ երկրներ	Եվրոպական այլ երկրներ	ԱՄՆ և Կանադա	Արցախ	Վրաստան	Այլ
2013-2016	108655	722	3854	730	21013	165	833
2014-2019	92530	2223	4259	1734	17510	330	3651
2019-2021	74335	470	1023	1165	5706	156	440

ՀՀ ՎԿ-ն միգրացիայի աշխարհագրական ուղղությունների վերաբերյալ տվյալները հրապարակում է մի քանի տարիների հանրագումարի տեսքով: Այդ իսկ պատճառով հնարավոր չի եղել միգրանտների աշխարհագրական ուղղությունների վերաբերյալ տարեկան տվյալներն ուսումնասիրել: ՀՀ երկարաժամկետ միգրանտների համար աշխարհագրական հիմնական ուղղությունը ուսումնասիրվող ամբողջ ժամանակահատվածում եղել է Ռուսաստանի Դաշնությունը (ՌԴ):

2013–2016 թվականներին տարեկան, միջին հաշվով, 36218 մարդ մեկնել է ՌԴ և 1–3 ամիսների ընթացքում չի վերադարձել: 2014–2019 թվականների ընթացքում այդ ցուցանիշը կազմել է 23132 մարդ, իսկ 2019–2021 թվականներին ցուցանիշը կրկին բարձրացել է՝ կազմելով 37167 մարդ: Երկրորդ ուղ-

⁷⁴ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Միգրացիոն պատկերը Հայաստանի Հանրապետությունում, 2013-2021, https://www.armstat.am/file/article/migration_profile_am_2021.pdf

ղությունը ՀՀ միգրանտների համար եղել է Արցախի Հանրապետությունը, սակայն, ի տարբերություն ՌԴ-ի, որտեղ տարեկան միգրանտների միջին թվաքանակը 2019–2021 թվականներին աճել է, դեպի Արցախ միգրանտների միջին տարեկան թվաքանակը գնալով նվազել է: Եթե 2013–2016 թվականներին դեպի Արցախ միգրանտների տարեկան միջին թվաքանակը կազմել է 7004 մարդ, ապա 2019–2021 թվականներին այդ ցուցանիշը նվազել է՝ հասնելով մինչև 2853-ի, որը պայմանավորված է եղել 2020 թվականի 44-օրյա պատերազմով: ՀՀ միգրանտների համար երկարաժամկետ միգրացիայի ուղղություններից են եղել նաև եվրոպական երկրները, որտեղ 2019–2021 թվականներին տարեկան միգրանտների թվաքանակը միջինում կազմել է 511 մարդ, և Ամերիկայի Միացյալ Նահանգներն ու Կանադան⁷⁵, որտեղ միջին տարեկան ցուցանիշը 582 է:

2013–2021 թվականների ընթացքում ՀՀ-ից մեկնած և 1–3 ամիսների ընթացքում վերադարձած միգրանտները, կարելի է ենթադրել, արտագնա սեզոնային կարճաժամկետ աշխատանքների մեկնածներն են (աղյուսակ 2.2):

Աղյուսակ 2.2

ՀՀ-ից մեկնած և 1–3 ամիսների ընթացքում վերադարձած միգրանտների թվաքանակը՝ ըստ աշխարհագրական հիմնական ուղղությունների, 2013–2021 թթ.⁷⁶

Տարի Երկիր	Ռուսաստան	ԱՊՀ այլ երկրներ	Եվրոպական այլ երկրներ	ԱՄՆ և Կանադա	Արցախ	Վրաստան	Այլ
2013-2016	75045	4717	4022	350	9256	329	1384
2014-2019	62534	1347	4349	1067	9737	254	1704
2019-2021	25875	1244	2329	390	10224	0	524

Ինչպես երկարաժամկետ կամ մշտապես մեկնած միգրանտների դեպքում, այնպես էլ կարճաժամկետ մեկնած միգրանտների պարագայում ՌԴ-ն եղել է ժամանան հիմնական երկիրը: 2013–2016 թվականների ընթացքում դեպի ՌԴ մեկնած կարճաժամկետ միգրանտների թիվը 75045 էր, իսկ 2019–2021 թվականների ընթացքում այդ ցուցանիշը նվազել է՝ հասնելով 25875-ի:

2013–2016 թթ. միգրանտների թիվը տարեկան, միջին հաշվով, կազմել է 25015 մարդ, իսկ 2019–2021 թթ. ընթացքում այդ ցուցանիշը 12937 է՝ նվազելով գրեթե 50%-ով: ՀՀ կարճաժամկետ մեկնած միգրանտների համար երկրորդ ամենաակտիվ ուղղությունը եղել է Արցախի Հանրապետությունը, որտեղ, ի տարբերություն ՌԴ-ի, ուսումնասիրվող ժամանակահատվածում միգրանտների թիվն աճել է: Եթե 2013–2016 թվականների ընթացքում դեպի Արցախ

⁷⁵ ՀՀ ՎԿ-ն միգրանտների աշխարհագրական ուղղությունները ներկայացնելիս ԱՄՆ-ն և Կանադան դիտարկում է որպես մեկ ուղղություն:

⁷⁶ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Միգրացիոն պատկերը Հայաստանի Հանրապետությունում, 2013–2021, https://www.armstat.am/file/article/migration_profile_am_2021.pdf.

մեկնած կարճաժամկետ միգրանտների թիվը կազմել է 3085 մարդ, ապա 2019–2021 թվականներին այդ ցուցանիշը հասել է 5112-ի՝ աճելով 65%-ով: ՀՀ քաղաքացիների համար կարճաժամկետ միգրացիայի ուղղություններից են եղել նաև եվրոպական երկրները, որտեղ 2019–2021 թվականներին միգրանտների միջին տարեկան թիվը կազմել է 1164 մարդ:

2013–2021 թվականների ընթացքում ՀՀ ժամանածների հիմնական դոնոր երկիրը նույնպես ՌԴ-ն է (աղյուսակ 2.3):

Ռուս-ուկրաինական հակամարտությամբ պայմանավորված՝ տնտեսական սահմանափակումների հետևանքով իմիգրացիան էապես ավելացել է: Եթե 2013–2016 թվականներին ՌԴ-ից ՀՀ նոր ժամանածների միջին տարեկան թվաքանակը կազմել է գրեթե 74 մարդ, ապա 2019–2021 թվականներին այդ ցուցանիշն ավելացել է տարեկան մինչև 5410 մարդով: Արցախից նոր ժամանածների թիվը 2019–2021 թվականներին նույնպես բազմակի ավելացել է, որը պայմանավորված է 2020 թվականի 44-օրյա պատերազմի հետևանքներով:

Աղյուսակ 2.3

ՀՀ նոր ժամանածների թվաքանակը՝ ըստ աշխարհագրական հիմնական ուղղությունների, 2013-2021 թթ.⁷⁷

Տարի / Երկիր	Ռուսաստան	ԱՊՀ այլ երկրներ	Եվրոպական այլ երկրներ	ԱՄՆ և Կանադա	Արցախ	Վրաստան	Այլ
2013-2016	221	317	0	0	1835	0	635
2014-2019	26371	2196	718	516	3865	1174	1241
2019-2021	10820	709	1556	2021	9998	0	118

Մասնավորապես՝ 2013–2016 թվականներին միջին տարեկան ժամանածների թվաքանակը կազմել է 611 մարդ, իսկ 2019–2021 թվականներին նույն ցուցանիշը հասել է 4999-ի՝ գրեթե հինգ անգամ աճել է: Նոր ժամանածների համար դոնոր երկրներից են եղել նաև ԱՄՆ-ն և Կանադան, որտեղից դեպի ՀՀ ժամանածների միջին տարեկան թիվը 2019–2021 թվականներին կազմել է 1010 մարդ, ինչպես նաև եվրոպական երկրները, որտեղից դեպի ՀՀ նոր ժամանածների միջին տարեկան թիվը 2019–2021 թվականներին կազմել է 778 մարդ:

Հետազոտության առաջին բաժնում բացահայտվել և վերլուծվել են այն հիմնական մակրո- և միկրոգործոնները, որոնք ազդում են մարդկանց միգրացիոն հակման և վերջնական որոշումների վրա: Տեսական մակարդակում և միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով^{78, 79, 80}, որպես

⁷⁷ Նույն աղբյուրը:

⁷⁸ Տե՛ս **Giroux S.**, Rural parentage and labor market disadvantage in a sub-Saharan setting: Sources and trends. Rural Sociology, 73, 2008, էջ 369–399, [Doi: 10.1526/003601108785766570](https://doi.org/10.1526/003601108785766570)


Էմիգրացիա առաջացնող առաջնային մակրոգործոն, կարելի է առանձնացնել եկամուտների անհավասար բաշխվածությունը բնակչության տարբեր խմբերի միջև: Հետազոտության հաջորդ բաժնում ՀՀ պաշտոնական վիճակագրական տվյալների հիման վրա իրականացված՝ երիտասարդների արտագնա միգրացիայի գործոնային վերլուծությունը և ստացված կանխատեսման մոդելը ևս բացահայտել են, որ միգրացիայի առաջնային և հիմնական գործոնը եկամուտների անհավասար բաշխվածությունն է: Ի դեպ, արտասահմանցի շատ հեղինակներ պնդում են, որ բնակչության տարբեր խմբերի միջև եկամտի անհավասար բաշխվածությունը բնակչության իմիգրացիա առաջացնող հիմնական պատճառն է⁸¹: Ուստի, կարևորում ենք ՀՀ-ում երիտասարդների շրջանում էմիգրացիայի և եկամուտների անհավասար բաշխվածության փոխառնչության ուսումնասիրությունը: Այս նպատակով հետազոտվել է եկամուտների անհավասարությունը բնութագրող ամենատարածված՝ Ջինիի գործակիցը, որը 2013 թվականից՝ 30.6, դինամիկ աճել է և 2018 թվականին հասել ուսումնասիրվող ժամանակահատվածի առավելագույն արժեքին՝ 34.4 (զծապատկեր 2.3): Սակայն հետագա տարիներին Ջինիի գործակիցը սկսել է կտրուկ նվազել մինչև 2020 թվականը՝ հասնելով ուսումնասիրվող ժամանակահատվածի իր նվազագույն արժեքին՝ 25.1: Ջինիի գործակցի հետևողական աճը մինչև 2018 թվականը, որն ուղեկցվել է միգրացիայի համանման աճով, հուշում է, որ եկամուտների անհամամասնությունների ընդլայնումը կարող է խթանել արտագաղթը: Հետագա տարիներին՝ 2018-2020 թվականներին, պատկերը փոխվել է. Ջինիի գործակցի նվազումն ուղեկցվել է երիտասարդների արտագաղթի նվազմամբ, որին դարձյալ հաջորդել է աճ:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, եկամուտների ընդհանուր աճն ինքնին չի կարող թուլացնել երիտասարդների շրջանում էմիգրացիայի հակվածությունը: Առավել առաջնային է եկամուտների բաշխվածության հավասարության մակարդակը: Այլ կերպ ասած՝ ՀՀ-ում էմիգրացիայի հակումներն ու փաստացի աճի միտումները թուլացնելու համար մեծ կարևորություն և շոշափելի ազդեցություն ունի ցածր եկամուտներ ունեցող երիտասարդների եկամուտների առաջանցիկ աճի ապահովումը:

⁷⁹ St' u Ravallion M., Chen Sh. & Sangraula P., New evidence on the urbanization of global poverty. World Bank Policy Research Working Paper No. 4199, WB, 2007, էջ 24-26, <https://www.jstor.org/stable/25487618>

⁸⁰ St' u Nguyen Binh T., Albrecht James W., Vroman Susan B. & Westbrook M. Daniel, A quantile regression decomposition of urban-rural inequality in Vietnam. Journal of Development Economics, Elsevier, 83(2), 2007, էջ 480, [Doi: 10.1016/j.jdeveco.2006.04.006](https://doi.org/10.1016/j.jdeveco.2006.04.006)

⁸¹ St' u Giroux S., նշվ. աշխ., էջ 369-399:



Գծապատկեր 2.3

Քինիի գործակիցը և 15–34 տարեկան էմիգրանտների թվաքանակը ՀՀ-ում, 2013–2021 թթ.⁸²


Մարդկանց միգրացիոն հակումների վրա ազդող մեկ այլ կարևոր մակրոգործոն է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանը: Աշխարհի զարգացած երկրները համարվում են միգրանտներին ընդունող (ռեցիպիենտ) երկրներ, իսկ զարգացող երկրները՝ միգրանտների դոնոր երկրներ: Ուստի, որոշակի երկրի օրինակով, կարևորվել է նաև երկրի զարգացման աստիճանի՝ որպես միգրացիոն հակման վրա ազդող գործոնի ուսումնասիրությունը:

ՀՀ տնտեսական զարգացման աստիճանը բնութագրելու համար, որպես հիմնական ցուցանիշ, դիտարկվել է բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն: 2013–2021 թվականներին ՀՀ-ում մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ և երիտասարդ էմիգրանտների թվաքանակի դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն դրսևորել է որոշակի աճի միտում (գծապատկեր 2.4):

2013–2014 թվականներին բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ աճը, մինևույն է, ուղեկցվել է երիտասարդների արտագաղթի աճով: Դա վկայում է այն մասին, որ այդ տարիներին տնտեսական աճի դրական ազդեցությունները ստվերվել են այլ ազդեցիկ գործոնների, այդ թվում՝ եկամտների անհավասար բաշխվածության հետևանքով: Հետագա տարիներին՝ մինչև 2016 թվականը, տեղի է ունեցել հակադարձ գործընթաց. մեկ շնչի հաշվով ՀՆԱ նվազումն ուղեկցվել է միգրացիայի աճով: Այնուհետև դիտարկվել են մեկ շնչի հաշվով ՀՆԱ աճ և միգրացիայի տեմպերի անկում: 2020 թվականին եկամտների կտրուկ նվազումը պայմանավորված է COVID-19 համավարակի և 44-օրյա պատերազմի տնտեսական և սոցիալական բացասա-

⁸² Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-դեկտեմբերին (2008–2022):

կան հետևանքներով: Այլ խոսքով՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ և միգրացիայի ցուցանիշների շարժը ոչ միշտ է, որ հակառակ ընթացք է ունեցել:




Գծապատկեր 2.4

Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն և 15-34 տարեկան միգրանտների թվաքանակը ՀՀ-ում, 2013–2021 թթ.⁸³

Ուսումնասիրվող ժամանակահատվածում մեկ շնչի հաշվով ՀՆԱ նվազագույն արժեքը գրանցվել է 2015 թվականին՝ 3666.1 ԱՄՆ դոլար, իսկ առավելագույն արժեքը՝ 2021 թվականին՝ 4966.5 ԱՄՆ դոլար: Հատկանշական է, որ, կարճաժամկետ առումով, մեկ շնչի հաշվով ՀՆԱ անը չի կարող էական ազդեցություն ունենալ միգրացիայի վրա՝ հաշվի առնելով ՀՀ տնտեսության և զարգացած երկրների տնտեսությունների միջև դեռևս առկա էական մեծ խզվածությունը: Հետևաբար՝ նույնիսկ կարճաժամկետ հատվածում մեկ շնչի հաշվով ՀՆԱ անը չի կարող էականորեն ազդել այն մարդկանց որոշումների վրա, ովքեր ցանկանում են տեղափոխվել և մշտական բնակություն հաստատել այլ երկրներում՝ կայուն և բարեկեցիկ կյանքի ձգտումով:

Պատմականորեն աղքատությունը միգրացիան խթանող առաջնային գործոն է: Աղքատության պայմաններում ապրող մարդիկ ունեն նյութական բարեկեցության, ծառայությունների մատչելիության սահմանափակ հնարավորություններ: ՀՀ-ում աղքատության մակարդակի և երիտասարդների էմիգրացիայի փոխկապվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աղքատության մակարդակը նվազման միտում ունեցել է 2013–2018 թվականների ընթացքում՝ 32%-ից հասնելով 23.5%-ի, որից հետո՝ մինչև 2020 թ., աճել է՝ հասնելով 27%-ի (գծապատկեր 2.5):

⁸³ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի ազգային հաշիվները (2013–2021):



Գծապատկեր 2.5


Աղքատության մակարդակը և 15–34 տարեկան էմիգրանտների թվաքանակը ՀՀ-ում, 2013–2021 թթ.⁸⁴

2021 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, աղքատության մակարդակը նվազել է և կազմել 26.5%: Ուսումնասիրվող ժամանակահատվածում աղքատության առավելագույն մակարդակը գրանցվել է 2013 թվականին՝ 32%, իսկ նվազագույն մակարդակը՝ 2018 թվականին՝ 23.5%:

Երիտասարդ տարիքի էմիգրանտների թվաքանակի և աղքատության մակարդակի փոխառնչության առումով կարելի է պնդել, որ երիտասարդների միգրացիայի ակտիվացումը, որպես կանոն, հանգեցնում է աղքատության մակարդակի անկման, և հակառակը: Սակայն 2016–2018 թվականներին գրանցվել է միգրացիայի և աղքատության միաժամանակյա անկում:

Աշխատանքային եկամուտները բնակչության եկամուտների հիմնական աղբյուրն են: Աղքատության մակարդակը, ինչպես նաև եկամուտների անհավասարության ինդիքը պայմանավորված են բնակչության գործազրկության մակարդակով: Ուստի, գործազրկության մակարդակի աճը մեծացնում է միգրացիոն հակումները, հատկապես՝ երիտասարդության շրջանում: 2013 թվականին գործազրկության մակարդակը 16.18%-ից բարձրացել է՝ 2015 թվականին հասնելով 18.26%-ի, 2016–2017 թվականներին փոքր-ինչ նվազել է, իսկ հետո՝ մինչև 2021 թվականը, նվազել է զգալիորեն՝ հասնելով 10.01%-ի (գծապատկեր 2.6):

⁸⁴ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-դեկտեմբերին (2008–2022):



Գծապատկեր 2.6

Գործազրկության մակարդակը և 15–34 տարեկան էմիգրանտների թվաքանակը ՀՀ-ում, 2013–2021 թթ.⁸⁵

Ուսումնասիրվող ժամանակահատվածում գործազրկության մակարդակը ՀՀ-ում առավելագույն արժեքն ունեցել է 2015 թվականին՝ 18.26%, իսկ նվազագույն արժեքը՝ 2021 թվականին՝ 10.01%:


2016–2018 թվականներին միգրացիայի և աղքատության միաժամանակյա անկումը կարելի է բացատրել հենց գործազրկության մակարդակի անկումով:

Ե՛վ միգրացիայի, և՛ գործազրկության մակարդակի աճը 2013–2015 թվականներին ցույց է տալիս, որ զբաղվածության մարտահրավերները եղել են երիտասարդների արտագաղթի շարժիչ գործոնը: 2018–2021 թվականներին գործազրկության մակարդակի նվազման միտումն ուղեկցվել է միգրացիայի նվազմամբ: Սակայն երիտասարդների էմիգրացիա – գործազրկության մակարդակ ուղղակի կապը բավականին թույլ է արտահայտված, քանի որ դիտարկվող ժամանակահատվածում այլ գործոններն առավել զգալի դերակատարում են ունեցել:

Բնակչության զբաղվածության և միգրացիայի կապն ուսումնասիրելիս շատ կարևոր է հաշվի առնել նաև աշխատավարձերի մակարդակը: Աշխատավարձը կարող է դիտարկվել իբրև անհատի տնտեսական բարեկեցության անմիջական ցուցիչներից մեկը: Առավել բարձր աշխատավարձի և սոցիալական վիճակի բարելավման ձգտումը ևս էմիգրացիոն որոշումների հիմք է: Ուսումնասիրվող ողջ ժամանակահատվածում միջին անվանական աշխատավարձն աճել է՝ 2013 թվականի 146524 դրամից 2021 թվականին հասնելով 204048 դրամի: Միջին աշխատավարձի աճի ամենաբարձր տեմպը գրանցվել է 2014 թվականին՝ 8.23%, իսկ ամենացածրը՝ 2016 թվականին՝ 1.65% (գծապատկեր 2.7): Միջին աշխատավարձի և երիտասարդների էմի-

⁸⁵ Տե՛ս նույն աղբյուրը:

գրացիայի տեմպերի միջև հակադարձ կապ է գրանցվել միայն համավարակի տարում, այն դեպքում, երբ դիտարկվող ժամանակահատվածում, միջին աշխատավարձի որոշակի աճին զուգընթաց, երիտասարդ միգրանտների թվաքանակը նույնպես աճել է: Սա փաստում է, որ, ինչպես մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի, այնպես էլ միջին աշխատավարձի պարագայում, միգրացիայի վրա կարճաժամկետ ազդեցությունը բավականին թույլ է: Մյուս կողմից՝ անվանական վարձատրության աճից զատ, կարևոր են գնաճն ու իրական վարձատրության փոփոխությունները: Բացի այդ, երիտասարդների էմիգրացիայի որոշումները պայմանավորված են նաև ընդունող երկրում ակնկալվող իրական վարձատրության և սեփական երկրում ստացվող փաստացի վարձատրության տարբերություններով և աշխատանքային այլ պայմաններով ու կարիերայի հեռանկարներով: Այսինքն՝ երիտասարդը, ձգտելով նույն աշխատանքի դիմաց ավելի մեծ աշխատանքային եկամուտների, արտագաղթում է ավելի զարգացած երկրներ:



Գծապատկեր 2.7


Միջին ամսական անվանական աշխատավարձը և 15-34 տարեկան էմիգրանտների թվաքանակը ՀՀ-ում, 2013-2021 թթ.⁸⁶

Գյուղատնտեսությունը շատ երկրներում, ինչպես Հայաստանում, շարունակում է մնալ բնակչության եկամուտների ստացման և զբաղվածության ապահովման հիմնական ոլորտը: Այս ոլորտի զարգացումը հատկապես կարևոր է գյուղական բնակավայրերում երիտասարդների միգրացիոն հակումների ձևավորման առումով: Գյուղատնտեսության ոլորտում տնտեսական անկումները և աճերը մեծապես կարող են ազդել գյուղական բնակչության ֆինանսական կայունության վրա, իսկ ֆինանսական կայունությունը, ինչպես արդեն նշվել է, բնակչության միգրացիոն հակումների վրա ազդող կարևոր գործոն է:

⁸⁶ Տե՛ս նույն աղբյուրը:

Գյուղատնտեսության ոլորտում ստեղծված համախառն ներքին արդյունքը ուսումնասիրվող ժամանակահատվածում տատանողական բնույթ է կրել, մասնավորապես՝ 2014–2016 թվականներին նվազել է՝ 839821.1 միլիոն դրամից հասնելով 830553.4 միլիոն դրամի (գծապատկեր 2.8): Այնուհետև՝ մինչև 2018 թվականը, աճել է՝ հասնելով 838913.8 միլիոն դրամի:

2018–2020 թվականներին գյուղատնտեսության ոլորտը կտրուկ՝ 16.3%-ով անկում է գրանցել, 2021 թվականին գյուղատնտեսական արտադրանքի 12.8%-ով աճը թույլ է տվել ստանալ 791691.8 միլիոն դրամի հասնող արդյունք:



Գծապատկեր 2.8

Գյուղատնտեսության ոլորտում համախառն ներքին արդյունքը և 15–34 տարեկան էմիգրանտների թվաքանակը ՀՀ-ում, 2013-2021 թթ.⁸⁷


Կարծում ենք՝ գյուղատնտեսության ոլորտի կայուն աճը կարող է զսպող գործոն լինել ինչպես իմիգրացիայի, այնպես էլ էմիգրացիայի առումով: Այս դիտարկումն արտացոլված է նաև գծապատկեր 2.8-ում, ըստ որի՝ 2014–2016 թվականներին գյուղատնտեսության ոլորտի նվազումը զուգորդվել է երիտասարդների շրջանում էմիգրացիայի աճով, իսկ 2016–2018 թվականներին գյուղատնտեսության ոլորտի որոշակի աճը զուգորդվել է երիտասարդների շրջանում միգրացիայի նվազմամբ: 2020 թվականին անուղղակի կապի խզումը պայմանավորված է COVID-19 համավարակի սահմանափակումներով:

Ինչպես նշվեց վերևում, կրթությունը և մարդկային կապիտալի զարգացումը ևս առանցքային դեր ունեն երիտասարդների միգրացիոն որոշումների վրա: Շրջանավարտները կարող են ձևավորել կարիերայի աճի այնպիսի նոր ձգտումներ, որոնք գերազանցում են տեղական միջավայրում առկա հնարավորությունները: Եվ սեփական երկրում բարձր որակավորում ունեցող

⁸⁷ Տե՛ս նույն աղբյուրը:

մասնագետների համար համապատասխան միջավայր չստեղծվելը դառնում է երիտասարդների միգրացիայի, այս դեպքում՝ «ուղեղների արտահոսքի» պատճառ:

Ոստիմաստիքով ժամանակահատվածում ՀՀ-ում բարձրագույն կրթություն ունեցող բնակչության թվի և միգրացիայի դինամիկայի միտումները, առանձին տարիներին, նույնական չեն (գծապատկեր 2.9):



Գծապատկեր 2.9


Բարձրագույն կրթություն ունեցող բնակչության թվաքանակը և 15–34 տարեկան էմիգրանտների թվաքանակը ՀՀ-ում, 2013–2021 թթ.⁸⁸

Այսպես՝ եթե 2013–2014 թվականներին բարձրագույն կրթություն ունեցող բնակչության թվաքանակի աճն ուղեկցվել է միգրացիայի աճով, ապա 2014–2018 թվականներին բարձրագույն կրթություն ունեցող բնակչության թվաքանակի աճը երիտասարդների միգրացիայի տեմպերը թուլացրել է: 2019 թվականից հետո նույն միտումը պահպանվել է, սակայն ակնհայտ այն փաստի արձանագրմամբ, որ 2020 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, երիտասարդ էմիգրանտների թիվը էականորեն՝ 58.6 տոկոսով նվազել է: Այսինքն՝ բարձրագույն կրթություն ունեցող անձանց թվաքանակի աճը չի ուղեկցվել երիտասարդ էմիգրանտների թվի աճով: 2021 թվականին դարձյալ նկատելի են բարձրագույն կրթություն ունեցող անձանց և էմիգրանտների թվաքանակի նույնական միտումներ:

Տարբեր հեղինակների կատարած հետազոտությունների վերլուծությունները փաստում են միգրացիայի և արտերկրից ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների միջև ուղղակի կապի և առաջնային փոխառնչու-

⁸⁸ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Աշխատանքի շուկան Հայաստանում (2013–2021):

թյան մասին^{89,90}: Այսպես՝ ֆիզիկական անձանց կողմից ՀՀ ուղարկված դրամական փոխանցումները 2013–2016 թվականներին նվազել են՝ 2159.6 միլիոն ԱՄՆ դոլարից հասնելով 1330.1 միլիոն ԱՄՆ դոլարի (գծապատկեր 2.10):



Գծապատկեր 2.10

Դեպի ՀՀ օտարերկրյա դրամական փոխանցումները և 15–34 տարեկան էմիգրանտների թվաքանակը ՀՀ-ում, 2013–2021 թթ.⁹¹

2016–2019 թվականներին գրանցվել է աճ, որը կազմել է 1489.5 միլիոն ԱՄՆ դոլար, այնուհետև, համավարակով պայմանավորված, տնտեսական անկումների հետևանքով 2020 թվականին դրամական փոխանցումների ծավալը կտրուկ նվազել է: 2021 թվականին դրամական փոխանցումների աճի տեմպը վերականգնվել է՝ հասնելով 1559.2 միլիոն ԱՄՆ դոլարի:

Միգրացիոն հոսքերի վրա դրամական փոխանցումների ազդեցությունը միանշանակ գնահատականի չի կարող արժանանալ, քանի որ, մի կողմից, երբ միգրացիոն հոսքերն ավելանում են, ապա ավելի մեծ է հավանականությունը, որ դրամական հոսքերի ծավալն ավելի կմեծանա, սակայն, մյուս կողմից, ինչպես ցույց են տալիս Հերերայի և Սահնի ուսումնասիրությունները⁹², ընտանիքի մեկ անդամի արտագաղթած լինելու հանգամանքը մեծացնում է հավանականությունը, որ ընտանիքի վերամիավորման նպատակով մյուս անդամները նույնպես կարտագաղթեն: Հետևաբար, երբ էմիգրանտների

⁸⁹ Տե՛ս **Garip F.**, An Integrated Analysis of Migration and Remittances: Modeling Migration as a Mechanism for Selection. Population Research and Policy Review. Volume 31, 2012, էջ 637-663, [Doi: 10.1007/s11113-012-9246-5](https://doi.org/10.1007/s11113-012-9246-5)

⁹⁰ Տե՛ս **Cohen J. H.**, Migration, Remittances, and Household Strategies. Annual Review of Anthropology. Vol. 40, 2011, էջ 103-114, <https://www.annualreviews.org/doi/full/10.1146/annurev-an40>

⁹¹ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ կայքէջ, Վիճակագրություն, Արտաքին հատվածի վիճակագրություն, Դեպի ՀՀ դրամական փոխանցումներն ըստ վճարային հաշվեկշռի (2013–2021):

⁹² Տե՛ս **Herrera C. & David Sahn D.**, Determinants of internal migration among Senegalese youth. New York, Cornell University, 2013, էջ 20-22, https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2229584

թվաքանակն ավելանում է, կա նաև իրական հավանականություն, որ որոշ դեպքերում դա նաև ընտանիքների վերամիավորման արդյունքում է տեղի ունենում: Այս պարագայում էմիգրացիայի աճը կարող է ուղեկցվել օտարերկրյա դրամական փոխանցումների համապատասխանաբար նվազմամբ: Կարծում ենք՝ գծապատկեր 10-ում արձանագրված հակասական միտումները կարելի է բացատրել նաև այդ հիմնավորմամբ:

Անփոփեղով կարելի է եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետությունում երիտասարդների էմիգրացիայի վրա ազդող գործոնները, հիմնականում, ունեն փոխկապակցված բնույթ, սակայն, COVID-19 համավարակի, քառօրյա և քառասունչորսօրյա պատերազմների հետևանքներով պայմանավորված, երիտասարդների էմիգրացիայի և ընտրված մակրոտնտեսական մի շարք ցուցանիշների դինամիկայի փոխառնչությունները դրսևորել են հակադարձ միտումներ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում երիտասարդների շրջանում եկամուտների անհավասարությունը էմիգրացիայի վրա ազդող առաջնային և հիմնական գործոնն է: Հետևաբար՝ եկամուտների արդար բաշխումը, ցածր եկամուտներ ունեցող երիտասարդների և նրանց ընտանիքների եկամուտների առաջանցիկ, կայուն աճի ապահովումը կարող են էական դրական ազդեցություն ունենալ էմիգրացիոն ճնշումները զսպելու և երիտասարդների շրջանում էմիգրացիոն հակումները նվազեցնելու առումներով:

Երիտասարդների էմիգրացիայի վրա շոշափելի ազդեցություն ունեցող գործոններից են գործազրկության մակարդակը, միջին և նվազագույն աշխատավարձերի ճեղքվածքի մեծացումը, մեկ շնչին բաժին ընկնող եկամուտը:

Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի և երիտասարդների էմիգրացիայի հետ դրա փոխազդեցության վերլուծությունը փաստում է, որ միայն տնտեսական աճը բավարար չէ էմիգրացիոն հակումները նվազեցնելու համար: Դա պետք է ուղեկցվի կենսամակարդակի և հավասար հնարավորությունների իրական բարելավմամբ:

Համակողմանի վերլուծություն իրականացնելու նպատակով սույն հետազոտության շրջանակներում կարևորվել է նաև երիտասարդների էմիգրացիայի միտումների և շարժառիթների, տարածքային անհամաչափությունների և առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

2.2

ՀՀ-ում երիտասարդների միգրացիայի և ժողովրդագրական իրավիճակի տարածքային անհամաչափությունները և միտումները

Ժողովրդագրական իրավիճակի տարածքային անհամամասնությունները գնահատելու նպատակով ուսումնասիրվել և ըստ ՀՀ մարզերի ու Երևան քաղաքի համադրաբար վերլուծվել են ժողովրդագրական հիմնական ցուցանիշները:

Այսպես՝ աղյուսակ 2.4-ում ներկայացված են ՀՀ մարզերի ծնելիության ցուցանիշի միտումները՝ համապատասխան գունանշմամբ: Ըստ աղյուսակի տվյալների՝ ծնելիության աճի տեմպն ունի նվազման միտում: Եթե ուսումնասիրվող ժամանակաշրջանի սկզբում ծնելիության աճի տեմպի վատագույն արժեքը 0.95 էր, ապա ժամանակաշրջանի վերջում 0.86 էր: Փաստորեն, ծնելիության աճի տեմպն անկում է ապրել ժամանակաշրջանի սկզբի նկատմամբ 0.09-ով, մյուս կողմից՝ աճել է առավելագույն և նվազագույն արժեքների աճի տեմպերի միջև ճեղքվածքը:

Աղյուսակ 2.4

Ծնելիության աճի տեմպի տարածքային միտումները, 2013–2021 թթ.⁹³

Մարզ Տարի	2013/ 2012	2014/ 2013	2015/ 2014	2016/ 2015	2017/ 2016	2018/ 2017	2019/ 2018	2020/ 2019	2021/ 2020
ք. Երևան	0.99	1.05	0.99	0.96	0.94	0.98	0.98	1.17	0.86
Արագածոտնի	1.02	0.99	0.93	0.97	0.95	0.90	0.96	0.93	1.20
Արարատի	0.98	1.03	1.00	0.98	0.90	0.99	1.00	0.79	1.23
Արմավիրի	0.97	1.00	0.96	0.98	0.92	0.97	1.01	0.81	1.29
Գեղարքունիքի	1.00	0.97	1.03	0.96	0.95	0.94	0.98	0.95	1.06
Լոռու	0.95	1.06	0.92	0.98	0.92	0.89	1.04	1.01	1.00
Կոտայքի	1.00	1.04	0.95	0.97	0.92	0.98	0.97	0.91	1.17
Շիրակի	0.99	1.06	0.94	0.95	0.90	0.97	0.98	0.97	0.99
Սյունիքի	0.95	1.02	0.95	1.03	0.92	1.08	0.92	0.97	1.08
Վայոց ձորի	1.04	0.97	0.93	1.06	0.90	1.01	0.88	0.86	1.37
Տավուշի	0.97	1.00	0.95	0.99	0.99	0.93	1.03	0.89	1.10
Նվազագույն արժեք	0.95	0.97	0.92	0.95	0.90	0.89	0.88	0.79	0.86
Առավելագույն արժեք	1.04	1.06	1.03	1.06	0.99	1.08	1.04	1.17	1.37

Հետագուովող ժամանակաշրջանի վատագույն ցուցանիշը գրանցվել է 2020 թվականին Արարատի մարզում՝ 0.79, ըստ որի, 2020 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, Արարատի մարզում ծնվել են շուրջ 21%-ով

⁹³ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածուներ (2008–2022), <https://armstat.am/am/?nid=81&id=2535>

կան 699-ով ավելի քիչ թվով երեխաներ: Առավելագույն աճի տեմպը գրանցվել է 2021 թվականին Վայոց ձորի մարզում՝ 1.37, ըստ որի էլ 2021 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, Վայոց ձորում ծնվել են 37%-ով կան 160-ով ավելի երեխաներ:

Կարելի է արձանագրել, որ դիտարկվող ժամանակահատվածում, ըստ տարիների և ՀՀ մարզերի, ծնելիության ցուցանիշի տեմպը դրսևորել է էական շեղումներ, ինչը վկայում է տարածքային անհամահասնությունների բարձր մակարդակ ապահովող պայմանների մասին:

2013–2021 թվականներին մահացության աճի տեմպի տարածքային միտումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, հետազոտվող ժամանակաշրջանի ամենաբացասական ցուցանիշը 2020 թվականին գրանցվել է Վայոց ձորի մարզում՝ 1.53 (աղյուսակ 2.5): Այլ կերպ ասած՝ 2020 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, Վայոց ձորի մարզում մահացել է 53%-ով կան 251-ով ավելի մարդ:

2020 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, 44-օրյա պատերազմով և COVID-19 համավարակով պայմանավորված, ՀՀ ողջ տարածքում էապես աճել է մահացության ցուցանիշը: Ընդ որում, 2020 թվականին նվազագույն աճի տեմպը կազմել է 1.23, որը ևս էականորեն՝ շուրջ 43 տոկոսային կետով, բարձր է դիտարկվող ժամանակահատվածում արձանագրված մահացության նվազագույն տեմպից (2018 թվականին՝ 0.8):

Աղյուսակ 2.5

Մահացության աճի տեմպի տարածքային միտումները, 2013–2021 թթ.⁹⁴

Մարզ / Տարի	2013/ 2012	2014/ 2013	2015/ 2014	2016/ 2015	2017/ 2016	2018/ 2017	2019/ 2018	2020/ 2019	2021/ 2020
ք. Երևան	1.02	1.01	0.99	1.00	0.96	0.96	1.02	1.44	1.00
Արագածոտնի	0.93	1.00	1.01	0.98	1.03	0.97	1.01	1.31	0.91
Արարատի	0.99	1.03	0.99	1.08	0.93	0.97	0.99	1.41	0.89
Արմավիրի	0.93	1.09	0.99	1.01	1.01	0.90	1.03	1.42	0.89
Գեղարքունիքի	0.96	0.98	1.01	1.05	0.93	0.99	0.99	1.35	0.90
Լոռու	1.00	0.98	1.03	1.02	0.94	0.94	1.01	1.23	1.02
Կոտայքի	0.99	1.01	1.04	1.00	1.00	0.96	1.02	1.48	0.88
Շիրակի	0.94	1.07	0.97	1.00	0.96	0.94	1.03	1.25	0.97
Սյունիքի	0.99	0.99	1.02	1.06	0.94	0.92	1.01	1.45	0.88
Վայոց ձորի	0.93	1.06	1.10	0.94	1.04	0.80	1.12	1.53	0.84
Տավուշի	1.00	1.01	1.06	0.99	0.95	0.95	1.02	1.25	1.01
Նվազագույն արժեք	0.93	0.98	0.97	0.94	0.93	0.80	0.99	1.23	0.84
Առավելագույն արժեք	1.02	1.09	1.10	1.08	1.04	0.99	1.12	1.53	1.02

⁹⁴ Տե՛ս նույն աղբյուրը:

Ակնհայտ է, որ 0–15 և 63+ տարիքային խմբերի բնակչության թվաքանակի հարաբերությունը 15–63 տարիքի խմբի բնակչության թվաքանակին միջինում աճում է, քանի որ աշխատունակ տարիքի բնակչության թիվը կրճատվում է բոլոր մարզերում (աղյուսակ 2.6): Այս միտումը հանգեցնում է աշխատանքային տարիքի բնակչության բեռնվածության աճին: 2021 թվականին, 2013 թվականի համեմատությամբ, բեռնվածության առավելագույն արժեքն աճել է 4 տոկոսային կետով: Դիտարկվող ժամանակաշրջանի վատագույն ցուցանիշը գրանցվել է 2020 թվականին Լոռու մարզում՝ 0.62, ըստ որի, ոչ աշխատունակ տարիքի բնակչությունը կազմել է աշխատունակ տարիքի բնակչության 62%-ը:

Աղյուսակ 2.6

0–15 և 63+ տարիքային խմբերի և 15–63 տարիքային խմբի բնակչության թվաքանակների հարաբերության տարածքային միտումները, 2013–2021 թթ.⁹⁵

Մարզ	Տարի	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
ք. Երևան		0.47	0.51	0.53	0.55	0.57	0.59	0.61	0.62	0.60
Արագածոտնի		0.48	0.48	0.49	0.50	0.52	0.53	0.54	0.54	0.51
Արարատի		0.46	0.47	0.48	0.49	0.51	0.52	0.54	0.54	0.51
Արմավիրի		0.46	0.46	0.46	0.47	0.48	0.49	0.50	0.51	0.48
Գեղարքունիքի		0.47	0.47	0.47	0.48	0.49	0.50	0.51	0.51	0.49
Լոռու		0.51	0.54	0.55	0.57	0.59	0.60	0.61	0.62	0.58
Կոտայքի		0.46	0.48	0.50	0.51	0.52	0.54	0.55	0.55	0.53
Շիրակի		0.46	0.48	0.50	0.52	0.54	0.55	0.57	0.57	0.55
Սյունիքի		0.49	0.49	0.49	0.50	0.50	0.52	0.53	0.54	0.53
Վայոց ձորի		0.48	0.48	0.49	0.50	0.52	0.54	0.55	0.56	0.57
Տավուշի		0.56	0.55	0.56	0.56	0.57	0.58	0.59	0.59	0.56
Նվազագույն արժեք		0.46	0.46	0.46	0.47	0.48	0.49	0.50	0.51	0.48
Առավելագույն արժեք		0.56	0.55	0.56	0.57	0.59	0.60	0.61	0.62	0.60

Մարզերի բնակչության ընդհանուր թվաքանակում երիտասարդ միգրանտների թվաքանակի տեսակարար կշիռների ուսումնասիրությունը փաստում է, որ նշված ցուցանիշի առավելագույն արժեքը գրանցվել է 2016 թվականին Շիրակի մարզում՝ 4.5% (աղյուսակ 2.7): Մինչև 2020 թվականը երիտասարդ միգրանտների տեսակարար կշիռը մեծ էր Շիրակի, Լոռու, Արարատի մարզերում և Երևան քաղաքում: 2020–2021 թվականներին ցուցանիշը կայուն աճել է Սյունիքի մարզում, որը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է 44-օրյա պատերազմի փաստով: Վայոց ձորի մարզում, հետագույն վոլ ժամանակահատվածում, մշտապես դիտարկվել է երիտասարդ միգ-

⁹⁵ Տե՛ս նույն աղբյուրը:

րանտների բարձր տեսակարար կշիռ, որը հիմնականում, կարծում ենք, մարզի բնակչության միջին հանրապետականից ցածր եկամուտներ ունենալու հետևանքն է: Առավել ազդեցացված պատկեր ստանալու համար ՀՀ մարզերը դասակարգվել են ժողովրդագրական չորս ցուցանիշների հիման վրա՝ ծնելիության տեմպ, մահացության տեմպ, բեռնվածության գործակից, բնակչության ընդհանուր թվաքանակում երիտասարդ միգրանտների թվաքանակի տեսակարար կշիռ:

Աղյուսակ 2.7

Երիտասարդ միգրանտների և բնակչություն ընդհանուր թվաքանակների հարաբերության տարածքային միտումներ, 2013–2021 թթ.^{96,97}

Մարզ	Տարի	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
ք. Երևան		2.0%	2.1%	3.0%	3.2%	2.9%	2.6%	3.1%	1.6%	2.5%
Արագածոտնի		1.4%	2.3%	3.2%	3.1%	3.5%	3.9%	2.8%	1.4%	1.2%
Արարատի		1.5%	2.0%	2.7%	2.5%	2.7%	3.1%	2.8%	1.5%	2.3%
Արմավիրի		1.2%	1.5%	1.8%	2.6%	2.6%	2.6%	2.2%	1.4%	2.0%
Գեղարքունիքի		1.8%	1.8%	2.2%	2.5%	2.7%	2.9%	2.4%	1.8%	1.7%
Լոռու		3.3%	2.9%	3.2%	4.2%	4.0%	2.2%	2.9%	1.2%	1.4%
Կոտայքի		1.8%	2.0%	2.5%	3.1%	3.3%	2.2%	2.8%	1.3%	2.4%
Շիրակի		2.3%	2.4%	3.4%	4.5%	4.2%	3.1%	3.2%	1.8%	2.0%
Սյունիքի		1.5%	2.2%	1.8%	2.3%	2.3%	2.9%	2.3%	3.8%	3.4%
Վայոց ձորի		2.4%	1.7%	2.6%	3.0%	3.5%	4.4%	3.9%	2.5%	4.4%
Տավուշի		1.3%	2.3%	2.7%	2.8%	2.6%	3.0%	2.4%	2.3%	1.8%
Նվազագույն արժեք		1.2%	1.5%	1.8%	2.3%	2.3%	2.2%	2.2%	1.2%	1.2%
Առավելագույն արժեք		3.3%	2.9%	3.4%	4.5%	4.2%	4.4%	3.9%	3.8%	4.4%

Դասակարգման համար բոլոր չորս ցուցանիշների արժեքները բերվել են [1–5] միջակայք, որտեղ 1-ը բնութագրում է ժողովրդագրական ամենադրական իրավիճակը, իսկ 5-ը՝ ամենաբացասականը: Հետևաբար՝ հավաքական գնահատման պարագայում յուրաքանչյուր մարզի ժողովրդագրական իրավիճակի գնահատման միավորը կարող է լինել [4–20] միջակայքում, որտեղ 4-ին մոտ միավոր հավաքած մարզը ամենալավ ժողովրդագրական իրավիճակն ունեցող, իսկ 20-ին մոտ միավոր հավաքածը ժողովրդագրական ամենավատ իրավիճակն ունեցող մարզն է: Միջակայքի բերելու համար կիրառվել է նորմավորման հետևյալ բանաձևը.

$$a + \frac{X_i - X_{min}}{X_{max} - X_{min}} \times (b - a), \tag{3}$$

որտեղ a-ն և b-ն բերման միջակայքի ծայրակետերն են:

⁹⁶ Աղյուսակը՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Միգրացիոն պատկերը Հայաստանի Հանրապետությունում, 2013–2021, https://www.armstat.am/file/article/migration_profile_am_2021.pdf

⁹⁷ Աղյուսակը՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով (2008–2022):

Միայն ծնելիության ցուցանիշն է ուղիղ համեմատական ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը, ուստի այդ ցուցանիշը գնահատման կիրառվող միջակայքում տեղավորելու համար հակադարձվել է 1/ցուցանիշ բանաձևով: Արդյունքում ստացվում է, որ ամենաբարձր ծնելիություն ունեցող մարզը կատանա ամենափոքր միավորը, ինչը համապատասխանում է դասակարգման տրամաբանությանը և մեթոդաբանությանը: ՀՀ-ում նվազագույն միավորը 6-ն է, այսինքն՝ ժողովրդագրական ամենալավ իրավիճակին համապատասխանող գնահատման միավորը հավասար է 6-ի (աղյուսակ 2.8):

Աղյուսակ 2.8

Ժողովրդագրական իրավիճակի ազդեցացված գնահատման ցուցանիշի ցուցանիշները, 2013–2021 թթ.⁹⁸

Մարզ	Տարի	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
ք. Երևան		12	10	12	14	12	13	12	11	17
Արագածոտնի		6	11	14	11	13	16	9	9	7
Արարատի		10	9	9	12	10	12	8	12	8
Արմավիրի		7	11	7	9	10	9	6	10	7
Գեղարքունիքի		9	9	7	11	7	12	6	9	8
Լոռու		17	11	17	16	15	15	10	9	14
Կոտայքի		10	9	12	12	13	11	10	11	9
Շիրակի		9	11	13	16	15	13	11	9	13
Սյունիքի		12	10	10	9	8	9	8	14	11
Վայոց ձորի		7	12	15	7	16	11	18	15	11
Տավուշի		14	14	16	13	9	15	9	12	13

Փաստացի՝ որևէ մարզում, դիտարկվող ժամանակահատվածում, բոլոր ցուցանիշների գծով առավելագույն դրական ժողովրդագրական պատկեր չի արձանագրվել: Առավելագույն միավորը 18-ն է, որն արձանագրվել է 2019 թվականին Վայոց ձորի մարզում: Այսինքն՝ բոլոր 4 ցուցանիշներով բացարձակ վատ ժողովրդագրական իրավիճակ ևս չի արձանագրվել: Առավելագույնը 3 ցուցանիշի գծով են ստացվել գնահատման վատագույն միավորներ:

Այնուհետև դասակարգելով ամեն տարին վատից լավը և միջինը հաշվելով՝ ստացվել է հետևյալ պատկերը (աղյուսակ 2.9): Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ մարզերի ժողովրդագրական իրավիճակի ամփոփ գնահատման միջին տարեկան արդյունքները դասակարգվել են բացասականից դրական, և ստացվել է մարզերի ժողովրդագրական իրավիճակի վարկանշավորումը:


⁹⁸ Հաշվարկել են հեղինակները: Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածուներ (2008–2022), <https://armstat.am/am/?nid=81&id=2535>

Աղյուսակ 2.9

ՀՀ մնարզերի ժողովրդագրական իրավիճակի վարկանշավորումը, 2013–2021 թթ.⁹⁹

Գիրք	Մարզ
1	Լոռու
2	Տավուշի
3	ք. Երևան
4	Շիրակի մարզ
5	Վայոց ձորի
6	Արագածոտնի
7	Կոտայքի
8	Արարատի
9	Սյունիքի
10	Արմավիրի
11	Գեղարքունիքի

Ակնհայտ է, որ հետագուտվող ժամանակահատվածում վերը դիտարկված ցուցանիշների միտումների հիման վրա հաշվարկված միավորներով միջինում ամենավատ ժողովրդագրական իրավիճակն արձանագրած եռյակում են Լոռին, Տավուշը, Երևանը: Միջինում ամենալավ ժողովրդագրական իրավիճակն արձանագրած եռյակում են Գեղարքունիքի, Արմավիրի, Սյունիքի մարզերը:



Գծապատկեր 2.11

Երիտասարդների էմիգրացիան՝ ըստ ՀՀ մնարզերի և Երևան քաղաքի, 2013–2021 թթ.¹⁰⁰

⁹⁹ Հաշվարկել են հեղինակները: Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածուներ (2008–2022), <https://armstat.am/am/?nid=81&id=2535>

¹⁰⁰ Հաշվարկել են հեղինակները՝ ըստ նույն աղբյուրի:

Երիտասարդների էմիգրացիայի տարածքային միտումները ներկայացված են գծապատկեր 2.11-ում: Երիտասարդների էմիգրացիայի բացարձակ ցուցանիշը Երևանում պատիկներով գերազանցում է մարզերի համապատասխան ցուցանիշները: Եվ սա բնական է՝ հաշվի առնելով բնակչության ընդհանուր թվաքանակների տարբերությունները:

Դիտարկվող ժամանակահատվածում երիտասարդ միգրանտների թվաքանակների տեսակարար կշիռների՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2013–2021 թվականներին միջինում բոլոր միգրանտների 35%-ը Երևանից է, 10%-ը՝ Շիրակի մարզից, 9%-ը՝ Արարատի մարզից և այլն (աղյուսակ 2.10):

Երիտասարդների էմիգրացիայի տարածքային կառուցվածքը¹⁰¹ | Աղյուսակ 2.10

Մարզ	Միջին տև. կշիռ
ք. Երևան	35%
Արագածոտնի	5%
Արարատի	9%
Արմավիրի	8%
Գեղարքունիքի	7%
Լոռու	8%
Կոտայքի	8%
Շիրակի	10%
Սյունիքի	5%
Վայոց ձորի	2%
Տավուշի	4%
Ընդամենը	100%

Ըստ մարզերի և Երևան քաղաքի երիտասարդների միգրացիայի տարեկան շրջայական հավելանի տեմպերի ուսումնասիրությունը ցույց է տալիս. չնայած 2020 թվականին COVID-19 համաճարակի սահմանափակումներով պայմանավորված՝ երիտասարդների ընդհանուր միգրացիայի մակարդակը կտրուկ նվազել է, սակայն Սյունիքի մարզում նկատվում է միգրացիոն հոսքի էական հավելան՝ 62% (44-օրյա պատերազմի էֆեկտ) (աղյուսակ 2.11):

Ընդհանուր առմամբ, 2020 թվականի շուկայի հետևանքով երիտասարդների միգրացիոն արտահոսքը 2019 թվականի համեմատությամբ նվազել է 41%-ով, սակայն, որպես հիմք ընդունելով վերջին տարիների բացասական հավելանի տեմպերի մակարդակները, կարող ենք մոտավոր գնահատել շուկայի ազդեցությունը, ըստ որի՝ իրական նվազման հավանական արժեքը կկազմեր մոտ 10%: 2013–2017 թվականներին երիտասարդ միգրանտների միջին տարեկան թիվը կազմել է 26,839, իսկ 2018–2021 թվականներին՝ 19,840, նվազումը շուրջ 35 տոկոս է:

¹⁰¹ Հաշվարկել են հեղինակները՝ ըստ նույն աղբյուրի:

Աղյուսակ 2.11

Երիտասարդների միգրացիայի հավելանքի տեմպեր ըստ մարզերի, 2013–2021 թթ.¹⁰²

Մարզ / Տարի	2014/ 2013	2015/ 2014	2016/ 2015	2017/ 2016	2018/ 2017	2019/ 2018	2020/ 2019	2021/ 2020
Ք. Երևան	0%	39%	5%	-13%	-14%	17%	-48%	48%
Արագածոտնի	61%	37%	-8%	11%	7%	-31%	-50%	-15%
Արարատի	31%	34%	-8%	3%	11%	-12%	-48%	51%
Արմավիրի	22%	12%	45%	-2%	-4%	-15%	-40%	47%
Գեղարքունիքի	-3%	22%	12%	3%	6%	-18%	-28%	-5%
Լոռու	-17%	7%	27%	-8%	-46%	28%	-58%	10%
Կոտայքի	9%	18%	20%	3%	-35%	28%	-56%	88%
Շիրակի	1%	39%	26%	-11%	-28%	-1%	-45%	12%
Սյունիքի	45%	-19%	20%	0%	22%	-25%	62%	-14%
Վայոց ձորի	-28%	44%	14%	12%	21%	-15%	-37%	67%
Տավուշի	75%	15%	1%	-10%	14%	-24%	-5%	-22%
Ընդամենը	7%	27%	12%	-6%	-12%	0%	-41%	29%

Ստորև բերված են երիտասարդների միգրացիա - բնակության պայմաններ, երիտասարդների միգրացիա - եկամուտ կոռեկցիայի գործակիցները՝ ըստ մարզերի, Երևան քաղաքի և ընդհանուր՝ հանրապետական մակարդակում: «Բնակության պայմաններ» ցուցանիշը որակական գնահատական է. 1-5 սանդղակով գնահատված է ապրելու պայմաններից գոհունակությունը, ընդ որում, 1-ը՝ շատ լավ, 5-ը՝ շատ վատ (աղյուսակ 2.12):

Աղյուսակ 2.12

Երիտասարդների միգրացիայի, բնակության պայմանների և եկամուտների միջև կոռեկցիան՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի¹⁰³


Մարզ	Բնակության պայմաններ (15)	Եկամուտ
Ք. Երևան	0.60	(0.28)
Արագածոտնի	0.85	(0.47)
Արարատի	0.39	(0.38)
Արմավիրի	0.46	(0.18)
Գեղարքունիքի	0.54	(0.57)
Լոռու	0.91	(0.85)
Կոտայքի	0.47	(0.38)
Շիրակի	0.33	(0.78)
Սյունիքի	(0.29)	0.81
Վայոց ձորի	(0.20)	0.08
Տավուշի	0.59	(0.27)
ՀՀ	0.68	(0.52)

¹⁰² Հաշվարկել են հեղինակները՝ ըստ նույն աղբյուրի:

¹⁰³ Հաշվարկել են հեղինակները: Աղբյուրը՝ ՀՀ Վ.Կ կայքէջ, Միկրոտվյալներ, Տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության անվանագրքով տվյալների բազա, <https://armstat.am/en/?nid=205>

Նշված ցուցանիշը վերցվել է ՀՀ ՎԿ պաշտոնական կայքում տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտության հարցաշարից, ագրեգացվել ըստ մարզերի և Երևան քաղաքի՝ կշռվել է պատասխանն ընտրած մարդկանց քանակով: Նույն հետազոտությունից վերցված է եկամուտ ցուցանիշը, որը ներկայացնում է ամսական ընդհանուր եկամուտը: Այս ցուցանիշը ևս կշռվել է մարդկանց քանակով՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի ագրեգացված ցուցանիշն ունենալու համար¹⁰⁴: Աղյուսակից երևում է, որ, ըստ մարզերի, ցուցանիշների նկատմամբ զգայունությունը տարբեր է: Նկատենք նաև, որ առկա են ոչ օրինաչափ կապեր առանձին մարզերի մակարդակով, մասնավորապես՝ Սյունիքի և Վայոց ձորի դեպքում:

Սահմանամերձ լինելու հանգամանքով պայմանավորված՝ երիտասարդների միգրացիայի մասին քանակական գնահատական ունենալու նպատակով դիտարկվել է սահմանամերձ և ոչ սահմանամերձ մարզերի երիտասարդ միգրանտների և բնակչության ընդհանուր թվաքանակների հարաբերության շարժընթացը (գծապատկեր 2.12):



Գծապատկեր 2.12

Սահմանամերձ և ոչ սահմանամերձ մարզերում երիտասարդ միգրանտների և բնակչության ընդհանուր թվաքանակների հարաբերության դինամիկան, 2013–2021 թթ.¹⁰⁵

2020 թվականին, 44-օրյա պատերազմով պայմանավորված, սահմանամերձ մարզերից երիտասարդների միգրացիայի աճի հետևանքով աճել է նաև միգրացիա–բնակչության թվաքանակ միջին հարաբերակցությունը՝ ոչ

¹⁰⁴ Տե՛ս նույն աղբյուրը:

¹⁰⁵ Հաշվարկել են հեղինակները: Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածուներ (2008–2022), <https://armstat.am/?nid=81&jid=2535>

սահմանամերձ մարզերի համանուն միջին ցուցանիշի համեմատությամբ: Այսպիսով՝ ծնելիության տեսանկյունից ամենավատ ժամանակաշրջանը ՀՀ-ում 2020 թվականն էր. արձանագրվել է հետազոտվող ժամանակաշրջանում ամենաքիչ ծնվածների թիվը և ամենափոքր աճի տեմպը: Նույնը կարելի է պնդել մահացության ցուցանիշի առումով: 2020 թվականին արձանագրվել է հետազոտվող ժամանակաշրջանում ամենաշատ մահացածների թիվը և մահացության ամենաբարձր աճի տեմպը: Նշված հանգամանքների հիմքում գլխավոր պատճառը 2020 թվականի 44-օրյա պատերազմն է: Մյուս կողմից՝ երիտասարդների միգրացիա/բնակչություն ցուցանիշը և առանձին վերցրած երիտասարդների միգրացիայի բացարձակ ցուցանիշը 2020 թվականին ցածր արժեք են ունեցել՝ պայմանավորված է քովիդային սահմանափակումներով և երիտասարդների մահացության հանգամանքով:

Իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երիտասարդների միգրացիան ունի նաև տարածքային անհամաչափություններ: Մասնավորապես՝ կիրառված ցուցանիշների ամփոփ գնահատման և ՀՀ մարզերի ու Երևան քաղաքի դասակարգման (վարկանշավորման) արդյունքում պարզվում է, որ հետազոտվող ժամանակաշրջանում միջինում ամենավատ ժողովրդագրական իրավիճակն արձանագրվել է Լոռու մարզում, իսկ հարաբերականորեն ամենալավը՝ Գեղարքունիքի մարզում, որոնց միջև առկա է էական տարբերություն: Մարզերի անհամաչափ զարգացումը և սահմանամերձ լինելու հանգամանքը էականորեն ազդում են միգրացիոն գործընթացների վրա: Օրինակ՝ նշված հանգամանքը Սյունիքի և Վայոց ձորի մարզերում առաջնային է համարվում բնակչության եկամուտները և բնակչության պայմանները բնութագրող գործոններից:

Երիտասարդների էմիգրացիան, աշխատաշուկան ու կրթական մակարդակը բնութագրող հիմնական գործոնների և մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների փոխազդեցության տատանողական, ոչ կայուն բնույթը առավել դժվարացնում են միգրացիայի առաջացման հիմնապատճառների վերլուծությունն ու գնահատումը:

Հետևաբար՝ երիտասարդների շրջանում արտագաղթի միագործոն վերլուծությունը չի կարող որոշակի առարկայական պատկեր ապահովել: Ուստի, երիտասարդների միգրացիայի պատճառների ամբողջական վերհանումը պահանջում է բազմագործոն մոդելային վերլուծություն:

2.3

Երիտասարդ միգրանտների արտագաղթի ինտենսիվության, մակրոտնտեսական և ժողովրդագրական հիմնական ցուցանիշների հետ դրանց փոխառնչությունների գնահատումն ու կանխատեսումը

Երիտասարդների էմիգրացիայի ինտենսիվության և մակրոտնտեսական ցուցանիշների հետ կապի գնահատումը

Երիտասարդների էմիգրացիայի ինտենսիվությունը և մակրոտնտեսական ցուցանիշների հետ կապը ուսումնասիրելու և փոխառնչությունները գնահատելու նպատակով հաշվարկվել են համապատասխան կոռելյացիայի գործակիցները: Արդյունքները ամփոփ սերկայացված են աղյուսակ 2.13-ում:

Աղյուսակ 2.13

Երիտասարդների էմիգրացիայի և մակրոտնտեսական ցուցանիշների կոռելյացիոն մատրից¹⁰⁶

Կոռելյացիոն մատրից	Միգրացիա	Ջինիի գործակից	Գործազրկության մակարդակ	Մեկ շնչի հաշվով ՀՆԱ	Արքայության մակարդակ	Ծայր մեծ	Ոչ արքատ	Միջին աշխատավարձ	Նվազագույն աշխատավարձ	Միջին/Նվազագույն աշխատավարձ
Միգրացիա	1.0	0.8	0.6	(0.5)	(0.1)	0.1	0.1	(0.2)	(0.4)	0.6
Ջինիի գործակից	0.8	1.0	0.6	(0.5)	(0.1)	0.3	0.1	(0.5)	(0.7)	0.7
Գործազրկության մակարդակ	0.6	0.6	1.0	(0.9)	0.5	0.6	(0.5)	(0.7)	(0.7)	0.4
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ	(0.5)	(0.5)	(0.9)	1.0	(0.6)	(0.6)	0.6	0.7	0.6	(0.3)
Աղքատության մակարդակ	(0.1)	(0.1)	0.5	(0.6)	1.0	0.9	(1.0)	(0.6)	(0.5)	0.2
Ծայր աղքատ	0.1	0.3	0.6	(0.6)	0.9	1.0	(0.9)	(0.7)	(0.7)	0.5
Ոչ աղքատ	0.1	0.1	(0.5)	0.6	(1.0)	(0.9)	1.0	0.6	0.5	(0.2)
Միջին աշխատավարձ	(0.2)	(0.5)	(0.7)	0.7	(0.6)	(0.7)	0.6	1.0	0.9	(0.5)
Նվազագույն աշխատավարձ	(0.4)	(0.7)	(0.7)	0.6	(0.5)	(0.7)	0.5	0.9	1.0	(0.8)
Միջին/Նվազագույն աշխատավարձ	0.6	0.7	0.4	(0.3)	0.2	0.5	(0.2)	(0.5)	(0.8)	1.0

¹⁰⁶ Հաշվարկել են հեղինակները: Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածուներ (2008–2022), <https://armstat.am/am/?nid=81&jid=2535>, ՀՀ ՎԿ տվյալների բազաներ, <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb>, ՀԲ տվյալների բազա, <https://data.worldbank.org/country/armenia>

Այսպիսով՝ իրականացված ուսումնասիրությունների և վերլուծության ամփոփ արդյունքներով ստացվել են երիտասարդների էմիգրացիայի ինտենսիվության և մակրոտնտեսական ցուցանիշների կապի վերաբերյալ վիճակագրական հետևյալ գնահատումները՝

- միգրացիա - մեկ շնչի հաշվով ՀՆԱ հակադարձ կապ, այսինքն՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ աճը հանգեցնում է միգրացիայի կրճատման,
- միգրացիա - միջին աշխատավարձ հակադարձ կապ, սակայն էապես թույլ և ոչ նշանակալի,
- միգրացիա - նվազագույն աշխատավարձ հակադարձ, սակայն չափավոր կապ,
- միգրացիա - միջին և նվազագույն աշխատավարձերի հարաբերակցություն, առկա է ուղիղ և էական կապ, որը նշանակում է, որ միջին և նվազագույն աշխատավարձերի միջև ճեղքվածքի խորացումը հանգեցնում է միգրանտների թվի աճի,
- միգրացիա - Ջինիի գործակից, առկա է ուժգին և ուղղակի կապ, որը նշանակում է՝ եկամուտների անհավասարությունը և բևեռացումն էական նպաստող գործոն են երիտասարդների միգրացիայի համար,
- միգրացիա - աղքատության մակարդակ կապը նշանակալի չէ,
- միգրացիա - գործազրկության մակարդակ, առկա է ուղիղ կապ, որը նշանակում է՝ գործազրկության մակարդակի աճը հանգեցնում է երիտասարդների միգրացիայի աճի:

Աղյուսակ 2.13-ից երևում է, որ մակրոտնտեսական ցուցանիշների միջև առկա է մուլտիկոլինեարություն՝ ռեգրեսորների միջև ուժեղ կոռելյացիա: Հետևաբար՝ մոդելավորման համար անհրաժեշտ է կիրառել Ֆիշերի գործոնների անջատման-միակցման չափանիշը: Մասնավորապես՝ առաջին քայլով վերցվել է բացատրվող փոփոխականի (երիտասարդների միգրացիա) հետ ամենամեծ կոռելյացիայի գործակիցն ունեցող փոփոխականը: Հաջորդիվ իրականացվել է ռեգրեսիոն վերլուծություն: Այնուհետև մոդելում ներմուծվել է հաջորդ փոփոխականը, և եթե ավելացված փոփոխականը ունեցել է էական բացատրողականություն, թողնվել է ռեգրեսիոն հավասարման մեջ, հակառակ դեպքում՝ հանվել է: Վերլուծվել են կիրառված բոլոր փոփոխականները: Ստացված մոդելում ամենամեծ կոռելյացիան ունի Ջինիի գործակիցը: Հետևաբար՝ ստացված մոդելում առաջինը թողնվել է այդ փոփոխականը: Հետևելով Ֆիշերի չափանիշին և կատարված գնահատումների ամփոփ արդյունքներին՝ կարելի է եզրակացնել, որ, Ջինիի գործակից գատ, դիտարկված մյուս մակրոտնտեսական ցուցանիշների (փոփոխականների) ներմուծումը մոդել նպատակահարմար չէ, քանի որ դա ոչ միայն չի ավելացնում բացատրողականությունը, այլև ավելացված նոր ցուցանիշը (գործոնը), առանձին վերցված, նշանակալի չէ Ստյուդենտի չափանիշով:

Իրականացված վերլուծությունների ամփոփ արդյունքներով ստացվել է երիտասարդների էմիգրացիայի և մակրոտնտեսական ցուցանիշների կապ

արտահայտող հետևյալ մոդելը¹⁰⁷

$$M = c_1 + c_2 * G + \varepsilon, \tag{1}$$

որտեղ՝

- M** - երիտասարդների միգրացիայի թիվն է,
- G** - Ջինիի գործակիցն է,
- c₁, c₂** - մոդելի անհայտ պարամետրերն են,
- ε** - մոդելի սխալն է:

Երիտասարդների էմիգրացիայի և մակրոտնտեսական ցուցանիշների հետ կապի մոդելի գնահատման արդյունքները և կանխատեսումները

Աղյուսակ 2.14-ից երևում է, որ եկամուտների անհավասարության (Ջինիի գործակից) գործոնով բացատրվում է երիտասարդների միգրացիայի ցուցանիշի փոփոխության մոտ 70%-ը: Ընդ որում՝ մոդելը, ընդհանուր առմամբ և ըստ առանձին ռեգրեսորի, նշանակալի է: Մեկ միավոր եկամուտների անհավասարության աճը հանգեցնում է 1,370 միավոր միգրացիայի ցուցանիշի աճի: Առանցակախության գործակիցը կազմում է 1.9, որը նշանակում է՝ Ջինիի գործակցի 1%-ով աճը հանգեցնում է երիտասարդների միգրացիայի թվի 1.9%-ով աճի:

Աղյուսակ 2.14

«Միգրացիա–եկամուտների անհավասարություն» մոդելի գնահատման արդյունքները¹⁰⁸

SUMMARY OUTPUT

<i>Regression Statistics</i>					
Multiple R		0.83			
R Square		0.69			
Adjusted R Square		0.65			
<i>ANOVA</i>					
	<i>df</i>	<i>SS</i>	<i>MS</i>	<i>F</i>	<i>Significance F</i>
Regression	1.00	128,044,589	128,044,589	15.94	0.01
Residual	7.00	56,222,886	8,031,841		
Total	8.00	184,267,475			
	<i>Coefficients</i>	<i>Standard Error</i>	<i>t Stat</i>	<i>P-value</i>	
Intercept	(20,110.34)	10,639	(1.89)	0.1006	
Ginnie	1,369.72	343	3.99	0.0052	

¹⁰⁷ Մարդահամարի տվյալների ճշգրտման արդյունքում 2012 թվականին երիտասարդների միգրացիայի թվի դինամիկայի շարքի արժեքն անկանոն մեծ է (outlier): Այս խնդիրը լուծելու նպատակով ներմուծել ենք բինար փոփոխականը, որի շարքն ընդունել է «1»՝ 2012 թվականին, իսկ մնացած տարիներին՝ «0»: Այդպիսով՝ 2012 թվականի արժեքը ճշգրտվել է «բինար=1» փոփոխականի գործակցի արժեքով: Ըստ հրապարակված պաշտոնական վիճակագրության՝ մոդելում կիրառված ցուցանիշներն ավարտվում են 2021 թվականով:

¹⁰⁸ Հաշվարկել են հեղինակները:

Մոդելի մնացորդների վերլուծությունը

Առաջին քայլով ստուգվել է մոդելի մնացորդներում ավտոկոռելյա-
ցիան: Դրա համար հաշվարկվել է մոդելի մնացորդների ավտոկոռելյացիայի
գործակիցը, որը կազմում է 0.028: Հետևաբար՝ ավտոկոռելյացիայի գործա-
կիցը նշանակալի չէ, ինչը վկայում է ավտոկոռելյացիայի բացակայության
մասին: Հաշվարկվել է նաև Դարբին Ուաթսոնի չափանիշը, որը կազմել է
1.79: Վերջինս գտնվում է ավտոկոռելյացիայի բացակայության մասին վար-
կածի համար ընդունելի միջակայքում: Հետևաբար՝ կարելի է պնդել, որ մո-
դելի մնացորդներում ավտոկոռելյացիան բացակայում է:

Մոդելի հետերոսկեդաստիկության բացակայության մասին վարկածը
ստուգվել է Գոլդֆելդ - Քվանդոտի թեստով: Մասնավորապես՝ Ֆիշերի վիճա-
կագրությունը կազմել է 2.18, իսկ Ֆիշերի կրիտիկական արժեքը՝ 10.1, որը մեծ
է Ֆիշերի վիճակագրությունից: Հետևաբար՝ հետերոսկեդաստիկության բա-
ցակայության մասին վարկածն ընդունվում է:

Մոդելի սխալների նորմալ բաշխվածության մասին ենթադրությունը
ստուգվել է RS չափանիշով: RS վիճակագրության արժեքը կազմել է 2.8, որը
գտնվում է 2.7–3.7 միջակայքում: Հետևաբար՝ մոդելի սխալները նորմալ են
բաշխված: Փորձ է արվել նաև մոդելի սխալները մոդելավորելու ARIMA
պրոցեսով: Այս նպատակով R ծրագրային փաթեթում ներմուծվել է հետևյալ
կոդը՝

```
> miggin<-auto.arima(tstotmigr,xreg=tsginne)
> migginsum<-summary(miggin)
> migginsum:
```

```
Արդյունքում ստացվել է հետևյալ պատասխանը109՝
Series: tstotmigr
Regression with ARIMA(0,0,0) errors
```

```
Coefficients:
xreg
723.8027
s.e. 33.0182
```

```
sigma^2 = 10615442: log likelihood = -85.04
AIC=174.08 AICc=176.08 BIC=174.48:
```

Փաստորեն, ստացվել է պատասխան՝ ARIMA (0,0,0): Այսինքն՝ մոդելի
մնացորդներում ARIMA պրոցեսը բացակայում է, ինչը նշանակում է չկա ավ-
տոկոռելյացիա, և ինտեգրման կարգը զրո է:

Հետևաբար՝ մոդելի մնացորդները ստացիոնար են:

Հատկանշական է նաև, որ ռեգրեսորի գործակիցն այս մոդելում ավելի
փոքր է, քանի որ ծրագրային փաթեթում կա ARIMA հիմքով պրոցեսի օպտի-

¹⁰⁹ R ծրագրային փաթեթից ավտոմատ մշակված պատասխան:

մալացման ալգորիթմ և լավագույնս մոտարկման ալգորիթմ, որի արդյունքում՝ հաստատունը դուրս է եկել:

Այդպիսով՝ մոդելի բացատրողականությունը հասցվել է շուրջ 86%-ի, որը համարվում է բավականին բարձր դրական արդյունք:

Մոդելի կանխատեսման արդյունքները

Երկրորդ քայլով մոդելավորվել է երիտասարդների էմիգրացիան՝ ժամանակային շարքերի մոտեցումով, մասնավորապես՝ ARIMA պրոցեսով: Դրա համար ներմուծվել է R ծրագրային փաթեթի հետևյալ կոդը՝

```
> migrar<-auto.arima(ts_data1)
> migsum<-summary(migrar)
> migrar:
```

Արդյունքում ստացվել է հետևյալ պատասխանը¹¹⁰

```
Series: ts_data1
ARIMA(1,2,0)
Coefficients:
ar1
-0.7854
s.e. 0.1880
```

sigma² = 20073113: log likelihood = -157.19
AIC=318.37 AICc=319.29 BIC=319.92:

Ստացված արդյունքների մեկնաբանում

Ավտոմատ մոտարկման համակարգն ընտրել է ARIMA (1,2,0) մոդելը՝ երիտասարդների էմիգրացիայի ժամանակային շարքի մոդելավորման համար: Ստացվում է՝ էմիգրացիայի շարքն ունի ինտեգրման 2-րդ կարգ, և դրանում առկա է առաջին կարգի ավտոռեգրեսիոն պրոցես՝ ar1, որի գործակցի նշանը բացասական է և հավասար է՝ -0.7854: Դա նշանակում է, որ երիտասարդների էմիգրացիայի տեմպն ունի դանդաղման միտում:


Մոդելի մնացորդների ստուգման համար ներմուծվել է հետևյալ կոդը՝

```
> checkresiduals(migrar):
Ստացվել է հետևյալ պատասխանը111
```

```
Ljung-Box test
data: Residuals from ARIMA(1,2,0)
Q* = 3.6556, df = 3, p-value = 0.3011
Model df: 1. Total lags used: 4
```

¹¹⁰ R ծրագրային փաթեթից ավտոմատ մշակված պատասխան:

¹¹¹ R ծրագրային փաթեթից ավտոմատ մշակված պատասխան:



Ստացված պատասխանը փաստում է, որ մոդելի մնացորդները նման են «սպիտակ աղմուկ» պրոցեսին:

Այսինքն՝ մոդելը լավ է մոտարկված, և **թույլատրելի է կատարել կանխատեսումներ**: Այդ նպատակով ներմուծվել է հետևյալ կոդը՝

```
> migrforc<-forecast(migrar)
> migrforc
> plot(migrforc)
> autoplot(migrar):
```

(9)


Ամփոփում. ստացված մոդելի կիրառմամբ ՀՀ-ում երիտասարդ էմիգրանտների թվաքանակի կանխատեսումները հաջորդ երկու ժամանակահատվածների համար ունեն թվային հետևյալ պատկերը. 2022 թվականին՝ 11,036 երիտասարդ միգրանտ, 2023 թվականին՝ 12,698 երիտասարդ միգրանտ (աղյուսակ 2.15):

Աղյուսակ 2.15
Երիտասարդների էմիգրացիայի ARIMA մոդելի կանխատեսումները¹¹²

Տարի	Երիտասարդ միգրանտների թիվ
2022	11,035
2023	12,698
2024	7,657
2025	7,881

Համաձայն մոդելի կանխատեսումների՝ 2023 թվականից հետո՝ հաջորդ ժամանակահատվածներում, երիտասարդ միգրանտների կանխատեսվող թիվն ունի կայուն նվազման միտում, որի արդյունքում 2025 թվականի համար կանխատեսվող ցուցանիշը կազմում է 7881 մարդ (աղյուսակ 2.15 և գծապատկեր 2.13):

¹¹² R ծրագրային փաթեթից ավտոմատ մշակված պատասխան:




Գծապատկեր 2.13

Երիտասարդների էմիգրացիայի մոդելի կանխատեսումները¹¹³

Մոդելի մնացորդների ստացիոնարության ստուգման արդյունքները ներկայացվել են գծապատկեր 2.14-ում: Այսպիսով՝ ՀՀ-ից երիտասարդների էմիգրացիայի մոդելավորման նպատակով կիրառվել է երկու տիպի մոտեցում՝ գործոնային վերլուծություն և տեխնիկական:

Գործոնային վերլուծության նպատակով առանձնացվել են միգրացիան պայմանավորող հիմնական մակրոտնտեսական գործոնները: Կատարվել է կոռելյացիոն վերլուծություն՝ գործոնների ընտրության համար: Այնուհետև մոդելավորվել է երիտասարդների միգրացիան ռեգրեսիոն մոդելի միջոցով:



Գծապատկեր 2.14

Մոդելի մնացորդների սրացիոնարության ստուգման արդյունքները¹¹⁴

¹¹³ R ծրագրային փաթեթից ավտոմատ մշակված պատասխան:

Արդյունքային մոդելն արտացոլում է Ջինիի գործակցի և երիտասարդների միգրացիայի միջև կապը: Մասնավորապես՝ կապն ուժեղ է, դրական է, զգայունության գործակիցը մեծ է մեկից՝ 1.9: Նշված արդյունքը փաստում է, որ Ջինիի գործակիցը ՀՀ-ում երիտասարդների էմիգրացիայի գործընթացում էական գործոն է: Տեխնիկական վերլուծությունում, որպես գործիք, օգտագործվել է ARIMA դասի մոդելը, որը ստացվել է R ծրագրային փաթեթում առկա ավտոմատացված մոդելի գործարկմամբ:

Մոդելավորման ամփոփ արդյունքներով ստացվել է, որ ՀՀ երիտասարդների էմիգրացիան առաջին կարգի ավտոռեգրեսիոն պրոցես է պարունակում: Այն է՝ նախորդ ժամանակաշրջանի արժեքն ազդեցություն ունի, էապես պայմանավորում է ներկա արժեքը, ինչը տրամաբանական է սոցիալական գործընթացների պարագայում և կարելի է բացատրել «սերունդների կապ»¹⁴ լազով: Այսինքն՝ նախորդ ժամանակաշրջանում ընտանիքի անդամի միգրացիան գործնականում խթանում է հաջորդ ժամանակաշրջանում ընտանիքի մյուս անդամների միգրացիան:

¹⁴ R ծրագրային փաթեթից ավտոմատ մշակված պատասխան:

**ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ
ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ԲԱԶՄԱՄԱԿԱՐԴԱԿ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

3.1 Երիտասարդների միգրացիայի ընտրանքային հետազոտության արդյունքների վերլուծություն

Հետազոտության մեթոդաբանությունը: Որպես ընտրանքային հետազոտության դիտարկման օբյեկտ կամ գլխավոր համակցություն հանդես է եկել 15–34 տարեկան երիտասարդ տարիքի բնակչությունը՝ անկախ արտագաղթի նպատակներից, իսկ որպես ընտրանքային հետազոտության դիտարկման միավոր հաստատվել է ոչ թե անհատը (մարդը, բնակիչը կամ քաղաքացին), այլ տնային տնտեսությունը, որից հնարավոր է ստանալ քիչ թե շատ հավաստի ու ամբողջական տեղեկատվություն ոչ միայն հարցվողի տնտեսության բացակա անդամների, այլև լրիվ կազմով բացակա անմիջական հարևան ընտանիքների (տնային տնտեսությունների) մասին:

Հարկ է փաստել, որ երիտասարդության տարիքային խմբի համընդհանուր ճանաչված միջազգային սահմանում գոյություն չունի: Այնուամենայնիվ, վիճակագրական նպատակներով, Միավորված ազգերի կազմակերպությունը, չհակասելով անդամ պետությունների կողմից տրված ցանկացած այլ սահմանմանը, «երիտասարդ» է անվանում 15–24 տարեկան անձանց¹¹⁵: Միևնույն ժամանակ, Աշխատանքի միջազգային կազմակերպությունը երիտասարդության աշխատաշուկայի տվյալների վիճակագրությունում (ILOSTAT) ներառում է 15–29 տարեկան երիտասարդների աշխատաշուկայի ցուցանիշները¹¹⁶: Աշխատանքի միջազգային կազմակերպությունը կարևորում է, որ որոշ երիտասարդներ ավելի երկար են մնում կրթության ոլորտում և, հետևաբար, ոլորտն ավելի շատ տեղեկություններ է պարունակում ավարտելուց հետո երիտասարդների զբաղվածության փորձի մասին:

Հաշվի առնելով, որ 30–34 տարիքային խմբի անձինք ևս, որոնք, անցնելով կրթական մի շարք աստիճաններով, ձեռք են բերում ավելի բարձր որակավորում, պահպանում են իրենց բարձր տնտեսական ակտիվությունը և դրանով իսկ ավելի բարձր միգրացիոն մոբիլությունը, հասարակության ժողովրդագրական իրավիճակի բարելավման գործում ունեն նշանակալի ներուժ, սույն հետազոտությունում, «երիտասարդ աշխատուժ» հասկացությամբ, նպատակային ենք համարել ներառել նաև վերոհիշյալ տարիքային խումբը:

¹¹⁵ St'u OOH. Существует ли определение молодежи? <http://surl.li/mudill>
¹¹⁶ St'u International Labour Organization, ILOSTAT, Statistics on Youth.<http://surl.li/mudio>

Ընտրանքի ձևավորման մեթոդաբանության մշակման ժամանակ հաշվի չի առնվել բնակչության՝ ըստ որոշ հատկանիշների (բնակչության վայր, տնային տնտեսության մեծություն և այլն) բավարար ներկայացուցչություն (ռեպրեզենտատիվություն) ապահովելու պահանջը: Ելնելով վերոնշյալից՝ մշակվել և կիրառվել է ընտրանքի իրականացման յուրահատուկ մեթոդական համակարգ:

ՀՀ մարզերից և Երևան քաղաքից երիտասարդ՝ 15–34 տարեկան միգրանտների մասին հարցումներ իրականացնելու առումով առավել հավաստի ներկայացուցչություն ապահովելու համար հիմք է ընդունվել ՀՀ տնային տնտեսությունների հաշվարկային թիվը, որը 760.000 է: Միգրանտների ընդհանուր թվաքանակի մասին վիճակագրությունը ներկայացվում է անձնագրային բաժինների տվյալների հիման վրա, ըստ որի, վերջին՝ 2022 թ. վիճակագրական ժողովածուում 2021 թ. դրությամբ հաշվառումից հանված անձանց թվաքանակը 38.932 է¹¹⁷: Հաշվառումից հանված 15–34 տարեկանների ընդհանուր թիվը 2021 թ. կազմել է 17698 մարդ կամ ընդհանուր միգրանտների 45.5%-ը¹¹⁸: Ելնելով վերոնշյալից, ըստ Երևան քաղաքի և մարզերի, հարցումներն անցկացվել են նշված տարիքային խմբի փաստացի միգրացվածների մինչև 10%-ի շրջանակներում՝ ակնկալելով արդյունքների բավարար հավաստիություն: Դա հիմք կհանդիսանա ստացված արդյունքների հիման վրա հետագայում միգրացիայի կանխարգելման արդյունավետ միջոցառումներ մշակելու համար: Մարզերից միգրանտների թվաքանակի ընտրությունը կատարվել է նույն մեթոդաբանությամբ՝ հիմք ընդունելով փաստացի միգրացվածների թվաքանակը: Տնային տնտեսությունների համապարփակ (կոմպակտ) բնակեցման սկզբունքի վրա հիմնված կլաստերային ընտրությունը հնարավորություն է ընձեռել նվազագույնի հասցնելու ինչպես հարցվողների, այնպես էլ էմիգրացվածների մասով ուսումնասիրվող բոլոր սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների կառուցվածքային գնահատականների ներկայացուցչական սխալները:

Այսպիսով՝ հետազոտական խումբը հարցումներ իրականացրել է 1706՝ 15–34 տարեկան միգրանտների շրջանակներում: Ընտրանքում ընդգրկված և հարցված 1475 տնային տնտեսությունների բաշխումն ըստ միգրացվածների թվաքանակի ներկայացված է աղյուսակ 3.1-ում:

¹¹⁷ Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Միգրացիա, էջ 142, https://www.armstat.am/file/article/demog_2022_7.pdf

¹¹⁸ Հաշվարկվել է ըստ վերոբերյալ աղբյուրում ներկայացված տվյալների:

Աղյուսակ 3.1

Հարցված տնային տնտեսությունների բաշխումն ըստ միգրացվածների թվաքանակի*

Հարցված տնային տնտեսությունների քանակը	Մեկ առանձին տնային տնտեսությունից միգրացվածների թիվը
1279	1 միգրանտ
172	2 միգրանտ
15	3 միգրանտ
8	4 և ավելի
Ընդամենը՝ 1475	

Տվյալների հավաքագրումն իրականացվել է բավականին սեղմ ժամկետներում (2023 թ. հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը): Ստրատափների կամ հաշվային տեղամասերի ընտրությունը կատարվել է՝ հաշվի առնելով հարցազրուցավարների համար յուրաքանչյուր մարզի քաղաքային կամ գյուղական համայնքներում տվյալ հարցում քիչ թե շատ տեղեկացված աջակից ունենալու փաստը, որը պայմանավորված է եղել հետազոտական խմբի ֆինանսական ծախսեր կատարելու սահմանափակ հնարավորությամբ:

Հարցումներն իրականացնելու համար մշակվել է հարցաթերթ՝ ուղղված ՀՀ-ից էմիգրացված երիտասարդների սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական բնութագրիչների բացահայտմանը (հավելված 1): Այն բաղկացած է հետևյալ հարցերից. տնային տնտեսության բացակա անդամների բնակության վայրը, սեռը, տարիքը, տնային տնտեսությունից 15–34 տարեկան անձանց թիվը, կրթական մակարդակը և մասնագիտությունը, մեկնման տարեթիվը և մեկնման երկիրը, մեկնման վայրում զբաղվածության կարգավիճակը և գործունեության ոլորտը, մեկնման հիմունքը, նպատակը և դրդապատճառները, Հայաստան վերադառնալու մտադրությունը, հայրենիքում գտնվող բարեկամներին էմիգրանտների կողմից դրամական փոխանցումների փաստը և դրամական փոխանցումների բաժնեմասը՝ դա ստացող տնային տնտեսությունների համախառն եկամտի մեջ դրանց տեսակարար կշիռը:

Հարցվածների բնակության վայրը: Երևան քաղաքից և մարզերից ներգրավված 1706 հարցվածների բաշխումը ներկայացված է ստորև բերված աղյուսակում (աղյուսակ 3.2):

Հարցումներն իրականացվել են ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում: Յուրաքանչյուր հաշվային տեղամասում առանձնացվել է դիտարկման ենթարկվող տնային տնտեսությունների կլաստերը (փունջը): Տվյալ հետազոտությունում որպես կլաստեր (կամ սերիա) Երևան քաղաքում ծառայել են որոշակի շենքեր, իսկ մարզերում՝ որոշակի համայնքներ:

* Հարցազրույցների անցկացմանը մեծապես աջակցել են մարզերի մի շարք վարչական շրջանների և գյուղական համայնքների ղեկավարներ, աշխատակազմի այլ պատասխանատուներ, որոնց էլ հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:


Աղյուսակ 3.2

Հարցվածների բաշխումն ըստ Երևան քաղաքի և մարզերի

Մարզ	Հարցվողների բաշխումն ըստ մարզերի	Հարցվողների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ
Ք. Երևան	543	31.8
Արագածոտնի	75	4.4
Արարատի	139	8.1
Արմավիրի	146	8.6
Գեղարքունիքի	121	7.1
Լոռու	133	7.8
Կոտայքի	149	8.7
Շիրակի	124	7.3
Սյունիքի	116	6.8
Վայոց ձորի	62	3.6
Տավուշի	98	5.7

Սեռը: Գծապատկեր 3.1-ում արտացոլված է մարզերում միգրանտների թվաքանակն ըստ սեռերի: Ակնհայտ է, որ միգրանտների թվաքանակում գերակշռում են արական սեռի ներկայացուցիչները: Այսպես՝ Արագածոտնի մարզում միգրանտների 73.3%-ը տղամարդիկ են, իսկ 26.7%-ը՝ կանայք, Արմավիրի մարզում 66.4%-ը տղամարդիկ են, 33.6%-ը՝ կանայք, Լոռու մարզում 78.2%-ը տղամարդիկ են, 21.8%-ը՝ կանայք:


Երևանում և Գեղարքունիքի մարզում միգրանտ տղամարդկանց և կանանց հարաբերակցությունն արտահայտում է կանանց միգրացիայի ակտիվության աճ: Եթե Երևանում միգրանտ են տղամարդկանց 54.3%-ը և կանանց 45.7%-ը, ապա Գեղարքունիքում այդ ցուցանիշներն են, համապատասխանաբար՝ 52.9% և 47.1%:



Գծապատկեր 3.1

Լմիգրանտների բաշխումն ըստ սեռերի՝ մարզերում և Երևան քաղաքում, %


Տարիքը: Ըստ առանձին տարիքային խմբերի և սեռերի էմիգրացվածների բաժնետմասերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երիտասարդների բոլոր տարիքային խմբերում դիտվում է կանանց և տղամարդկանց համամասնության գրեթե նույնական պատկեր (զծապատկեր 3.2): 25–29 տարիքային խմբում սեռերի համամասնության փոքր-ինչ փոփոխությունը կարելի է բացատրել տարիքային այդ խմբի երիտասարդների էմիգրացիոն ակտիվության աճով՝ պայմանավորված կրթական, մասնագիտական հմտություններ ձեռք բերելու, ինքնուրույն որոշումներ կայացնելու և այլ հանգամանքներով:



Գծապատկեր 3.2

Միգրանտների բաշխումն ըստ փարիքի և սեռի (%)

Կրթությունը: Վերոհիշյալ պնդումը կարելի է հիմնավորել միգրանտների կրթական մակարդակների մասին հարցման արդյունքներով, ըստ որոնց՝ բարձրագույն կրթություն ունեն միգրանտ կանանց 56.03%-ը, իսկ տղամարդկանց 33.74%-ը (զծապատկեր 3.3):




Գծապատկեր 3.3

Միգրանտների բաշխումն ըստ կրթական մակարդակի և սեռի (%)

Գյուղական բնակավայրերից միգրացված արական սեռի աշխատանքային միգրանտները (Արարատի, Արմավիրի, Տավուշի, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերից), որպես կանոն, ունեն միջնակարգ կամ հիմնական կրթություն: Բարձրագույն կրթություն ունի միգրանտ կանանց 56.03%-ը, իսկ տղամարդկանց 33.47%-ը, այն դեպքում երբ ընդհանուր միջնակարգ կրթություն ստացած տղամարդկանց թիվը 2.1 անգամ գերազանցում է կանանց թվին:

Ուսումնասիրվող տարիներին միգրացիայի ամենամոբիլ խմբերը բարձրագույն և ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողներն են, նրանց բաժնեմասը, հարցվող միգրանտների ընդհանուր թվաքանակի համեմատությամբ, ուսումնասիրվող բոլոր տարիներին եղել է ամենաբարձրը, իսկ մինչև 2018 թ-ը և 2022 թ-ին այդ ցուցանիշը կազմել է 43.8% (գծապատկեր 3.4):




Գծապատկեր 3.4

Միգրանտների կրթական մակարդակներն ուսումնասիրվող ստանձին փայրիներին (%)

Հաջորդ ամենամեծ բաժինը միջնակարգ կրթություն ունեցողներին է (27.9-36.3%): Չնայած հարցվածների ընդհանուր թվում 2023 թ. ութ ամիսների ընթացքում Հայաստանից միգրացվել է 114 մարդ, որը կազմում է ընդհանուրի 6.7%-ը (գծապատկեր 3.5), այնուհանդերձ, ուսումնասիրվող բոլոր տարիների համեմատությամբ միգրանտների կրթական մակարդակներում տեղ գտած օրինաչափություններն այստեղ ևս պահպանվել են: 2023 թ., նախորդ տարիների համեմատությամբ, որոշակիորեն աճել է ընդհանուր հիմնական, թերի բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողների տեսակարար կշիռը:

Էմիգրացիայի տարին և աշխարհագրական ուղղությունները: Մինչև և ներառյալ 2018 թ. մեկնածների մասին տվյալների ստացումը սահմանափակվել է 2015–2018 թթ. շրջանակներում: Դրանով է պայմանավորված մին-

չև 2018 թվականը, մնացած տարիների համեմատությամբ, միգրանտների ավելի բարձր տեսակարար կշիռը, որը կազմել է 37.7% (գծապատկեր 3.5): Այդ մոտեցումը հստակեցրել և պարզեցրել է 15–34 տարեկան էմիգրանտների մասին հարցվողներից առավել ամբողջական տեղեկություն ստանալու գործընթացը:




Գծապատկեր 3.5

Միգրանտների թվաքանակը ուսումնասիրվող առանձին տարիներին (%)

Համավարակի տարում՝ 2020 թ., նկատելի է արտագաղթի որոշակի անկում, սակայն հետագա տարիներին ակնհայտ է նաև որոշակի աճը: Այնուհանդերձ, համայնքների ղեկավարները պնդում են, որ վերջին տարիներին էմիգրացիոն հոսքերը էապես նվազել են, ավելի ակնառու է իմիգրացիան:

Հայաստանից միգրանտների մեծաթիվ հոսքերը, ուսումնասիրվող բոլոր տարիներին, ուղղված են եղել դեպի Ռուսաստան (գծապատկեր 3.6): Այդ ուղղությամբ միգրացիային բնորոշ է սեզոնային աշխատանքը, այն դեպքում, երբ ԱՄՆ և Եվրամիության երկրներ մեկնողներն ավելի երկարատև աշխատանքային միգրանտներն են, մշտական բնակության կամ ընտանիքի վերամիավորման, կրթության նպատակներով մեկնածները: Այսպես՝ ԱՄՆ մեկնած 313 միգրանտների 42.0%-ն ունի մշտական բնակություն հաստատելու մտադրություն, 14.0%-ը՝ ընտանիքի վերամիավորման ցանկություն, աշխատանքի և կրթության նպատակով մեկնածները կազմում են համապատասխանաբար՝ 31.0% և 10.5%: ԵՄ երկրներում հանգրվանած 345 միգրանտների 30.7%-ն ունի աշխատանքի, 26.1%-ը՝ կրթության, իսկ 19.7%-ը և 15.1%-ը՝ մշտական բնակության և ընտանիքի վերամիավորման նպատակ: Ռուսաստան միգրացված 950 ՀՀ քաղաքացիների 66.7%-ի նպատակը աշխատանքն է, 16.3%-ն ունի մշտական բնակության, իսկ 14.5%-ը՝ ընտանիքի վերամիավորման նպատակ: Կրթության նպատակով այստեղ միգրացվածները կազմում են ընդհանուրի ընդամենը 1.6%-ը:



Գծապատկեր 3.6

Միգրացիայի աշխարհագրական ուղղություններն ըստ տասնձին փարիների

Ըստ Երևան քաղաքի և մարզերի՝ 15–34 տարիքային խմբի միգրացիայի աշխարհագրական ուղղությունների ուսումնասիրությունը փաստում է, որ Երևանից միգրացվածների գերակշիռ մասը կամ 37.5%-ը հանգրվանել է ԱՄՆ-ում, ԵՄ անդամ երկրներ է մեկնել նրանց մոտ 35%-ը: Երևանից միգրացվածների համար հաջորդ նախընտրելի ռեցիպիենտ երկիրը Ռուսաստանն է (աղյուսակ 3.3):


Ինչ վերաբերում է մարզերին, ապա միգրանտները նախապատվությունը տալիս են ավելի մոտ տարածաշրջաններ մեկնելուն, որը, այս պարագայում, Ռուսաստանն է, որտեղ հանգրվանել է հարցվածների ընդհանուր թվի 55.8%-ը: Մարզերից ԱՄՆ և ԵՄ երկրներ մեկնածներն այստեղ ընդհանուր մեկնածների ընդհանուր թվի համապատասխանաբար 35.9%-ը և 44.9%-ն են կազմում:

Աղյուսակ 3.3

15–34 տարեկանների միգրացիայի աշխարհագրական ուղղություններն ըստ Երևան քաղաքի և մարզերի

Երկիր	Մարզ	Երևան	Արագածոտնի	Արարատի	Արմավիրի	Գեղարքունիքի	Լոռու	Կոտայքի	Շիրակի	Սյունիքի	Վայոց ձորի	Տավրշի	Քոչ հանուր
ԱՄՆ		204	4	20	28	3	8	10	11	17	7	1	313
ԱՊՀ երկրներ		6	0	3	0	0	2	1	2	1	0	0	15
Այլ երկրներ		11	0	3	1	4	1	0	5	5	3	2	35
Ավստրալիա		4	0	0	0	0	0	0	0	0	0	0	4
Եվրոպական միության անդամ երկրներ		190	13	23	46	19	13	8	15	6	6	6	345
Եվրոպական այլ երկրներ		13	0	2	0	3	3	0	0	5	1	0	27
Կանադա		11	0	0	2	2	0	0	1	1	0	0	17
Ռուսաստանի Դաշնություն		104	58	88	69	90	106	130	90	81	45	89	950
Ընդհանուր		543	75	139	146	121	133	149	124	116	62	98	1706


Միգրանտների զբաղվածության կարգավիճակը ժամանման երկրներում: Դիտարկվող ժամանակաշրջանում հարցվածների 53.5%-ը վարձու աշխատողներ են, ինքնազբաղված է 19.8%-ը, 4.3%-ը գործատու է, ովքեր ժամանման երկրներում ստեղծել են աշխատատեղեր շինարարության և առևտրի ոլորտներում (Ռուսաստան), տրանսպորտի և հասարակական սննդի ոլորտներում (ԵՄ երկրներ և ԱՄՆ): Կրթության նպատակով արտերկիր մեկնել է հարցվողների 10.4%-ը: Հարցման պահին մեր հայրենակիցների 12.0%-ը դեռևս աշխատանք չէր գտել (գծապատկեր 3.7):



Գծապատկեր 3.7

Միգրանտների զբաղվածության կարգավիճակը ժամանման երկրներում (%)

Ժամանան բոլոր երկրներում էմիգրանտների զգալի մասը վարձու աշխատողներ են (գծապատկեր 3.8):




Գծապատկեր 3.8

Միգրանտների զբաղվածության կարգավիճակն ըստ առաջին երկրների և փարաճաշոջանների (%)

Եթե Ռուսաստանի միգրացվածների 58.3%-ն է վարձու աշխատող, ապա ԱՄՆ-ում և ԵՄ երկրներում այդ ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 49.8% և 44.4%: Ավստրալիա մեկնած 4 հայրենակիցներից 2-ը սովորողներ են, մեկը՝ գործատու, մյուսը՝ ինքնագրադաված: Գործազրկության ամենացածր մակարդակը տեղ է գտել Եվրոպական այլ երկրներում և ՌԴ-ում: Ինքնագրադավածների տեսակարար կշիռը մեծ է Կանադա և Արևելքի երկրներ մեկնածների շրջանում, որը կազմել է համապատասխանաբար՝ 35.3% և 40.0%: ԵՄ երկրներ մեկնած երիտասարդների 25.8%-ի նպատակը մագիստրոսական և հետբուհական կրթություն ստանալն է, որոնք և հայտնել են նաև հայրենիք վերադառնալու մտադրության մասին:

Միգրանտների մասնագիտությունը: Ուսումնասիրվող տարիներին հարցվողների ընդհանուր թվում նշանակալի է տնտեսագետի, հաշվապահի, մանկավարժի, ճարտարագետի, իրավաբանի մասնագիտություններին տիրապետողների թիվը, միաժամանակ մեծ է որևէ մասնագիտության չտիրապետողների (32.2%) և չնշված այլ մասնագիտությունների տիրապետողների (34.1%) բաժինը (գծապատկեր 3.9):



Գծապատկեր 3.9

Միգրանտների մասնագիտությունը ուսումնասիրվող տարիներին (%)

«Այլ» մասնագիտությունները ներառում են հարյուրից ավելի բանվորական, տեխնիկական, մշակույթի և այլ ոլորտների մասնագիտություններ:

Էմիգրանտների զբաղվածությունն ըստ գործունեության ոլորտի: Տնտեսության տարբեր ոլորտներում միգրանտների զբաղվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին արտագաղթած մեր հայրենակիցների 94.3%-ը հանգրվանել է ԱՄՆ-ում, ԵՄ երկրներում և Ռուսաստանում: Ժամանան երկրներում, օրինակ՝ ԱՄՆ-ում, միգրանտների 34.5%-ը զբաղվածություն է գտել ծառայությունների (ներառյալ՝ սպասարկում) ոլորտում, տրանսպորտի բնագավառում (հիմնականում՝ որպես վարորդ) ներգրավված է միգրանտների 12.8%-ը (աղյուսակ 3.4): Այլ ոլորտներում զբաղվածները կազմում են ԱՄՆ մեկնածուների 34.5%-ը, ովքեր հիմնականում սովորողներ են, ծերերի, երեխաների խնամքի, տնային աշխատանքներում ներգրավված անձինք: ԵՄ անդամ երկրներ մեկնածուների գրեթե 49.0%-ը զբաղված է «այլ» ոլորտներում: Դրանք ընտանիքի վերամիավորման հիմքով մեկնածուներն են, որոնք խնամում են իրենց երեխաներին, սովորողներ են, ովքեր զբաղված են հետբուհական և մագիստրոսական կրթությամբ, նաև անձինք, ովքեր մեկնել են անօրինական հիմունքներով և տնային աշխատանքներում ներգրավված անձինք են:

ՌԴ մեկնածուները, որոնք հիմնականում աշխատանքային միգրանտներ են, ուսումնասիրվողների ընդհանուր թվի 55.7%-ն են կազմում: Այստեղ միգրանտների 31.8%-ը զբաղված է շինարարական աշխատանքներում, ծառայությունների ոլորտում ներգրավված է միգրանտների 20.2%-ը, առևտրում՝ 15.2%-ը, այլ աշխատանքներում զբաղվածների բաժինը հասնում է 17.8%-ի:

Մարզերից Ռուսաստան միգրացվածների վարքագծում նկատելի է միտում, որը կարելի է անվանել «կապակցված միգրացիա»: Այսպես՝ Բերդ խոշորացված համայնքում, Արմավիրի գյուղական որոշ համայնքներում կատարված հարցումները ցույց են տալիս, որ արտագնա աշխատանքի մեկնողների գերակշիռ մեծամասնությունը նման որոշում կայացնում է՝ օգտվելով իրենց հայրենակիցների նախնկինում ստեղծած բիզնեսների հնարավորություններից:

Աղյուսակ 3.4

Միգրանտների աշխատանքային զբաղվածությունը ժամանանա երկրում՝ ըստ տնտեսության ոլորտների

Երկիր Տնտեսության ոլորտ	Առևտուր	Արդյունաբերություն	Ծառայություններ (ներառյալ՝ սպասարկման ոլորտը)	Երևաբանականություն	Տրանսպորտ	Ֆինանսական (ներառյալ՝ բանկային համակարգ) համակարգ	Այլ	Ընդամենը
ԱՄՆ	25	11	108	11	40	10	108	313
ԱՊՀ այլ երկրներ	5	0	2	2	0	0	6	15
Այլ երկրներ	6	2	10	2	0	1	14	35
Ավստրալիա	1	0	1	0	0	0	2	4
Եվրոպական միության անդամ երկրներ	25	7	87	15	20	22	169	345
Եվրոպական այլ երկրներ	4	0	11	4	0	3	5	27
Կանադա	4	2	4	1	2	0	4	17
Ռուսաստանի Դաշնություն	144	34	192	302	98	11	169	950
Ընդամենը	214	56	415	337	160	47	477	1706

Ըստ առանձին մարզերի միգրանտների զբաղվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Երևանից մեկնածների ¼-ից ավելին աշխատանք է գտել ծառայությունների ոլորտում, այն դեպքում, երբ Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Սյունիքի մարզերից էմիգրացվածների մեծ մասը ներգրավված է շինարարության ոլորտում, Արմավիրի մարզից մեկնածների 30.1%-ը և Վայոց ձորից մեկնածների 45.2%-ը զբաղված են ծառայությունների և սպասարկման ոլորտում, Տավուշի մարզում գերակշռում են առևտրի ոլորտում զբաղվածները (աղյուսակ 3.5): Բոլոր մարզերում և Երևան քաղաքում բավականին բարձր է «այլ» զբաղվածություն ունեցող էմիգրանտների տեսակարար կշիռը: Այստեղ, որպես կանոն, ներառված են սովորողները, աշխատանքային տարիք չունեցող անձինք (15–18 տարեկան), ովքեր միգրացվել են ընտանիքի մեծահասակ անդամների հետ, առողջապահական, մշակույթի ոլորտների մասնագետները և այլն:


Աղյուսակ 3.5

ՀՀ մարզերից միգրացվածների գրադվածությունը՝ ըստ տարևույթյան ոլորտների

Մարզ / Ոլորտ (%)	Կրթության ոլորտ	Ծառայություններ (ներառյալ՝ սպասարկման ոլորտ)	Առևտուր	Տրանսպորտ	Էինսարքություն	Ֆինանսական (ներառյալ՝ բանկային) համակարգ	Այլ
Երևան	2.6	27.1	9.0	9.6	6.3	6.3	39.2
Արագածոտնի մարզ	8.0	21.3	13.3	2.7	30.7	0.0	24.0
Արարատի մարզ	5.0	24.5	10.8	0.7	33.1	0.7	15.8
Արմավիրի մարզ	1.4	30.1	15.1	6.2	20.5	1.4	25.3
Գեղարքունիքի մարզ	0.8	25.6	9.9	3.3	33.1	0.8	26.4
Լոռու մարզ	5.3	24.1	12.8	5.3	39.8	0.8	12.0
Կոտայքի մարզ	0.7	16.1	12.1	25.5	21.5	0.0	24.2
Շիրակի մարզ	2.4	16.9	9.7	5.6	19.4	3.2	42.7
Սյունիքի մարզ	3.4	18.1	21.6	12.1	25.0	0.0	19.8
Վայոց ձորի մարզ	4.8	45.2	6.5	9.7	16.1	6.5	11.3
Տավուշի մարզ	8.2	17.3	30.6	7.1	16.3	0.0	20.4

Միգրացիայի օրինականության հիմունքները: Դժվար է միանշանակ գնահատական տալ միգրացիայի օրինական կամ անօրինական ուղիներին, քանի որ մեկ երկրից այլ երկրներ մարդկանց մեկնումը տեղի ունի բացառապես օրինական հիմունքներով: Այլ խնդիր է ռեցիպիենտ երկրում մշտական կամ ժամանակավոր բնակություն հաստատելու օրինականացումը, հատկապես երբ դա վերաբերում է աշխատանքային միգրացիային: Այդ տեսանկյունից, կարծում ենք, նպատակահարմար է, հարցման արդյունքներով, օրինական միգրանտ համարել անհատական հրավերով, աշխատանքային պայմանագրով և բնակվելու իրավունքով մեկնածներին, իսկ անօրինական ենք դիտարկում տուրիստական հրավերով, անձնական նախաձեռնությամբ և այլ հիմունքներով մեկնածներին: Ըստ նշված դասակարգման՝ հարցված էմիգրանտներն առավելապես (89.5%-ը) արտագաղթել են օրինական հիմունքներով (զծապատկեր 3.10):

Նման իրավիճակը հիմնականում բացատրվում է դեպի Ռուսաստան և ԱՊՀ երկրներ միգրացիայի ավելի մեծ ծավալներով: Նշվածը առավել ակնհայտ է Վայոց ձորի և Տավուշի մարզերում, որտեղից էմիգրացիան տեղի է ունեցել բացառապես օրինական հիմունքներով, այն դեպքում, երբ Երևանից էմիգրացվածների 16.6%-ը, Արմավիրի մարզից էմիգրացվածների 23.3%-ը, Շիրակի մարզից՝ 9.7%-ը և Սյունիքի մարզից՝ 10.3%-ը անօրինական միգրանտներ են:



Գծապատկեր 3.10

Միգրանտների օրինականության հիմունքներն ըստ մարզերի և Երևան քաղաքի (%)

Միգրացիայի նպատակը: Ռուսաստանի Դաշնությանը բաժին է ընկնում ուսումնասիրվող տարիներին բոլոր ուղղություններով աշխատանքային միգրանտների հոսքերի 71.6%-ը, իսկ տարբեր նպատակներով ՌԴ մեկնածուների թվաքանակում աշխատանքային միգրանտների բաժինը հասնում է 66.7%-ի (աղյուսակ 3.6): Հենց այստեղ է, որ ԵԱՏՄ երկրների շրջանակներում աշխատանքային միգրացիայի օրինականությունը դառնում է միգրացիայի և՛ խթան, և՛ շարժառիթ: Ռուսաստան մեկնողների թվաքանակում, բոլոր երկրների և տարածաշրջանների համեմատությամբ, բարձր է նաև ընտանիքի վերամիավորման (54.1%) և մշտական բնակություն հաստատելու (41.2%) նպատակներով միգրացվածների տեսակարար կշիռը:

Աշխատանքային միգրացիայի երկրորդ ամենամեծ հոսքերը տեղ են գտել Եվրամիության երկրներում, որտեղ հանգրվանել են աշխատանք գտնելու նպատակով միգրացվածների 11.9%-ը և կրթության նպատակով մեկնածուների 61.2%-ը: ԱՄՆ-ում մշտական բնակության նպատակով միգրացվածները կազմում են այդ նպատակով միգրացվածների 34.8%-ը, աշխատանքային միգրանտները՝ այդ նպատակով միգրացվածների 4.2%-ը, ընտանիքի վերամիավորման նպատակով միգրացվածները՝ 18.0%-ը: Ուսումնասիրվող բոլոր տարիների աշխատանքային միգրանտների 94.6%-ը բաժին է ընկնում ԱՄՆ-ին, ԵՄ երկրներին և Ռուսաստանին:


Որպես կանոն, բոլոր ուսումնասիրվող բնակավայրերից էմիգրացիայի հիմնական նպատակը աշխատանքն է (գծապատկեր 3.11):

Աղյուսակ 3.6

Միգրացիայի նպատակը՝ ըստ աշխարհագրական ուղղությունների

Երկիր Մեկնման նպատակ	Աշխատանք	Ընդանիքի վերամիավորում	Կրթություն	Մշտական բնակություն	Այլ	Ընդամենը
ԱՄՆ	98	46	33	131	5	313
ԱՊՀ երկրներ	10	3	0	2	0	15
Այլ երկրներ	19	7	3	6	0	35
Ավստրալիա	0	2	2	0	0	4
ԵՄ անդամ երկրներ	106	52	90	68	29	345
Եվրոպական այլ երկրներ	13	4	3	7	0	27
Կանադա	6	3	1	7	0	17
Ռուսաստանի Դաշնություն	634	138	15	155	8	950
ԸՆԴԱՄԵՆՆԸ	886	255	147	376	42	1706

Աշխատանքային միգրանտները Կոտայքի մարզում կազմում են ընդհանուր միգրացվածների 68.5%-ը, հարցվողների շրջանում 60.0% և ավելի աշխատանքային միգրանտներ ունեն Լոռու, Վայոց ձորի, Տավուշի, Արմավիրի և Արագածոտնի մարզերից միգրացվածները: Ընդհանուր միգրացվածների կառուցվածքում ամենափոքրը Երևանից մեկնած աշխատանքային միգրանտների տեսակարար կշիռն է: Մնացած թիրախների համեմատությամբ բավականին բարձր է հարցվածների՝ մշտական բնակություն հաստատելու նպատակը: Եթե Արարատի մարզից մշտական բնակություն հաստատելու նպատակով երկիրը լքել է հարցվածների 31.7%-ը, որը ամենաբարձրն է, ապա ամենացածրը Արարատի մարզից էմիգրացվածների համապատասխան ցուցանիշն է՝ 8.9%: Երևանից, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի մարզերից մշտական բնակություն հաստատելու նպատակով միգրացվածները կազմում են յուրաքանչյուր մարզի հարցված էմիգրանտների ընդհանուր թվի ¼-ից ավելին, իսկ Գեղարքունիքի մարզից ընտանիքի վերամիավորման նպատակով միգրացվածները կազմում են հարցվողների ընդհանուր թվի 25.6%-ը: Կրթության նպատակով միգրացվածների ամենաբարձր ցուցանիշը Երևանինն է՝ 17.7%, իսկ Տավուշի մարզից այդ նպատակով միգրացվածներ չկան:



Գծապատկեր 3.11

Միգրացիայի նպատակը՝ ըստ Երևան քաղաքի և առանձին մարզերի (%)

Արտագաղթի դրդապատճառները: Հայաստանից էմիգրացիայի պատճառներից հիմնականները կապված են զբաղվածության հիմնախնդիրների, ներառյալ՝ ընդհանուր առմամբ աշխատատեղերի, մասնավորապես՝ մասնագիտական աշխատանքի բացակայության և, ամենակարևորը՝ ՀՀ-ում բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինության հետ:

Հարկ է նշել, որ արտերկրում միգրանտ ունեցող տնային տնտեսությունների հարցված անդամներին հնարավորություն էր ընձեռվել նշելու արտագաղթի մինչև 3 դրդապատճառ, ըստ այդմ՝ ստորև բերված աղյուսակում դրդապատճառների ընդհանուր թիվը (2389) գերազանցում է հարցվողների թիվը (աղյուսակ 3.7):

Բերված աղյուսակի տվյալներից նկատելի է, որ էմիգրացիայի պատճառներից ավելի շատ նշվել են «բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինությունը» (42.4%), «նախընտրելի աշխատանքի և աշխատատեղերի բացակայությունը» (26%), սպա «այլ» պատասխանն է: Հայաստանի զարգացման հեռանկարներ չի տեսնում 265 հարցվող կամ 15.5%-ը: Բոլոր պատասխանների մեջ ամենաբարձր հաճախականությունն ունի ՀՀ-ում բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինությունը:

նր՝ 29%, ՀՀ-ում նախընտրելի աշխատանքի և աշխատատեղերի բացակայությունը՝ 18%, «այլ» տարբերակը՝ 13%: Մինչև և ներառյալ 2018 թ. միգրացվածների 20.8%-ը երկիրը լքել է ՀՀ-ում բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինության, իսկ 11.6%-ը՝ ՀՀ-ում նախընտրելի աշխատանքի և աշխատատեղերի բացակայության պատճառով: 16.2%-ը նշել է արտագաղթի այլ պատճառ: 2019 թվականին միգրացվածների 34.1%-ն է ընտրել «ՀՀ-ում բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինությունը» պատասխանը, 11.6%-ն էլ՝ «ՀՀ-ում նախընտրելի աշխատանքի և աշխատատեղերի բացակայությունը», «արտագաղթի այլ պատճառ» նշել է հարցվողների 17.8%-ը:

Աղյուսակ 3.7


Լեմիգրացիայի դրդապատճառներն ըստ պատասխանների քանակի

Արտերկիր մեկնելու (Լեմիգրացիայի) դրդապատճառները	Պատասխանների քանակը	%-ով՝ ընդհանուրի մեջ
ՀՀ-ում բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինությունը	724	42.4
ՀՀ-ում նախընտրելի աշխատանքի և աշխատատեղերի բացակայությունը	444	26.0
Այլ	334	20.0
Հայաստանի զարգացման հեռանկար չեն տեսնում	265	15.5
Պատերազմի վտանգը	126	7.4
ՀՀ-ում մասնագիտական աշխատանք իրականացնելու հնարավորության բացակայությունը	118	6.9
ՀՀ-ում տիրող սոցիալական, բարոյա հոգեբանական անառողջ մթնոլորտը	104	6.1
ՀՀ-ում որակյալ կրթություն ստանալու սահմանափակ հնարավորությունները կամ հնարավորությունների բացակայությունը	97	5.70
ՀՀ-ում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դժվարությունը	78	4.6
Անարդարությունը	67	3.9
ՀՀ-ում որակյալ առողջապահական ծառայություններ ստանալու սահմանափակ հնարավորությունները կամ հնարավորությունների բացակայությունը	32	1.90

2020 թվականին «ՀՀ-ում բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինություն» պատասխանն ընտրել է հարցվողների 38.2%-ը, «ՀՀ-ում նախընտրելի աշխատանքի և աշխատատեղերի բացակայությունը»՝ 12.7%-ը: Արտագաղթի «այլ» պատճառ է նշել հարցվողների 16.7%-ը: Հետագա տարիներին ՀՀ-ում բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինության և նախընտրելի աշխատանքի ու աշխատատեղերի բացակայության պատճառով արտագաղթողների տեսակարար կշիռը նվազել է՝

2023 թ. հասնելով համապատասխանաբար՝ 18.3 և 13.5%-ի: 2023 թվականին այլ պատճառներով արտագաղթի ցուցանիշը դրսևորել է 22.1% մակարդակը:

Էմիգրանտների վերադառնալու մտադրությունը: Միգրանտների 41%-ը հստակ արտահայտել է իր վերադառնալու մտադրության մասին, 40%-ը տվել է «չեմ վերադառնա», «հավանաբար չեմ վերադառնա» պատասխանները, իսկ 19%-ը դեռևս որոշում չունի (գծապատկեր 3.12):



Գծապատկեր 3.12

Էմիգրանտների բաշխումն ըստ հեղազա միգրացիոն ծրագրերի (%)

Երևանից էմիգրացվածների 55.6%-ը ունի չվերադառնալու մտադրություն, վերադառնալու մտադրություն ունի միգրացվածների 30.0%-ը (աղյուսակ 3.8):


Էմիգրանտների հեղազա միգրացիոն ծրագրերի բաշխումն ըստ մարզերի (%)

Աղյուսակ 3.8

Մարզ	Կվերադառնամ ի վերջո	Հավանաբար չեմ վերադառնա	1-3 տարվա ընթացքում կվերադառնամ	Դժվարանում եմ պատասխանել/դեռ չեմ որոշել	Չեմ վերադառնա
Երևան	19.9	23.6	10.1	14.4	32
Արագածոտնի մարզ	45.3	29.3	13.3	9.3	2.7
Արարատի մարզ	16.5	16.5	24.5	35.3	7.2
Արմավիրի մարզ	47.3	11.6	12.3	15.8	13
Գեղարքունիքի մարզ	19.8	23.1	14.9	26.4	15.7
Լոռու մարզ	29.3	14.3	9.8	24.1	22.6
Կոտայքի մարզ	37.6	20.8	19.5	14.1	8.1
Շիրակի մարզ	16.9	29	16.9	26.6	10.5
Սյունիքի մարզ	35.3	25.9	10.3	15.5	12.9
Վայոց ձորի մարզ	16.1	29	22.6	29	3.2
Տավուշի մարզ	32.7	21.4	11.2	24.5	10.2

ՀՀ-ում ռեէմիգրացման ամենաբարձր ներուժն ունի Արմավիրի մարզը՝ 59.6%, այնուհետև Արագածոտնի՝ 58.6%, Կոտայքի, Սյունիքի և Տավուշի մարզերը, համապատասխանաբար՝ 57.1%, 45.6% և 43.9%, իսկ ամենացածր ներուժն ունի Երևանը՝ 30.0%, այնուհետև Շիրակի մարզը՝ 33.8%: Հայրենիք վերադառնալու որոշակի ներուժ կարելի է գտնել դեռևս վերադառնալու որոշում չկայացրածների շրջանակներում, այն հաշվով, որ նրանց փոխարեն նշված պատասխանը տվել են ընտանիքի անդամները՝ չունենալով հավաստի այլ պատասխան:

Դրամական փոխանցումները: Հարցման ենթարկված 1706 միգրանտներից հայրենիքում բնակվող իրենց ընտանիքների անդամներին, հարազատներին դրամական փոխանցումներ կատարում են 889-ը, կամ հարցվածների 52.1%-ը (գծապատկեր 3.13):




Գծապատկեր 3.13

Միգրանտների բաշխումն ըստ ընտանիքի ընդհանուր եկամտի մեջ դրամական փոխանցումների բաժնեմասի (%)

Դրամական փոխանցումների բաժինը ընտանիքի/տնային տնտեսության ընդհանուր եկամտում բաշխվել է այսպես. 282 միգրանտի դրամական փոխանցումները կազմել են հայրենիքում բնակվող ընտանիքի անդամների և հարազատների եկամտի 21-40%-ը, 216 միգրանտինը՝ 41-60%-ը, 105 միգրանտինը՝ 61-80%-ը, 49 միգրանտինը՝ 81-100%-ը, իսկ 237 միգրանտ հայրենիքում բնակվող իր հարազատների եկամտի մինչև 20%-ն է կարողացել հոգալ: Վերջինը կարելի է համարել ոչ թե դրամական փոխանցում, այլ օգնություն, որը ունի միջադեպային բնույթ:

Հարցված միգրանտների կողմից իրենց ընտանիքների եկամուտների ձևավորմանը մասնակցության առումով առանձնանում է Երևանը, որտեղ 72 միգրանտ համալրում է ընտանիքի եկամուտների մինչև 20%-ը, 60 միգրանտ՝ 21-40%-ը (գծապատկեր 3.14):



Գծապատկեր 3.14

Եկամուտների կառուցվածքում միգրանտների մասնակցությունը (մարդ)՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի

Արմավիրի մարզում 54 միգրանտ է հոգ տանում իր ընտանիքի եկամուտների 21-40%-ի ձևավորման մասին, իսկ Լոռու մարզում 52 միգրանտ փոխանցում է ընտանիքի եկամուտների մինչև 20%-ը: 41-60%-ով ընտանիքի եկամուտների ձևավորման գործում մասնակցություն ունի Երևանից 38 միգրանտ, 13-ը մասնակցում է 41-60%-ի համալրմանը, 6-ը՝ 81-100%-ի համալրմանը: Եկամուտների 61-80%-ի և 81-100%-ի ձևավորմանն ամենամեծ մասնակցությունն ունեն Կոտայքի մարզից միգրացվածները, որոնց թիվը համապատասխանաբար՝ 19 և 16 է:

Անփոփելով հետազոտության արդյունքները՝ կարելի է պնդել, որ արտագաղթի անմիջական պատճառը, մի կողմից՝ անհատի զարգացման մակարդակի, նրա պահանջմունքների և հնարավորությունների, մյուս կողմից՝ դրանք բավարարելու պայմանների միջև հակասությունն է: Հավանական է միգրանտի մեջ աստիճանաբար ձևավորվում է այն համոզմունքը, որ այդ հակասությունը հնարավոր է հանգուցալուծել միայն պետական սահմանները հատելու միջոցով: Էմիգրացիայի հիմնական նպատակը հիմնականում տնտեսական է:

Հետազոտության արդյունքների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ ՀՀ առկա բնակչության էմիգրացիոն ներուժը դեռևս սպառված չէ, չնայած վերջին տարիներին դիտարկվում է էմիգրացիայի տեմպերի թուլացում: Դա կարելի է բացատրել ընդունող երկրներում, հատկապես՝ Ռուսաստանի Դաշնությունում ձևավորված տնտեսական իրավիճակով, որի դեպքում արտագաղթը, տնտեսական տեսանկյունից, դառնում է ոչ շահավետ: Կարելի է պնդել, որ էմիգրացիան ՀՀ բնակչության համար շարունակում է մնալ որպես գոյատևման և կենսապահովման կարևոր գործոն:

Ռուսաստան մեկնող մեր հայրենակիցների միգրացիային բնորոշ է սեզոնային աշխատանքը, այն դեպքում, երբ ԱՄՆ և Եվրամիության երկրներ մեկնողներն ավելի երկարատև աշխատանքային միգրանտներն են, մշտական բնակության կամ ընտանիքի վերամիավորման, կրթության նպատակներով մեկնածները: Եվրամիության երկրներ մեկնած երիտասարդների ¼-ից ավելին ունի մագիստրոսական և հետբուհական կրթություն ստանալու նպատակ. նրանք հայտնել են հայրենիք վերադառնալու մտադրության մասին:

Սույն հետազոտությունը փաստում է միջազգային տնտեսագիտության մեջ ամրագրված կարևոր մեկ օրինաչափություն. ավելի հեռավոր զարգացած տարածաշրջաններ կամ երկրներ միգրանտները տեղափոխվում են ընտանիքներով և կայացնում մշտական բնակության որոշում:

Ժամանման բոլոր երկրներում էմիգրանտների զգալի մասը վարձու աշխատողներ են: Հայաստանից էմիգրացիայի պատճառներից հիմնականները կապված են զբաղվածության հիմնախնդիրների հետ: Հարցվողների բոլոր պատասխանների մեջ ամենաբարձր հաճախականությունն ունեն «ՀՀ-ում բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վատակելու անհնարիությունը» և «ՀՀ-ում նախընտրելի աշխատանքի և աշխատատեղերի բացակայությունը»:


3.2

Երիտասարդների միգրացիայի համայնքային հետազոտության արդյունքների վերլուծություն

Համայնքների մակարդակով 15–34 տարեկան երիտասարդների շրջանում միգրացիոն գործընթացների հետազոտության նպատակով կազմված հարցաթերթիկում կարևորվել են այնպիսի ցուցանիշների ուսումնասիրությունն ու վերլուծությունը, ինչպիսիք են համայնքներում մշտական և առկա բնակչության, այդ թվում՝ երիտասարդ տարիքի բնակչության թվաքանակը, համայնքներում առկա տնային և գյուղացիական տնտեսությունների թվաքանակի տեղաշարժերը 2015 թ. և 2018-2023 թթ. ընթացքում, գյուղացիական

անտեսություններում զբաղվածությունը՝ ըստ անասնաբուծության և հողագործության ոլորտների (հավելված 2): Կարևորվել է հատկապես ըստ առանձին ոլորտների երիտասարդների զբաղվածության, նրանց արտագաղթի դրդապատճառների և միգրանտների կողմից հայրենիք ուղարկված դրամական փոխանցումների ծախսման հիմնական ուղղությունների մասին համայնքների ղեկավարների գնահատականների ուսումնասիրությունը: Հարցումներն անցկացվել են բոլոր մարզերում, որպես ռեսպոնդենտներ ընտրվել են խոշորացված համայնքները՝ իբրև բազմաբնակավայր համայնքներ, ինչպես նաև մի շարք գյուղական բնակավայրեր:


Հետազոտական խումբը յուրաքանչյուր մարզից ընտրել և ներկայացել է մեկական խոշորացված համայնք (ներառում են 204 բնակավայր), որոնց շրջանակներում իրացրել է իր առջև նշված մակարդակում սահմանված առաջադրանքը (գծապատկեր 3.15): Միաժամանակ, առավել հավաստի վերլուծություններ կատարելու, համեմատական բավարար տեղեկատվություն հավաքագրելու նպատակով հարցումներ անցկացվել են նաև Շիրակի մարզի Արթիկ, Աշոցք, Ամասիա խոշորացված համայնքներում, Փանիկ, Մեծ Մանթաշ, Պեմզաշեն, Գետափ, Լեռնակերտ, Հայկասար, Անուշավան և այլ բնակավայրերում, Կոտայքի մարզի Հրազդան խոշորացված համայնքում, Եղեգնաձորի խոշորացված համայնքի Վերնաշեն, Գետափ, Գլաձոր և Մալիշկա բնակավայրերում, Արմավիրի մարզի Արևիկ և Մրգաշատ բնակավայրերում, Մարտունի խոշորացված համայնքի Ներքին Գետաշեն, Զուլաքար և Գեղիովիտ բնակավայրերում, Վանաձորի մարզի Գուգարք համայնքում, Սիսիան խոշորացված համայնքի Սառնակունք, Աշոտավան, Տոլորս բնակավայրերում, Արարատի մարզի Վեդի խոշորացված համայնքի Գոռավան, Փոքր Վեդի, Նոր Կյանք, Տափերական բնակավայրերում, Բերդ խոշորացված համայնքի Մովսես և Նորաշեն բնակավայրերում:



Գծապատկեր 3.15

Հարցման ընտրանքում ներկայացված խոշորացված համայնքները և դրանցում ներառված բնակավայրերի թվաքանակը

Հարցման արդյունքները թույլ են տալիս գնահատել ուսումնասիրվող խոշորացված համայնքներում մշտական և առկա բնակչության հարաբերակցությունը և ըստ այդմ՝ որոշակի պատկերացում կազմել նշված համայնքներից բնակչության արտագաղթի ծավալների մասին (գծապատկեր 3.16): Դաշտավայրային երկու՝ Վեդիի և Մեծամոր խոշորացված համայնքներում առկա բնակչությունը կազմում է մշտական բնակչության համապատասխանաբար՝ 94.0 և 93.9%-ը, ինչը կարելի է բացատրել գյուղատնտեսական աշխատանքների համար դրանցում առկա համեմատաբար բարենպաստ պայմանների, գյուղատնտեսական մթերքների վաճառքի՝ մայրաքաղաքին ավելի մոտ գտնվելու, տարածաշրջաններում գյուղատնտեսական մթերքների վերամշակման հզորությունների առկայության հանգամանքով: Առկա բնակչության թերևս ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Փամբակ խոշորացված համայնքում: Գրեթե նույն պատկերն է Վանաձոր խոշորացված համայնքի Գուգարք բնակավայրում, որտեղ առկա բնակչությունը կազմում է մշտական բնակչության 95.2%-ը: Համայնքի պատասխանատուները պարզաբանում են, որ վերջին տարիներին արտագնա աշխատանքի նպատակով իրականացվող միգրացիան բավականին նվազել է՝ պայմանավորված ոչ միայն Ռուսաստանում ձևավորված իրավիճակով, այլ նաև սուբվենցիոն ծրագրերի հիման վրա իրականացվող լայնածավալ շինարարական աշխատանքներով թե՛ մարզում և թե՛ հանրապետության տարբեր բնակավայրերում, այդ թվում՝ Երևանում: Տեղի է ունենում արտագնա միգրացիայի աստիճանական փոխակերպում ներգնա միգրացիայի:



Գծապատկեր 3.16

Ընարված խոշորացված համայնքներում մշտական և առկա բնակչության հարաբերակցությունը (%)

Չափազանց խնդրահարույց է Սիսիան խոշորացված համայնքում ստեղծված իրավիճակը: Այստեղ առկա բնակչությունը կազմում է մշտական բնակչության 1/3-ից պակաս մասը: 20–30%-ի չափով առկա բնակչությունը պակաս է մշտական բնակչությունից Մարտունի, Բերդ և Բյուրեղավան համայնքներում: Բերդ խոշորացված համայնքի Մոլվեստ բնակավայրում երիտասարդների թվաքանակը առկա բնակչության կազմում 6.5% է, իսկ Նորաշեն բնակավայրում՝ 30.6%: Սիսիանը և Բերդը ռազմավարական նշանակության տարածքներ են, որոնց և, ընդհանուր առմամբ, Տավուշի ու Սյունիքի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացումը ռազմավարական առաջնահերթության կարգավիճակ պետք է ստանա:

Հարցման ենթարկված խոշորացված համայնքներում մշտական և առկա բնակչության թվաքանակում 15–34 տարեկան երիտասարդների թվաքանակի մասին տվյալները փաստում են, որ վատագույն իրավիճակ ձևավորվել է Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում (աղյուսակ 3.9):

Աղյուսակ 3.9

Ընդրված համայնքներում մշտական և առկա բնակչության, ինչպես նաև 15–34 տարեկան երիտասարդների թվաքանակը

Խոշորացված համայնքներ	Մշտական բնակչություն Միլիոնովիվ	Այդ «նրբ» յուրիվ ենթակատարների վերջնահամարները	Երիտասարդների տեսակաբաշխումը առկա և մշտական բնակչության միջև (%)	Առկա բնակչության Միլիոնովիվ	Այդ «նրբ» ենթակատարների վերջնահամարները	Երիտասարդների տեսակաբաշխումը մշտական և առկա բնակչության միջև (%)
Թալին	38039	11925	31.3	34957	10305	29.5
Վեդի	54057	14354	26.6	50814	13409	26.4
Մեծամոր	77544	23218	29.9	72819	22446	30.8
Մարտունի	89207	26104	29.3	62445	18273	29.3
Փամբակ	13146	3464	26.4	12694	3386	26.7
Բյուրեղավան	12290	1364	11.1	9714	1113	11.5
Ախուրյան	45142	6280	13.9	40541	5750	14.2
Սիսիան	32274	4635	14.4	10468	1470	14.0
Եղեգնաձոր	20215	6171	30.5	18253	5530	30.3
Բերդ	31627	9451	29.9	23264	9046	38.9

Ինչպես մշտական, այնպես էլ առկա բնակչության կազմում նշված տարիքային խմբի երիտասարդների բաժինը 11%-ից աննշան է ավելի, իսկ Հրազդան խոշորացված համայնքում մշտական բնակչության կազմում 15–34

տարեկանների տեսակարար կշիռը 58.0%-ից ավելի է¹¹⁹: Համեմատության համար նշենք, որ աշխարհում երիտասարդության թվաքանակը 1,8 միլիարդից մի փոքր պակաս է և կազմում է աշխարհի բնակչության (8,06 միլիարդ մարդ¹²⁰) 24.7%-ը, իսկ 17 զարգացող երկրներում բնակչության կեսը փոքր է 18 տարեկանից¹²¹:

Պատկերը հուսադրող չէ Սիսիան (14.0%) և Ախուրյան (14.2%) խոշորացված համայնքներում, այն դեպքում, երբ Սիսիան խոշորացված համայնքի Մառնադըյուր բնակավայրում առկա երիտասարդները կազմում են առկա բնակչության 27.4%-ը, իսկ Աշոտավանում՝ 31.1%-ը:

Որոշ խոշորացված համայնքներում երիտասարդների թվաքանակը էականորեն փոքր է: Օրինակ՝ Շիրակի մարզի Աշոցք խոշորացված համայնքում 15–34 տարեկան երիտասարդները կազմում են առկա բնակչության ընդամենը 3.4%-ը, իսկ Արթիկ խոշորացված համայնքում այդ ցուցանիշը 45.7% է, Ամասիայում՝ 34.9%, Լեռնակերտ բնակավայրում՝ 65.6%:

Թալին, Մեծամոր, Մարտունի, Եղեգնաձոր և Բերդ խոշորացված համայնքներում երիտասարդների բաժինը մշտական և առկա բնակչության կազմում բավականաչափ բարձր է:

Եղեգնաձոր խոշորացված վարչական շրջանի Գետափ գյուղական բնակավայրում երիտասարդ տարիքի բնակչությունը կազմում է առկա բնակչության 63.9%-ը, մյուս երեքում այդ ցուցանիշը տատանվում է 24.1%-ից (Վերնաշեն) 29.8%-ի (Գլաձոր) սահմաններում:

Ընտրված խոշորացված համայնքներում առկա տնային տնտեսությունների թվաքանակի մասին հարցման արդյունքները փաստում են, որ որոշ խոշորացված համայնքներ, ինչպիսիք են Թալինը, Ախուրյանը և Բերդը, ըստ մեր կողմից պահանջվող տարեթվերի ամբողջական տվյալներ չներկայացնելը հիմնավորել են խոշորացումից հետո փաստաթղթերի արխիվացմամբ (աղյուսակ 3.10): 2023 թ. դրությամբ Մեծամոր, Բյուրեղավան, Ախուրյան և Բերդ համայնքներում գրանցվել է տնային տնտեսությունների թվաքանակի ավելացում: Բերդում, որը սահմանամերձ գոտի է, և գյուղերը թշնամու նշանառության տակ են, 2023 թ. տնային տնտեսությունները 118-ով ավելին են, քան նախորդ տարում: Փամբակ խոշորացված համայնքում 2023 թ., 2015 թ. համեմատությամբ, տնային տնտեսությունների թվաքանակը նվազել է 12.4%-ով:

¹¹⁹ Առկա բնակչության և դրանում երիտասարդների թվաքանակի տվյալները խոշորացված համայնքի պատասխանատուները չեն ներկայացրել:

¹²⁰ Տե՛ս <https://www.worldometers.info/world-population/>

¹²¹ Տե՛ս UNFPA. Народонаселение мира в 2014 году, էջ 2, https://www.unfpa.org/sites/default/files/pub-pdf/RU-SWOP14_Report_WEB.pdf

Աղյուսակ 3.10

Ընդ որում խոշորացված համայնքներում առկա տնային տնտեսությունների քանակը 2015 թ. և 2018–2023 թթ.

խոշորացված համայնքներ	2015	2018	2019	2020	2021	2022	2023
Թալին							9696
Վեդի							11397
Մեծամոր	21527	21619	21688	21804	21887	22017	22148
Մարտունի	24415	24780	25618	27141	27500	26627	26600
Փամբակ	4587	4424	4268	4268	4325	3997	3966
Բյուրեղավան		2961	2915	2915	2915	2919	2920
Ախուրյան						9972	11266
Միսիան	5294	5301	5305	5200	5311	5314	5307
Եղեգնաձոր	6060	5840	5750	5774	5696	5683	5670
Բերդ						6713	6831

Բյուրեղավան խոշորացված համայնքում ևս, օրինակ, 2018 թ. համեմատությամբ, տնային տնտեսությունները ընթացիկ տարում կրճատվել են 41 միավորով: Միսիանի խոշորացված համայնքում 2021 թ., նախորդ տարվա համեմատությամբ, առկա տնային տնտեսությունների քանակն ավելացել է 111-ով, սակայն հաջորդ տարիներին որոշակի աճն ուղեկցվել է առկա գյուղացիական տնտեսությունների թվաքանակի նվազումով:

Մարտունի խոշորացված համայնքում 2018–2021 թթ. ընթացքում տնային տնտեսությունների թվաքանակին բնորոշ է աճի միտումը, սակայն հաջորդ երկու տարիներին դրանք նվազել են շուրջ 900 տնտեսությունների չափով: Կարելի է եզրակացնել, որ, ի տարբերություն դաշտավայրային համայնքների, լեռնային համայնքներում առկա տնային տնտեսությունների թիվը, ուսումնասիրվող ժամանակաշրջանի վերջի դրությամբ, զգալիորեն կրճատվել է:

Ուսումնասիրվող տարիներին ընտրված խոշորացված համայնքներում առկա գյուղացիական տնտեսությունների քանակական փոփոխությունների մասին համեմատական վերլուծություններ կատարելու առումով տեղեկատվությունը ևս ամբողջական չէ, սակայն եղած տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ Մեծամոր, Բյուրեղավան և Բերդ համայնքներում կան դրանց դրական տեղաշարժեր (աղյուսակ 3.11):

Մեծամոր համայնքում ուսումնասիրվող բոլոր տարիներին գրանցվել է գյուղացիական տնտեսությունների աճի դրական դինամիկա, սակայն Միսիան, Փամբակ, Մարտունի և Եղեգնաձոր խոշորացված համայնքներում ուսումնասիրվող բոլոր տարիներին գյուղացիական տնտեսությունների քանակը նվազել է: Մարտունիում 2023 թ., 2015 թ. համեմատությամբ, գյուղացիական տնտեսությունները կրճատվել են 8.2%-ով, այն դեպքում, երբ առկա տնային տնտեսությունների քանակը, նույն համեմատականների արդյունքում, ցուցադրել է ակնհայտ ավելացում: Իսկ Փամբակ խոշորացված համայնքում գյուղացիական տնտեսություններն ընթացիկ տարում, 2015 թ. համեմատու-

թյամբ, կրճատվել են մոտ 16%-ով: Եղեգնաձորի խոշորացված համայնքում և՛ տնային տնտեսությունների, և՛ գյուղացիական տնտեսությունների աստիճանական նվազման միտում է գրանցվել: 2023 թ., 2015 թ. համեմատությամբ, տնային տնտեսությունները նվազել են 390-ով կամ 6.4%-ով, իսկ գյուղացիական տնտեսությունները՝ 754-ով կամ 24.4%-ով: Հրազդան խոշորացված համայնքում, ուսումնասիրվող տարիներին, ինչպես տնային տնտեսությունների, այնպես էլ գյուղացիական տնտեսությունների թվաքանակն անշեղորեն աճել է: Եթե 2018 թ. այստեղ առկա էր 12690 տնային տնտեսություն, ապա 2023 թ. դրանց թիվը հասել է 14600-ի: Գյուղացիական տնտեսությունների համապատասխան ցուցանիշներն են. 2018 թ.-ին՝ 3400, 2023 թ.-ին՝ 6798:

Աղյուսակ 3.11


Հարված խոշորացված համայնքներում առկա գյուղացիական տնտեսությունների քանակը 2015 թ. և 2018–2023 թթ.

Խոշորացված համայնքներ	2015	2018	2019	2020	2021	2022	2023
Թալին							5817
Վեդի							12820
Մեծամոր	13327	13449	13577	13604	13788	13905	14004
Մարտունի	14000	13880	13700	13510	12990	12990	12850
Փամբակ	3529	3319	3267	3107	3258	3125	2966
Բյուրեղավան		249	247	247	247	251	252
Ախուրյան							7722
Սիսիան		3319	3186	3234	3139	3061	
Եղեգնաձոր	3081	2944	2704	2691	2509	2456	2327
Բերդ						6615	7934

Որպես կանոն, ուսումնասիրվող բոլոր խոշորացված համայնքներում գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների և գյուղացիական տնտեսությունների թվաքանակը նույնական է: Սակայն ակնհայտ է նաև, որ և՛ տնային, և՛ գյուղացիական տնտեսությունների թվաքանակը նվազել է: Բացառություն են կազմում Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի գյուղական բնակավայրերը:

Հարցման արդյունքները վկայում են, որ բոլոր խոշորացված համայնքներում ինչպես անասնապահությամբ, այնպես էլ հողագործությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների հաշվառում իրականացվում է, որը բխում է «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» 2008 թ. նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ օրենքի և ՀՀ Կառավարության՝ 2022 թ. սեպտեմբերի 29-ի թիվ 1514-Ն որոշման պահանջներից¹²²:

¹²² Տե՛ս «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» 2008 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված ՀՀ օրենքը, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=48725>, ՀՀ Կառավարության՝ 2022 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1514-Ն որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172651>



Գծապատկեր 3.17

Խոշորացված համայնքների գյուղացիական տնտեսությունների զբաղվածությունն ըստ առանձին ոլորտների

Գծապատկեր 3.17-ում ներկայացվել է ընտրված խոշորացված համայնքներում առկա գյուղացիական տնտեսությունների զբաղվածությունը՝ ըստ առանձին գյուղատնտեսական ոլորտների: Ակնհայտ է, որ ներկայացված գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղված են հողագործության ոլորտում: Օրինակ՝ Մարտունիում բոլոր գյուղացիական տնտեսությունները զբաղվում են հողագործությամբ, միաժամանակ, 5700 տնտեսություն զարգացնում է նաև անասնապահությունը: Նույնը կարելի է պնդել Մեծամորի, Վեդիի, Փամբակի առումներով:

Բերդ խոշորացված համայնքում, հողագործությանը զուգահեռ, գյուղական բնակչության զբաղվածությունը բավականին ակտիվ է նաև անասնապահության ոլորտում: Եղեգնաձորում ևս բոլոր գյուղացիական տնտեսությունները ներգրավված են հողագործության մեջ, իսկ անասնապահությամբ զբաղված է միայն 609 տնտեսություն: Բացառություն է Միսիան խոշորացված համայնքը, որտեղ գյուղացիական տնտեսություններն ավելի մեծ չափերով ներգրավված են անասնապահության ոլորտում: Գյուղացիական տնտեսությունների 60.9%-ը զբաղված է անասնապահությամբ, 32.9%-ը՝ հողագործությամբ, իսկ 6.2%-ը գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավված չէ: Նմանատիպ պատկեր է Բյուրեղաձև խոշորացված համայնքում, որտեղ հողագործությամբ զբաղված է գյուղացիական տնտեսությունների մոտ 52%-ը, 25.7%-ը զբաղված է անասնաբուծությամբ, իսկ 22.3%-ն իրեն հատկացված հողատարածքները մատնել է պարապուրդի:

Թավիս և Ախուրյան խոշորացված համայնքներում ոչ բոլոր գյուղատնտեսական հողերն են մշակվում: Դա է փաստում ներկայացված վիճակագրությունը. Թավիսում հողագործության մեջ զբաղված է գյուղացիական տնտեսությունների 67.9%-ը, իսկ Ախուրյանում՝ 69.9%-ը: Մնացած տնտեսու-

թյունները անասնապահական են: Բերդ խոշորացված համայնքում գյուղացիական տնտեսությունները զբաղված են և՛ անասնապահական, և՛ հողագործական աշխատանքներում, սակայն եթե Մովսես բնակավայրում հողագործությամբ զբաղվում են բոլոր գյուղացիական տնտեսությունները, ապա համայնքում միայն 80 գյուղացիական տնտեսություն է զբաղված անասնապահությամբ: Նույն միտումը տեղ է գտել նաև Նորաշեն բնակավայրում:

Մարտունի խոշորացված համայնքում բոլոր՝ 12850 գյուղացիական տնտեսությունները հողագործությամբ զբաղվում են, 5700 տնտեսություն միաժամանակ զբաղվում է անասնաբուծությամբ: Զոլաքար, Ներքին Գետաշեն, Գեղեղվիտ բնակավայրերում պատկերը գրեթե նույնն է:

Կարելի է եզրակացնել, որ լեռնային շրջանների համայնքներում գյուղացիական տնտեսությունները զբաղվում են հողագործությամբ, զուգահեռ՝ անասնապահությամբ, այնուհանդերձ, որոշ բնակավայրերում ոչ բոլոր գյուղացիական տնտեսություններն են ներգրավված գյուղատնտեսական աշխատանքներում:

15-34 տարեկան երիտասարդների զբաղվածությունը

Աղյուսակ 3.12

Խոշորացված համայնքներ	Անասնաբուծություն	Հողագործություն	Կրթություն	Բիզնես	Երեսարարություն	Այլուր	Այլ
Թալին		✓	✓				✓
Վեղի	✓	✓	✓		✓	✓	
Մեծամոր	✓	✓	✓	✓			✓
Մարտունի		✓	✓	✓	✓		✓
Փամբակ	✓	✓	✓	✓			
Բյուրեղավան			✓		✓		✓
Ախուրյան	✓	✓	✓				✓
Սիսիան	✓	✓	✓				
Եղեգնաձոր		✓	✓				✓
Բերդ		✓	✓	✓			✓

«Ի՞նչ զբաղվածություն ունի երիտասարդությունը» հարցի պատասխանները ներկայացված են աղյուսակ 3.12-ում: Երիտասարդության զբաղվածության հնարավոր տարբերակները նշելու առումով սահմանափակում հարցաթերթում չի առաջարկվել, ուստի ներկայացվել են բոլոր այն տարբերակները, որոնք տեղ են գտել հարցումների արդյունքներում: Այսպես՝ Սիսիանի խոշորացված համայնքի Սառնակունք բնակավայրում սովորող է երիտասարդության 30%-ը, իսկ 10-15%-ը զբաղվում է գործարարությամբ, մնացածն ընդգրկված է գյուղատնտեսական աշխատանքներում: Աշոտավանում սովորող է 35%-ը, սակայն միաժամանակ ներգրավված է գյուղատնտեսական աշխատանքներում և բիզնեսում: Նույն պատկերն է Տոչորս բնակավայրում:

Արմավիրի մարզի Մեծամոր խոշորացված համայնքում երիտասարդները հիմնականում զբաղված են հողագործության ոլորտում, մեծաթիվ են նաև սովորողները: Արարատի մարզի Վեդի խոշորացված համայնքի գյուղական բնակավայրերի երիտասարդությունը առավելապես ընդգրկված է հողագործական աշխատանքներում, շինարարության և կրթության ոլորտներում, զբաղվում է նաև սպորտով: Հրազդան խոշորացված համայնքում երիտասարդության 42%-ը սովորող է, 28%-ը զբաղված է. 25%-ը՝ գյուղատնտեսական աշխատանքներում: Եղեգնաձոր խոշորացված համայնքում երիտասարդները կամ սովորող են, կամ զբաղված են հողագործության ոլորտում, ինչպես նաև բիզնեսում: Այսպիսով՝ բոլոր մարզերի հարցման ենթարկված խոշորացված համայնքների երիտասարդները, այլ զբաղվածությանը զուգահեռ, նաև կրթություն են ստանում: Գյուղական երիտասարդությունը գյուղատնտեսական ոլորտում նախընտրում է հողագործությամբ զբաղվելը:

Հարցման ենթարկված համայնքների ղեկավարները «Ո՞րն է արտագաղթի հիմնական պատճառը» հարցին հարցաթերթում նշված ութ պատասխաններից կարող էին ընտրել մինչև երեք պատասխան: Ըստ հարցման արդյունքների՝ համայնքների ղեկավարներից 9-ը երիտասարդների արտագաղթի հիմնական պատճառը համարել են աշխատատեղերի բացակայությունը, մասնագիտական աշխատանքով զբաղվածության հնարավորության բացակայությունը մատնանշել են համայնքների ղեկավարներից 4-ը (աղյուսակ 3.13):

Երիտասարդների արտագաղթի հիմնական պատճառները ընդլայնված խոշորացված համայնքներում

Աղյուսակ 3.13

Խոշորացված համայնքներ	Աշխատատեղերի բացակայությունը	Մասնագիտական աշխատանքի բացակայությունը	Հայասրանի գաղափարային հետամուտքի բացակայությունը	Ձեռներեցությունը գրավելու և ժխտակալությանը	Բախարաբ վնասանակարգակապակեղերու համար անկրթածեղը գումարներ վաճարակելու անհնարինությունը	Բարոյաբեկոգերնական, սոցիալական և քաղաքական անստորջն պետությունը	Անազատությունը	Այլ
Թալին	✓	✓			✓			
Վեդի	✓							
Մեծամոր	✓					✓		
Մարտունի	✓	✓	✓					
Փամբակ	✓				✓			
Բյուրեղական					✓			
Ախուրյան	✓	✓		✓				
Սիսիան					✓			
Եղեգնաձոր	✓	✓						✓
Բերդ	✓							

Մարտունի խոշորացված համայնքում Հայաստանի զարգացման հեռանկարների նկատմամբ հոռետես են, Ախուրյան համայնքում կարծում են, որ երիտասարդների արտագաղթի պատճառ են նաև ձեռներեցությամբ զբաղվելու դժվարությունները, և, վերջապես, համայնքների ղեկավարներից 5-ը արտագաղթի պատճառ են համարում բավարար կենսամակարդակ ապահովելու համար անհրաժեշտ գումարներ վաստակելու անհնարինությունը: Մի շարք գյուղական բնակավայրերում անցկացված հարցումները ևս հաստատում են, որ երիտասարդների արտագաղթի հիմնական պատճառներն են աշխատատեղերի, բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում մասնագիտական աշխատատեղերի բացակայությունը և բավարար կենսամակարդակ ապահովելու համար անհրաժեշտ գումարներ վաստակելու անհնարինությունը: Ուշադրության է արժանի այն, որ հարցվողներից և ոչ մեկը երիտասարդների արտագաղթի պատճառների շարքում «բարոյաև հոգեբանական, սոցիալական և քաղաքական անառողջ մթնոլորտ», «անարդարություն» տարբերակները չի ընտրել:

Համայնքների ղեկավարների հարցումների արդյունքները միգրանտների կողմից հայրենիք ուղարկված դրամական փոխանցումների ծախսի ուղղությունների մասին (100%-ի մեջ ներքոբերյալ ուղղություններով ծախսերի մասնաբաժնի մոտավոր գնահատականներ) ներկայացված է աղյուսակ 3.14-ում.

Դրամական փոխանցումների ծախսման ուղղությունները ընտրված խոշորացված համայնքներում (%)

Աղյուսակ 3.14

Ծախսման ուղղություններ	Թափն	Վեղի	Մեծամոր	Մարցունի	Փամբակ	Բյուրեղաբլան	Ախուրյան	Միսիան	Երեզնիաձոր	Բեղոյ
Անձնական սպառման ծախսեր	50	60	60	30	70	50	40	60	28	70
Կրթության, ուսման ծախսեր	30	15	5	30	15	15	18	20	15	30
Շարժական գույքի ձեռքբերում	5	3	6	6	10	1	15	10	15	
Անշարժ գույքի ձեռքբերում	4	5	8	4		17	10		5	
Բնակելի տների վերանորոգում	6	15	4	15	5	15	7	10	20	
Բնակելի տների կառուցում	3		6	12			5		10	
Բիզնես ներդրումներ	2	2	10	1		2	3		2	
Խնայողություններ, ավանդ	1		1	2			2		5	

Բոլոր համայնքներում, ըստ ղեկավարների գնահատականի, դրամական փոխանցումների ամենամեծ բաժինը ծախսվում է ընթացիկ անձնական սպառման վրա: Արտերկրում աշխատող մեր երիտասարդ հայրենակիցների

կողմից կատարվող դրամական փոխանցումներն ունեն որոշակի ներդրումային ակտիվություն, որն առնչվում է մարդկային կապիտալի զարգացմանը (կրթության, ուսման ծախսեր), բնակարանների վերանորոգմանը և բնակարանային շինարարությանը: Խնայողությունների կամ ավանդների առումով դրամական փոխանցումներն ունեն աննշան դերակատարություն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշխարհում ներկայում տարեկան 120 միլիոն երիտասարդ մտնում է աշխատանքային տարիք¹²³: Երիտասարդության աննախադեպ մեծ թվաքանակը կարող է հսկայական ազդեցություն ունենալ ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Այդ ազդեցությունը կկրի դրական, թե բացասական բնույթ, հիմնականում կախված է երիտասարդության կարիքների կառավարությունների արձագանքից, հասարակության կյանքում կառուցողական ներդրում կատարելու ունակությունից:

3.3

Երիտասարդների արտագաղթի կանխարգելման միջոցառումների պարզաբանման փորձագիտական հարցումների արդյունքները

Փորձագիտական հարցումներին մասնակցել է բնակչության միգրացիայի ոլորտի առաջատար չորս մասնագետ: Փորձագետների առավել հավաստի, անկողմնակալ և խորքային որակական գնահատումների հիման վրա փորձ է արվել բացահայտելու և պարզաբանելու երիտասարդների շրջանում աշխատանքային միգրացիայի առկա դրդապատճառները, ինչպես նաև հատկորոշել ՀՀ միգրացիոն քաղաքականության համատեքստում երիտասարդների միգրացիոն հակվածությունների մեղմման հնարավոր գործողությունները և կանխարգելմանն ուղղված համարժեք միջոցառումները:

Ըստ հարցաթերթում ներկայացված հարցերի՝ փորձագիտական հարցման արդյունքների վերլուծության ամփոփ պատկերը ներկայացված է ստորև:

Հարց 1. Ըստ Ձեզ, որո՞նք են ՀՀ մարզերից երիտասարդների միգրացիայի դրդապատճառները (հնարավորության դեպքում առանձնացնել գյուղական և քաղաքային բնակավայրերը): Եթե առանձին մարզերի որոշակի առանձնահատկություններ դիտարկվում են, սպա, ինչորում ենք, նշել:

¹²³ Stet UNFPA. Народонаселение мира в 2014 году, էջ 2, https://www.unfpa.org/sites/default/files/pub-pdf/RU-SWOP14_Report_WEB.pdf

Հարցվող փորձագետներից մեկը վկայակոչել է ընթացիկ տարվա սկզբին իրականացրած հետազոտության արդյունքները, որոնք վերաբերում են նաև ՀՀ ներքին միգրացիայի խնդիրների ուսումնասիրությանը: Մասնավորապես՝ ՀՀ մարզերում հարցված բնակիչները փաստել են, որ հատկապես գյուղական բնակավայրերում «կյանքը մեռած է»: Այսինքն՝ երիտասարդների համար գյուղական բնակավայրերում չկան ոչ միայն արդյունավետ և կայուն զբաղվածության, այլև անհրաժեշտ հանգիստը և առօրյան կազմակերպելու հնարավորություններ: Փորձագետը նշվածը համարում է երիտասարդների ներքին միգրացիայի հիմնապատճառներից մեկը, որը և հանգեցնում է դեպի Երևան կամ այլ խոշոր քաղաքներ միգրացիոն հոսքերի ակտիվացմանը: Արձանագրվել են Շիրակի մարզում, հատկապես՝ Գյումրի քաղաքում տեղի ունեցող դրական տեղաշարժերը, որոնք, վերջին տարիներին, Կառավարության որոշակի նախաձեռնություններով պայմանավորված, հանրային կյանքում տեսանելի աշխուժացում են մտցրել: Գյումրին ներքին և արտաքին զբոսաշրջային կենտրոն է, որով որոշակիորեն լուծվում են նաև տեղի բնակչության զբաղվածության խնդիրները: Ի հակադրություն խոշոր քաղաքների՝ արդյունավետ զբաղվածության ապահովման խնդիրներն առավել ցայտուն են գյուղական, հատկապես հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում: Որպես օրինակ են բերվել Սյունիքի մարզի Տանձուտ գյուղը, Տաթևի վանքի հարակից շրջանները, որտեղ բնակվում է շուրջ 20–25 ընտանիք, և որտեղ հանրակրթական դպրոց չի գործում:

Մեկ այլ փորձագետի դիտարկմամբ ևս միգրացիայի հենքային գործոնը Երևանի և խոշոր այլ քաղաքների ու փոքր քաղաքային, գյուղական բնակավայրերի միջև աշխատաշուկայի խիստ արտահայտված անհամաչափությունն է: Դա արտահայտվում է, մասնավորապես, Երևանում ծառայությունների ոլորտում, առանց որոշակի մասնագիտական և այլ պարտադիր նախապայմանների, աշխատուժի պահանջարկի գերակշռմամբ: Էական ազդեցություն ունեն նաև աշխատանքային թվային հարթակների, հատկապես՝ տաքսի ծառայությունների, առաքման ծառայությունների և այլ հնարավորությունների ընդգծված բևեռացումները Երևանում և խոշոր այլ քաղաքներում:

Հարցման մասնակից հաջորդ փորձագետի դիտարկմամբ գյուղական բնակավայրերից ներքին միգրացիան սկսվել է 20-րդ դարի 70-ական թվականների կեսից, երբ Հայաստանում բուռն կերպով ընթանում էր ուրբանիզացման գործընթացը: Դա ուղեկցվում էր քաղաքային բնակավայրերում հավելյալ աշխատուժի պահանջարկով: Առավել հարմարավետ կյանքի, բարձր եկամուտների ձգտումով գյուղական բնակավայրերի մեծաթիվ երիտասարդներ տեղափոխվել են խոշոր քաղաքային բնակավայրեր: Անկախությունից հետո ի հայտ եկան միգրացիայի նոր դրդապատճառներ: Պատերազմի, սոցիալ-տնտեսական բարեփոխումների ոլորտում տեղ գտած անհաջողությունների, Սպիտակի երկրաշարժի հետևանքով ոչ միայն գյուղական, այլ նաև

Հայաստանի Հանրապետության մեծ քաղաքների միգրացիոն տեղա-շարժերն էլ ավելի ակտիվացիան: Հետագա տարիներին ներքին միգրացիան զուգորդվեց արտաքին միգրացիայով: Ներքին միգրացիան հիմնականում ուղղված է դեպի Երևան և երևանամերձ բնակավայրեր: Նախորդ երեք տասնամյակի ընթացքում մարզերից երիտասարդության շարժը դեպի Երևան էապես նվազեցրել է մարզերի մարդկային կապիտալը և դրանով պայմանավորված՝ սոցիալ-տնտեսական համաչափ զարգացման հնարավորությունները:

Իհարկե, ներքին և արտաքին միգրացիայի առումով նշված տասնամյակների ընթացքում արձանագրվել են որոշակի առանձնահատկություններ: Օրինակ՝ անկախության տարիներին Մյունիքի մարզում ներքին և արտաքին միգրացիայի վրա էական և դրական ազդեցություն է ունեցել հանքաարդյունաբերության ոլորտի զարգացումը: Մյուս կողմից՝ Մյունիքում առկա է ժողովրդագրական մեկ այլ խնդիր: Այստեղ բավական ցածր է մնում ծնելիության մակարդակը, որտեղ մեկ կնոջ հաշվով ծնված երեխաների թիվը հանրապետությունում ամենացածրն է: Բացի այդ, մարզի սահմանամերձ բնակավայրերից բնակչության մեծ արտահոսք տեղի ունի՝ պայմանավորված նաև անվտանգային խնդիրներով:

Վայոց ձորի մարզում, երկարաժամկետ առումով, Ամուլսարի հանքերի գործարկվելու պարագայում, դրա միգրացիոն ազդեցությունը գնահատելը բավական դժվար կլինի: Դեռևս շինարարական փուլում այնտեղ մեծ թվով նոր աշխատատեղեր ստեղծվել էին, բացի այդ, հարակից ոլորտներում ապահովվում էին լրացուցիչ տնտեսական արդյունքներ ոչ միայն Ջերմուկ քաղաքի, այլ նաև Վայքի, Եղեգնաձորի և հարակից գյուղական բնակավայրերի համար: Սակայն հանքի շահագործման բնապահպանական հետագա հետևանքների գնահատումը, որը վերաբերում է հատկապես ջրային ռեսուրսների հնարավոր աղտոտմանը, չափազանց կարևոր է մարզի ոչ միայն ժողովրդագրական իրավիճակի բարելավման, այլև միգրացիոն տեղաշարժերի կասեցման առումով:

Շիրակի և Լոռու մարզերում խնդիրը մի փոքր այլ է: 1988 թվականի երկրաշարժը բավական լուրջ հետևանքներ է ունեցել բնակչության տեղաշարժի վրա: Ե՛վ Շիրակը, և՛ Լոռին հանրապետության ամենամեծ տեղաշարժ գրանցած մարզերն են: 1991 թվականից հետո, չնայած Վանաձորը բնակչության թվաքանակով երրորդ խոշոր քաղաքն էր, սակայն ամենաշատ արտահոսքը գրանցվել է Լոռու մարզից: 2011 թվականից հետո մարզի բնակչության թվաքանակը նվազել է շուրջ 70–80 հազար մարդով՝ ներքին և արտաքին միգրացիայի հաշվին: Բնակչության թվաքանակը նվազել է նաև Շիրակի մարզում:

Տավուշի մարզում ևս կան առանձնահատկություններ: Նախ՝ այն գրեթե ամբողջությամբ սահմանամերձ է Ադրբեջանին՝ իր բոլոր անվտանգային հետևանքներով: Լուրջ խնդիրներից է մնում կայուն եկամտի ապահովումը:

Իհարկե, գյուղական բնակավայրերում առաջնայինը պետք է լինի գյուղատնտեսական այնպիսի զբաղվածությունը, որը գյուղացուն կապահովի բավարար և կայուն եկամուտով, որի պայմանները, ցավոք, դեռևս առկա չեն:

Հարցման մասնակից հաջորդ փորձագետն առանձնացրել է երիտասարդների ներքին միգրացիայի հետևյալ դրդապատճառները՝

1. Մասնագիտական կրթությունը ոչ բոլոր մարզերում է հասանելի: Մասնավորապես՝ միջին մասնագիտական կրթական հաստատությունները գործում են խորհրդային ժամանակներից մնացած՝ բարոյապես և ֆիզիկապես մաշված նյութատեխնիկական բազայի հիման վրա: Ոչ բոլոր բուհերը մարզերում ունեն մասնաճյուղեր:

2. Մարզերում երիտասարդների համար չկան արդյունավետ և ակտիվ զբաղվածության բավարար հնարավորություններ և հետաքրքրություններ:

Բացի այդ, փորձագետի կարծիքով, երիտասարդների միգրացիայի դրդապատճառը միայն աշխատանք չունենալը չէ, որն, իհարկե, շատ կարևոր է: Չնայած մարզերում կառուցվում են ճանապարհներ, որոշակիորեն բարելավվում են ենթակառուցվածքները, սակայն համայնքներում մշակութային կյանքը համաչափ չի զարգանում: Մշակութային օբյեկտների, զվարճանքի վայրերի, սրճարանների, այգիների, անվտանգ զբոսնելու կամ հաճելի այլ ժամանց կազմակերպելու հնարավորությունները մարզային երիտասարդության համար խիստ սահմանափակ են: Հետևաբար՝ այս կամ այն պատճառով ժամանակավորապես Երևան տեղափոխված երիտասարդների մի մասը այլևս չի վերադառնում: Երկրորդ՝ գյուղական բնակավայրերից երիտասարդների միգրացիայի որոշակի պատճառ են նաև ավանդույթներից բխող խիստ սահմանափակումները: Դրանք առավել վերաբերելի են Գեղարքունիքի, Արագածոտնի մարզերին, հատկապես՝ Վարդենիսի, Մարտունու, Թալինի տարածաշրջաններին:

Ըստ փորձագետի՝ բերված դրդապատճառները, ընդհանուր առմամբ, առավել թույլ են արտահայտված Շիրակում, Կոտայքում, Արարատում, հատկապես՝ Գյումրի քաղաքում և մերձակա բնակավայրերում, Արովյանում, Հրազդանում, Չարենցավանում, Մասիսում, Արտաշատում:

Հարց 2. Մարզերում վերջին հինգ տարիներին ի՞նչ դրական և բացասական փոփոխություններ են տեսնել երիտասարդների զբաղվածության բարելավման ուղղությամբ, որո՞նք են դրանք (հնարավորության դեպքում՝ առանձնացնել գյուղական և քաղաքային բնակավայրերը):

Հարցման մասնակից փորձագետներից մեկի գնահատմամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող զբաղվածության պետական աջակցության ծրագրերը մարզերում բնակվող երիտասարդների զբաղվածության ապահովման տեսանկյունից որոշակի ազդեցություն ունեն: Օրինակ՝ գործում են անասնապահական և գյուղատնտեսական ժամանակավոր զբաղվածության աջակցության ծրագրեր, որոնք կարող են եկամուտների որոշակի աղբյուր դառնալ գյուղաբնակների

համար: Սակայն փաստ է, որ մարզային բնակավայրերում զբաղվածության պետական աջակցությունը դեռևս բավարար չէ սեփական բնակավայրում երիտասարդների կայուն և արդյունավետ զբաղվածության ապահովման և այս ճանապարհով նաև նրանց ներքին ու արտաքին միգրացիան կանխարգելելու նպատակով:

Հարցված մյուս փորձագետի գնահատմամբ երիտասարդների մարզային զբաղվածության միտումները վերջին տարիներին էական դրական տեղաշարժեր չեն արձանագրել: Այսպես՝ առավել մտահոգիչ է, որ գյուղական բնակավայրերում կան շուրջ 132 հազար աշխատուժից դուրս երիտասարդներ կամ Հայաստանում աշխատուժից դուրս երիտասարդների 43%-ը¹²⁴:

Մյուս կողմից՝ վերջին հինգ տարիներին ՀՀ մարզերում տեղի են ունեցել և կանխատեսվում են մի շարք զարգացումներ, որոնք կարող են դրական ազդեցություն ունենալ երիտասարդների զբաղվածության բարելավման վրա: Մասնավորապես՝ կայուն աճել են զբոսաշրջության հիմնական ցուցանիշները¹²⁵: Հատկանշական է նաև բացառապես բոլոր մարզերում շինարարության ոլորտի աճը և մինչև 2021 թվականը ներառյալ Երևանում այս ցուցանիշի նվազումը: Մարզերի համար դրական արդյունք կարող է արձանագրվել նաև եկամտային հարկի վերադարձի պայմաններով հիպոթեկային վարկավորման աջակցության պետական ծրագրից Երևան քաղաքի դուրսբերումը:

Հաջորդ փորձագետի գնահատմամբ կայուն զբաղվածություն ունեն մի շարք բաղադրիչներ, մասնավորապես՝ կրթությունն ունի լուրջ դերակատարում: Երիտասարդությունը մեկնում է Երևան, և մեծ մասը գյուղական բնակավայրեր չի վերադառնում, քանի որ քաղաքային կյանքը հնարավորությունների տեսակետից անհամեմատ հրապուրիչ է, ինչն օրինաչափ է: Ժամանակակից աշխարհում ևս ուրբանիզացումն ունի բարձր տեմպեր: Օրինակ՝ Թուրքիայում բնակչության ընդամենը 7%-ն է գյուղաբնակ: Տարածաշրջանի մյուս երկրներում, եվրոպական զարգացած երկրներում հասարակությունը ուրբանիզացված է: Այսինքն՝ եթե ՀՀ-ն էլ ավելի զարգացած գյուղատնտեսություն ունենար, գյուղական բնակչությունը կլիներ հարաբերականորեն ավելի պակաս: Սա միջազգային միտումներից բխող նորմալ գործընթաց է: Սակայն, երբ խոսքը ներքին միգրացիայի մասին է, դրական զարգացման տրամաբանությունը պահանջում է, որ բնակչության կենտրոնացումը չլինի միայն Երևանում և երևանամերձ տարածքներում: Քաղաքային այլ խոշոր բնակավայրեր ևս պետք է համաչափ զարգանան, այդ թվում՝ Գյումրին, Վանաձորը, Իջևանը, Դիլիջանը, Գորիսը, Կապանը, Արտաշատը և այլն, որպեսզի այդ քաղաքները ևս կարողանան բնակչության ներքին հոսքերը կլանել:

¹²⁴ Աղբյուրը՝ Lab_Market_2022_9 (armstat.am)

¹²⁵ Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2022, armstat.am

Հիմնական խնդիրներից մեկն էլ գյուղական բնակավայրերի զարգացման ծրագրերին բավարար ուշադրություն չհատկացնելն է: Այսօր ևս այդ ծրագրերը դեռևս ամբողջական չեն, և բոլոր խնդիրները լուծված չեն: Կարևոր է շարունակում մնալ գյուղում բնակվող երիտասարդների կայուն և բավարար եկամտի ապահովումը: Երիտասարդներն ունեն աշխատելու ցանկություն, կարող են զբաղվել թե՛ հողագործությամբ և թե՛ անասնապահությամբ, սակայն այդ ոլորտները չեն դիտարկվում որպես կայուն եկամտի բավարար աղբյուր: Եթե ենթակառուցվածքների խնդիրները չեն լուծվում, ապա բարձրարժեք գյուղատնտեսության գոյությունը և զարգացումը դառնում են անիրական: Զարգացած գյուղատնտեսություն ունենալու դեպքում գյուղաբնակ բնակչությունը 35%-ի չէր հասնի: Բնականաբար, անհրաժեշտ է հաշվի առնել առավելապես սահմանամերձ բնակավայրերի գոյությունը և հնարավոր ամեն ինչ անել, որպեսզի այնտեղ կյանքը լինի անվտանգ, բնակչության համար ապահովվեն որակյալ կենսապայմաններ, ինչը նաև կկանխի երիտասարդների արտագաղթը:

Մեկ այլ փորձագետի գնահատմամբ համայնքներում հիմնական փոփոխությունները եղել են ենթակառուցվածքների ոլորտում, օրինակ՝ ճանապարհաշինության, ձևավորվել են սոցիալական ենթակառուցվածքներ, դպրոցներ, բայց դրանք դեռևս բավարար չափով չեն բարելավել մարզային երիտասարդների կյանքը, քանի որ հանրային կյանքի մնացած կարևոր խնդիրների լուծումները դեռևս նույնիսկ ծրագրված չեն, այդ թվում՝ արդյունավետ կրթության հասանելիությունը, մշակութային կյանքը, հանգիստը, զվարճանքը և այլն: Ինչ վերաբերում է գործարարությանը, ապա մարզերում դա ունի ակտիվացման լրացուցիչ խնդիրներ: Խոցելի տարածաշրջաններում նոր աշխատատեղերի առումով ևս էական տեղաշարժեր չեն արձանագրվել: Օրինակ՝ Տավուշի, Շիրակի կամ Լոռու մարզերում որոշ գործարաններ բացվել են, սակայն Արագածոտնի մարզում որևէ արդյունաբերական ընկերություն չկա: Այսինքն՝ մարդիկ որքան էլ ցանկանան աշխատել արտադրությունում, այդպիսի հնարավորություններ չկան: Ընդ որում, մարզերում արդյունաբերության ամենատարածված ճյուղը պահածոյագործությունն է, իսկ որոշ տարածաշրջաններում՝ հանքագործությունը: Հետևաբար՝ պետությունը համայնքների զարգացման ծրագրերով պետք է թիրախավորի նաև զբաղվածության խնդիրները: Այսպես՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը զբաղվածության պետական աջակցության ոլորտում մեծ հաջողություններ չունի: Ավելացող նոր աշխատատեղերը հիմնականում ստվերից դուրս եկողներն են: Արմավիրի մարզում, օրինակ, տնտեսական արդյունավետության որոշակի աճ կա ինտենսիվ գյուղատնտեսական ծրագրերի իրագործման արդյունքում, սակայն գյուղատնտեսական մյուս մարզերում արդյունավետ գյուղատնտեսական զբաղվածության մեծ տեղաշարժեր, զարգացման հնարավորություններ չեն արձանագրվել: Այս ամենին պետք է ավելաց-

նել, որ ներդրումների տեսանկյունից խոչընդոտները ևս բազմաշերտ են (համայնքներում հողերի կատեգորիա փոխելը, ներդրողին ուղեկցելը): Ներդրողի կադաստրում կամ գյուղապետարաններում խնդիրները շատ են, որոնց հետևանքով ներդրողներն ունենում են տնտեսավարման լուրջ խոչընդոտներ: Հնարավոր էր ավելի արագ արդյունքներ գրանցել, եթե այդ խնդիրներին առաջանցիկ լուծումներ տրվեին: Էական դրական փոփոխությունները քիչ են Արագածոտնում և Արարատում: Սյունիքը պետական առավել մեծ ուշադրության կենտրոնում է:

Հարց 3. Ինչպե՞ս կգնահատեք զբաղվածության պետական քաղաքականության իրականացման արդյունավետությունը մարզերում (1–10 միավորային գնահատման համակարգով, որտեղ «1»-ը նշանակում է պետական հերևողական քաղաքականության բացակայություն, «10»-ը՝ լիարժեք կարգավորում): Ինչպե՞ս է դա դրսևորվում:

Հարցված փորձագետներից մեկը զբաղվածության քաղաքականությունը գնահատում է 5–6 միավոր՝ նկատի ունենալով, որ հատկապես վերջին 2–3 տարիներին լուրջ խնդիրներ կան զբաղվածության ծրագրերի իրականացման ոլորտում: Նույնիսկ եղել է մի փուլ, որ այդ ծրագրերը ուղղակի կասեցվել են, և դրանց փոխարեն նորերը չեն գործարկվել, ինչը լուրջ խնդիր է: Այսինքն՝ կային ծրագրեր, որոնք, եթե նույնիսկ այդքան էլ արդյունավետ չէին, ամեն դեպքում՝ թեկուզ դրական փոքր ազդեցություն կարող էին ունենալ: Իսկ երբ դրա փոխարեն ոչինչ չի իրականացվում, ապա սա լուրջ խնդիր է:

Փորձագետի գնահատման ընդհանուր արդյունքներով կարելի է եզրակացնել, որ զբաղվածության թիրախային պետական քաղաքականության կարիք կա հատկապես երիտասարդների և կանանց մասով: Այլ հետազոտություններ ևս ցույց են տվել, որ խնդիրներ կան նաև փոքր ու միջին ձեռներեցության ոլորտում կանանց ներգրավման առումով, չնայած այն բանին, որ կին հաջողակ գործարարները շատ են:

Ըստ փորձագետի տեղեկության՝ այս ոլորտում պետական և հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ բազմաթիվ ծրագրեր իրականացվել են, սակայն դրանք երբեմն հասնում են մի փուլի, երբ առաջարկված նոր գաղափարները և նախաձեռնությունները չեն իրագործվում: Այս առումով, փորձագետը ներկայացրել է Տավուշի մարզում թեյի արտադրության հաջողված մի օրինակ, ըստ որի, սկսնակ գործարարը, իրագործելով իր ծրագիրը և նպատակը, կարողացել է հասնել որոշակի հաջողության՝ մարզում առկա բնակլիմայական առավելություններն օգտագործելով: Մարզերում կա մեծ ներուժ, նպատակային պետական աջակցությամբ և մարզերի առանձնահատկություններն ու համեմատական առավելությունները հաշվի առնելով, նաև կանանց ներգրավմամբ, թիրախային բիզնես ծրագրեր մեկնարկելու համար:

Փորձագետի ներկայացմամբ արդյունավետ և կայուն զբաղվածության ապահովման տեսանկյունից էական են կրթության ոլորտում առկա խնդիրների համակարգային լուծումները, այդ թվում՝ կրթություն-աշխատաշուկա քանակական ու որակական արդյունավետ կապի և հավասարակշռության ապահովումը: Այստեղ հատկանշական խնդիրներ են շարունակում մնալ աշխատանքի և զբաղվածության, կրթության ու էկոնոմիկայի ոլորտներում լիազոր մարմինների սերտ և համակարգված աշխատանքի ապահովումը, զբաղմունքի դասակարգիչների և կրթական չափորոշիչների վերանայման ու համապատասխանեցման գործընթացների իրականացումը՝ ըստ ժամանակակից պահանջների: Օրինակ՝ շուրջ 20 տարի առաջ գրեթե ոչ ոք չէր ցանկանում անասնաբույժ դառնալ, իսկ այժմ, երբ անասնաբուժությունը դարձել է բավականին բարձր վճարվող և պահանջված մասնագիտություն, այդ մասնագիտության դիմորդների թիվը զգալի ավելացել է: Զբոսաշրջության առաջանցիկ զարգացումն էլ իր հերթին է ձևավորում այդ ոլորտի մասնագետների երկարաժամկետ մեծ պահանջարկ:

Հարցման ենթակա հաջորդ փորձագետի ներկայացմամբ զբաղվածության պետական քաղաքականության և ծրագրերի լիարժեք գնահատման համար բաց աղբյուրներում բացակայում են անհրաժեշտ համապատասխան տեղեկատվությունը, ինչպես նաև ընթացիկ մշտադիտարկման և արդյունքների գնահատման հաշվետվությունները:

Մյուս փորձագետը զբաղվածության պետական քաղաքականությունը գնահատում է բավականին ցածր՝ երկու միավոր՝ հետևյալ հիմնավորմամբ: Նախ՝ Հայաստանը պետք է իրականացներ Աշխատանքի միջազգային կազմակերպության 122-րդ կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները, ըստ որի՝ պետք է մշակվեր զբաղվածության նոր ռազմավարություն սոցիալական գործընկերության ձևաչափում, ինչը դեռևս կատարված չէ: Հաջորդը՝ զբաղվածության քաղաքականության գործող կարգավորումների և դրանց գործադրման ոչ արդյունավետ լինելն է: Գործատուները խուսափում են զբաղվածության պետական ծրագրերում ներգրավվելուց, որովհետև դրանց իրականացման կարգերը խիստ բարդ են, սահմանափակումները՝ շատ, իսկ վերահսկողական մեխանիզմներն անկատար են:

Հարց 4. Երիտասարդների միգրացիայի կանխարգելման ի՞նչ հնարավոր միջոցառումներ կան, որոնք ՀՀ-ում չեն իրականացվում:

Փորձագետներից մեկի դիտարկմամբ ռազմավարական տեսանկյունից խիստ կարևոր է աշխատաշուկայի փոփոխվող պահանջարկի արդյունավետ բավարարման իրական պայմանների ապահովումը կրթական համակարգի սերտ փոխգործակցությամբ:

Հաջորդ փորձագետը ներկայացրել է հետևյալ առաջարկությունները.

1. Հմտությունների զարգացում և մասնագիտական շարունակական ուսուցում. գյուղական բնակավայրերում կարելի է ակտիվացնել մասնագի-

տական ուսուցման կենտրոնների գործունեությունը երիտասարդներին տեղական աշխատաշուկայի կարիքներին և որակական պահանջներին համահունչ հնտություններով օժտելու նպատակով: Այս կենտրոնները պետք է առաջարկեն վերապատրաստումներ գյուղատնտեսության, տեխնոլոգիաների, զբոսաշրջության, սպասարկման և տարածաշրջանային կարիքներին համապատասխանող այլ ոլորտներում:

2. Հեռավար աշխատանքի հնարավորությունների լիարժեք ապահովում. անհրաժեշտ է խթանել հատկապես գյուղական բնակավայրերում հեռավար աշխատանքը՝ բարելավելով համացանցային ենթակառուցվածքը, ստեղծելով համատեղ աշխատանքային տարածքներ (co-working): Անհրաժեշտ է պետական ծրագրերով և խթանիչ կարգավորումներով խրախուսել քաղաքային բնակավայրերի գործատուներին՝ հեռավար եղանակով վարձելու գյուղական շրջաններից երիտասարդ աշխատողների՝ նրանց համար ապահովելով կայուն աշխատանք:

3. Գյուղական նորարարական կենտրոնների հիմնում և զարգացման աջակցություն. պետական մասնակցությամբ և աջակցությամբ հարկ է հիմնել գյուղական ինովացիոն կամ տեխնոլոգիական կենտրոններ, որոնք կապահովեն ժամանակակից տեխնոլոգիաներին հասանելիություն, թվային հնտությունների ուսուցում և տեխնոլոգիական ստարտափների խթանում: Այս հանգույցները կարող են հնարավորություններ ստեղծել երիտասարդների համար՝ ստարտափների մտահաղացումների ու իրագործման ուղղություններով:

Մեկ այլ փորձագետի դիտարկմամբ երիտասարդների միգրացիայի կանխարգելման քաղաքականության շրջանակներում պետք է լիարժեք հաշվի առնվեն մեր երկրի շուրջ ձևավորված անվտանգային, աշխարհաքաղաքական միջավայրը և սպառնալիքները: Այսինքն՝ երիտասարդը պետք է ունենա որոշակիություն ապագայի հանդեպ՝ տեսնի բարեկեցիկ և անվտանգ ապրելու իրական հեռանկար: Պետական աջակցության ծրագրերն էլ պետք է լինեն առարկայական հենքի վրա, թիրախավորված և արդյունքահենք: Փորձագետը կարևորել է նաև տեղական աշխատաշուկայի կարիքների քանակական և որակական բավարարման անհրաժեշտությունը՝ կրթության ոլորտի հետ համագործակցաբար և պետական աջակցության խթանիչ ծրագրերի գործադրմամբ: Օրինակ՝ պետությունը պետք է թիրախավորի տվյալ տարածաշրջանում պահանջարկ ունեցող մասնագիտությունները և պայմանագրային հիմունքներով ապահովի, որ տարածաշրջանի երիտասարդներն այդ մասնագիտություններն անվճար սովորեն, ստանան բարձր կրթաթոշակ՝ պայմանով, որ ավարտելուց հետո կվերադառնան իրենց բնակավայրեր՝ ապրելու և աշխատելու:

Հաջորդ փորձագետի գնահատականի համաձայն՝ զբաղվածության պետական աջակցության ծրագրերը պետք է լինեն ոչ թե վերացական, ընդհան-

րական ու ստանդարտացված, այլ պետք է ներառվեն տվյալ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում՝ հաշվի առնելով տարածաշրջանային յուրահատկություններն ու համեմատական առավելությունները: Նա ևս կարևորել է տեղական աշխատաշուկա-կրթություն փոխկապվածության արդյունավետ ապահովումը և տեղական աշխատաշուկայի պահանջարկի արդյունավետ բավարարման խնդիրների առաջանցիկ լուծումները: Մասնավորապես նշվել է, որ տարիներ շարունակ հանրապետության տարբեր տարածաշրջաններում շարունակում են չհամալրված մնալ շուրջ երկու տասնյակ մասնագիտություններով հարյուրավոր աշխատատեղեր: Եվ սա այն դեպքում, երբ այդ նույն տարածաշրջաններում շարունակում են բարձր մնալ երիտասարդների երկարատև գործազրկության, թերզբաղվածության մակարդակները, որոնք գործնականում դառնում են նաև միգրացիայի հիմնապատճառ:

Այսպիսով՝ փորձագետների գնահատականների համաձայն, երիտասարդների միգրացիայի դրդապատճառներից առաջնայինը տարածաշրջանային և, մասնավորապես՝ ՀՀ-ի շուրջ գոյություն ունեցող աշխարհաքաղաքական սպառնալիքներն են: Տարածաշրջանային անհամաչափ զարգացումն էլ, իր հերթին, հանգեցրել է երիտասարդների թերզբաղվածության, գործազրկության բարձր մակարդակի, կյանքի ցածր որակի և անորոշ տնտեսական հեռանկարների: Մարզերում երիտասարդների սոցիալ-մշակութային կյանքը, հանգիստն ու զվարճանքը կազմակերպելու հնարավորությունները ևս բավարար չեն: Որպես ռազմավարական առանցքային խնդիր առանձնացվել է աշխատաշուկա-կրթական համակարգ քանակական և որակական շարունակվող անհամապատասխանությունը: Փորձագետները մարզերում իրականացվող զբաղվածության պետական քաղաքականության արդյունավետությունը, ընդհանուր առմամբ, գնահատել են միջինից ցածր: Որպես հիմնական խնդիրներ առանձնացվել են գործող ծրագրերի թերակատարումները, նորերի բացակայությունը, մարզերի սոցիալ-տնտեսական առանձնահատկությունների և համեմատական առավելությունների վրա թիրախավորման բացակայությունը, զբաղվածության պետական աջակցության ծրագրերի և համայնքային զարգացման ծրագրերի թույլ փոխկապվածությունը կամ դրա բացակայությունը:

Համայնքների սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական իրավիճակի վրա երիտասարդների միգրացիայի ազդեցության երկրորդային տվյալների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ.

1. Հայաստանում Հանրապետությունում երիտասարդների էմիգրացիայի վրա ազդող գործոնները, որպես կանոն, դրսևորել են փոխկապակցված բնույթ, սակայն որոշ ֆորսմաժորային իրավիճակներում տեղ են գտել հակադարձ միտումներ: ՀՀ-ում երիտասարդների միգրացիայի վրա ազդող առաջնային և հիմնական գործոնը եկամուտների ցածր մակարդակն է: Եկամուտների անհավասարության նվազումը ուղեկցվում է երիտասարդների արտագաղթի նվազմամբ: Միննույն ժամանակ, եկամուտների ընդհանուր աճը, ինքնին, չի կարող թուլացնել երիտասարդների շրջանում էմիգրացիոն հակվածությունը: ՀՀ-ում էմիգրացիոն հակումները թուլացնելու տեսանկյունից առավել մեծ կարևորություն և շոշափելի ազդեցություն ունի ցածր եկամուտներ ունեցող երիտասարդների եկամուտների առաջանցիկ աճի ապահովումը:

2. Մարդկանց միգրացիոն հակումների վրա ազդող մեկ այլ կարևոր մակրոգործոն է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանը: Կարճաժամկետ առումով, մեկ շնչի հաշվով ՀՆԱ աճը չի կարող էական ազդեցություն ունենալ այն մարդկանց որոշումների վրա, ովքեր ցանկանում են տեղափոխվել և մշտական բնակություն հաստատել այլ երկրներում՝ կայուն և բարեկեցիկ կյանքի ձգտումով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ տնտեսության և զարգացած երկրների տնտեսությունների միջև դեռևս առկա էական խզվածությունը:

3. Երիտասարդների միգրացիայի ակտիվացումը, որպես կանոն, հանգեցնում է աղքատության մակարդակի նվազման և հակառակը՝ գործազրկության մակարդակի աճը մեծացնում է միգրացիոն հակումները: Սակայն երիտասարդների էմիգրացիա - գործազրկության մակարդակ ուղղակի կապը բավականին թույլ է արտահայտված, քանի որ դիտարկվող ժամանակահատվածում այլ գործոններն առավել զգալի դերակատարում են ունեցել: Էմիգրացիայի որոշումների հիմք է նաև առավել բարձր աշխատավարձի և սոցիալական վիճակի բարելավման ձգտումը:

4. Երիտասարդների էմիգրացիայի որոշումները պայմանավորված են նաև ընդունող երկրում ակնկալվող իրական վարձատրության և սեփական երկրում ստացվող փաստացի վարձատրության տարբերություններով և աշխատանքային այլ պայմաններով ու կարիերայի հեռանկարներով: Այսինքն՝ երիտասարդը, ձգտելով նույն աշխատանքի դիմաց ավելի մեծ աշխատանքային եկամուտների, արտագաղթում է ավելի զարգացած երկրներ:

5. Գյուղատնտեսությունը շատ երկրներում, ինչպես Հայաստանում, շարունակում է մնալ բնակչության եկամուտների ստացման և զբաղվածության ապահովման հիմնական ոլորտը, որի զարգացումը հատկապես կարևոր է գյուղական բնակչության եկամուտների կայունության ու աճի, հետևաբար և երիտասարդների միգրացիոն հակումների թուլացման առումով: Հավելենք, որ գյուղատնտեսության ոլորտը ապահովում է միայն սեզոնային զբաղվածություն, ինչն էլ, իր հերթին, կարող է էմիգրացիան խթանող գործոն դառնալ:

6. Կրթությունը և մարդկային կապիտալի զարգացումը երիտասարդների միգրացիոն որոշումների առումով առանցքային դեր ունեն: Երիտասարդ մասնագետները կարող են ձևավորել կարիերայի աճի այնպիսի նոր ձգտումներ, որոնք գերազանցում են տեղական միջավայրում առկա հնարավորությունները: Սեփական երկրում բարձր որակավորում ունեցող երիտասարդ մասնագետներին համապատասխան աշխատատեղերով չհասնելու դառնում է «ուղեղների արտահոսքի» շարժառիթ:

7. Միգրացիոն հոսքերի վրա դրամական փոխանցումների ազդեցությունը միանշանակ գնահատականի չի արժանանում. մի կողմից՝ միգրացիոն հոսքերի ակտիվացումը հանգեցնում է դրամական հոսքերի ծավալի ավելացման, սակայն, մյուս կողմից՝ ընտանիքի մեկ անդամի արտագաղթած լինելու հանգամանքը մեծացնում է ընտանիքի վերամիավորման նպատակով մյուս անդամների արտագաղթի հավանականությունը: Վերջին հանգամանքով պայմանավորված՝ էմիգրացիայի աճը կարող է ուղեկցվել օտարերկրյա դրամական փոխանցումների համապատասխան նվազմամբ:

8. Ամփոփելով կարելի է պնդել, որ ՀՀ-ում երիտասարդների էմիգրացիայի վրա ազդող գործոնները, հիմնականում, դրսևորել են փոխկապակցված բնույթ, սակայն, COVID-19 համաճարակի, քառօրյա և քառասունչորսօրյա պատերազմների հետևանքներով պայմանավորված, երիտասարդների միգրացիայի և ընտրված մակրոտնտեսական մի շարք ցուցանիշների դինամիկայի փոխանջությունները ցուցաբերել են հակադարձ միտումներ:

ՀՀ-ում երիտասարդների միգրացիայի և ժողովրդագրական իրավիճակի տարածքային անհամաչափությունների ու միտումների ուսումնասիրությունը փաստում է.

1. Ազդեցացված պատկեր ստանալու համար ՀՀ մարզերը դասակարգվել են ժողովրդագրական չորս ցուցանիշների հիման վրա՝ ծնելիության տեմպ, մահացության տեմպ, բեռնվածության գործակից, երիտասարդ միգրանտների թվաքանակի տեսակարար կշիռ բնակչության ընդհանուր թվաքանակում: Այնուհետև՝ դիտարկվող ժամանակահատվածում, ՀՀ մարզերի ժողովրդագրական իրավիճակի ամփոփ գնահատման միջին տարեկան արդյունքները դասակարգվել են բացասականից դրական, և ստացվել է մարզերի ժողովրդագրական իրավիճակի վարկանշավորումը:

Մասնավորապես՝ ՀՀ մարզերում ծնելիության աճի տեմպն ունի նվազման միտում: Հետազոտվող ժամանակաշրջանի վատագույն ցուցանիշը գրանցվել է 2020 թվականին Արարատի մարզում, իսկ լավագույնը՝ Վայոց ձորի մարզում: Ընդհանուր առմամբ, ըստ տարիների և ՀՀ մարզերի, ծնելիության ցուցանիշի տեմպը դրսևորել է էական շեղումներ, ինչը վկայում է տարածքային բարձր անհամամասնություններ պարունակող պայմանների մասին:

2. Մահացության աճի տեմպերի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2020 թվականին Վայոց ձորի մարզում: Այդ նույն տարում, 44-օրյա պատերազմով և COVID-19 համավարակով պայմանավորված, մահացության ցուցանիշը ՀՀ ողջ տարածքում էապես աճել է: Բոլոր մարզերում աշխատունակ տարիքի բնակչության թիվը կրճատվում է, որը հանգեցնում է աշխատանքային տարիքի բնակչության բեռնվածությունն աճին:

3. Մարզերի բնակչության ընդհանուր թվաքանակում երիտասարդ միգրանտների թվաքանակի տեսակարար կշիռը մինչև 2020 թվականը բարձր է եղել Շիրակի, Լոռու, Արարատի մարզերում և Երևան քաղաքում: 2020–2021 թվականներին ցուցանիշը կայուն աճել է Սյունիքի մարզում, ամենայն հավանականությամբ, պայմանավորված 44-օրյա պատերազմի փաստով: Վայոց ձորի մարզում մշտապես դիտարկվել է երիտասարդ միգրանտների բարձր տեսակարար կշիռ, որը, հիմնականում, մարզի բնակչության՝ միջին հանրապետականից ցածր եկամուտներ ունենալու հետևանքն է:

4. Ժողովրդագրական չորս ցուցանիշների հիման վրա (ծնելիության տեմպ, մահացության տեմպ, բեռնվածության գործակից, բնակչության ընդհանուր թվաքանակում երիտասարդ միգրանտների թվաքանակի տեսակարար կշիռ) ՀՀ մարզերի դասակարգումը ցույց է տալիս, որ որևէ մարզում, դիտարկվող ժամանակահատվածում, բոլոր ցուցանիշների գծով առավելագույն դրական ժողովրդագրական պատկեր չի արձանագրվել: Առավելագույն միավոր արձանագրվել է 2019 թվականին Վայոց ձորի մարզում: Բոլոր 4 ցուցանիշներով բացարձակ վատ ժողովրդագրական իրավիճակ ևս չի արձանագրվել: Գնահատման վատագույն միավորներ ստացվել են առավելագույնը 3 ցուցանիշի գծով: Ըստ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ մարզերի ժողովրդագրական իրավիճակի վարկանշավորման արդյունքների՝ ամենավատ ժողովրդագրական իրավիճակն արձանագրվել է Լոռիում, Տավուշում և Երևանում: Միջինում ամենալավ ժողովրդագրական իրավիճակ արձանագրած եռյակում են Գեղարքունիքի, Արմավիրի, Սյունիքի մարզերը:

5. Ըստ մարզերի և Երևան քաղաքի երիտասարդների միգրացիայի տարեկան շղթայական հավելաճի տեմպերի ուսումնասիրությունը ցույց է տալիս՝ թեև, 2020 թվականին COVID-19 համաճարակի սահմանափակումներով պայմանավորված, երիտասարդների ընդհանուր միգրացիայի մակարդակը

կտրուկ նվազել է, սակայն Սյունիքի մարզում նկատվում է միգրացիոն հոսքի էական հավելում:

6. Երիտասարդների միգրացիան ունի նաև տարածքային անհամաչափություններ: Կիրառված ցուցանիշների ամփոփ գնահատման և ՀՀ մարզերի ու Երևան քաղաքի վարկանշավորման արդյունքում պարզվում է, որ միջինում ամենավատ ժողովրդագրական իրավիճակն արձանագրվել է Լոռու մարզում, իսկ հարաբերականորեն ամենալավը՝ Գեղարքունիքի մարզում:

7. Մարզերի անհամաչափ զարգացումը և սահմանամերձ լինելու հանգամանքը էականորեն ազդում են միգրացիոն գործընթացների վրա: Նշված հանգամանքը Սյունիքի և Վայոց ձորի մարզերում առաջնային է՝ բնակչության եկամուտները և բնակչության պայմանները բնութագրող գործոնների համեմատությամբ: 2020 թվականի և հետագա շնչերով պայմանավորված՝ ոչ սահմանամերձների համեմատությամբ սահմանամերձ մարզերից միգրացիայի միջին հավելումի տեմպը բարձր է եղել:

Երիտասարդ միգրանտների արտագաղթի ինտենսիվության, մակրոտնտեսական ու ժողովրդագրական հիմնական ցուցանիշների և դրանց փոխառնչությունների գնահատումն ու կանխատեսումը ցույց են տալիս.

1. Բացահայտված հետևյալ փոխառնչությունները՝

- միգրացիա - մեկ շնչի հաշվով ՀՆԱ հակադարձ կապ, այսինքն՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ աճը հանգեցնում է միգրացիայի կրճատման,
- միգրացիա - միջին աշխատավարձ հակադարձ կապ, սակայն էապես թույլ և ոչ նշանակալի,
- միգրացիա - նվազագույն աշխատավարձ հակադարձ, սակայն չափավոր կապ,
- միգրացիա – միջին և նվազագույն աշխատավարձերի հարաբերակցություն, առկա է ուղիղ և էական կապ, որը նշանակում է, որ միջին և նվազագույն աշխատավարձերի միջև ճեղքվածքի խորացումը հանգեցնում է միգրանտների թվի աճի,
- միգրացիա – Ջինիի գործակից, առկա է ուժեղ և ուղղակի կապ, որը նշանակում է՝ եկամուտների անհավասարությունը և բևեռացումը էական նպաստող գործոն են երիտասարդների միգրացիայի համար,
- միգրացիա - աղքատության մակարդակ կապը նշանակալի չէ,
- միգրացիա - գործազրկության մակարդակ, առկա է ուղիղ կապ, որը նշանակում է՝ գործազրկության մակարդակի աճը հանգեցնում է երիտասարդների միգրացիայի աճի:

2. Եկամուտների անհավասարության (Ջինիի գործակից) գործոնով բացատրվում է երիտասարդների միգրացիայի ցուցանիշի փոփոխության մոտ 70%-ը. Ջինիի գործակիցի 1%-ով աճը հանգեցնում է երիտասարդների միգրացիայի թվի 1.9%-ով աճի, իսկ մեկ միավոր եկամուտների անհավասարության աճը հանգեցնում է 1,370 միավոր միգրացիայի ցուցանիշի աճի: Այսինքն՝

եկամուտների անհավասարությունը ՀՀ-ում երիտասարդների էմիգրացիայի էական գործոն է, ինչպես նաև նախորդ ժամանակաշրջանում ընտանիքի անդամի միգրացիան գործնականում խթանում է հաջորդ ժամանակաշրջանում ընտանիքի մյուս անդամների միգրացիան: Հետևաբար՝ եկամուտների առավել արդարացի բաշխումը, ցածր եկամուտներ ունեցող երիտասարդների և նրանց ընտանիքների եկամուտների առաջանցիկ, կայուն աճի ապահովումը կարող են էական դրական ազդեցություն ունենալ միգրացիոն ճնշումները զսպելու և երիտասարդների շրջանում միգրացիայի հակումները նվազեցնելու առումով:

3. 2013–2021 թվականներին երիտասարդների միգրացիայի միտումները ՀՀ-ում ձևավորվել են սոցիալ-տնտեսական, կրթական և աշխարհաքաղաքական, տարածքային անհամաչափ զարգացման մի շարք որոշիչ գործոնների ազդեցությամբ: Ընդհանուր և առանձին տարածաշրջաններում արձանագրված միտումներից երիտասարդների արտաքին միգրացիայի էական շեղումներ են արձանագրվել՝ պայմանավորված 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմի, 2020 թվականի COVID-19 համավարակի և 44-օրյա պատերազմի հետևանքներով:

Երիտասարդների միգրացիայի ընտրանքային հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ.

1. ՀՀ առկա բնակչության էմիգրացիոն ներուժը դեռևս սպառված չէ, չնայած վերջին տարիներին դիտարկվում է էմիգրացիայի տեմպերի թուլացում: Դա կարելի է բացատրել ընդունող երկրներում, հատկապես Ռուսաստանի Դաշնությունում ձևավորված տնտեսական իրավիճակով, որի դեպքում արտագաղթը տնտեսական տեսանկյունից դառնում է ոչ շահավետ: Էմիգրացիան ՀՀ բնակչության համար շարունակում է մնալ որպես գոյատևման և կենսապահովման կարևոր գործոն:

2. Միգրացիայի ամենամոբիլ խմբերը բարձրագույն և ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողներն են, նրանց բաժնեմասը, հարցվող միգրանտների ընդհանուր թվաքանակում, ուսումնասիրվող բոլոր տարիներին եղել է ամենաբարձրը: Բարձրագույն կրթություն ունի միգրանտ կանանց կեսից ավելին, իսկ տղամարդկանց 1/3-ը, այն դեպքում, երբ ընդհանուր միջնակարգ կրթություն ստացած միգրանտ տղամարդկանց թիվը 2.1 անգամ ավելի է կանանց թվից: Գյուղական (Արարատի, Արմավիրի, Տավուշի, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերից) բնակավայրերից միգրացված արական սեռի աշխատանքային միգրանտները, որպես կանոն, ունեն միջնակարգ կամ հիմնական կրթություն:

3. Դեպի Ռուսաստան միգրացիային բնորոշ է սեզոնային աշխատանքը, ԱՄՆ և Եվրամիության երկրներ մեկնողներն ավելի երկարատև աշխատանքային միգրանտներն են, մշտական բնակության կամ ընտանիքի վերամիավորման, կրթության նպատակներով մեկնածները: Եվրամիության

երկրներ մեկնած երիտասարդների 1/4-ից ավելին ունի մագիստրոսական և հետբուհական կրթություն ստանալու նպատակ, նրանք հայտնել են նաև հայրենիք վերադառնալու մտադրության մասին:

4. Մարզերից միգրացվածները նախապատվությունը տալիս են ավելի մոտ տարածաշրջաններ, հիմնականում Ռուսաստան մեկնելուն, որտեղ հանգրվանել է հարցվածների ընդհանուր թվի կեսից ավելին:

5. Հարցված միգրանտները գլխավորապես վարձու աշխատողներ են, ինքնազբաղված և գործատու, ժամանման երկրներում ստեղծել են աշխատատեղեր շինարարության և առևտրի (Ռուսաստան), տրանսպորտի և հասարակական սննդի ոլորտներում (ԵՄ երկրներ և ԱՄՆ): Կրթության նպատակով արտերկիր մեկնել է հարցվողների 10.4%-ը: Հարցվողների ընդհանուր թվում նշանակալի է տնտեսագետի, հաշվապահի, մանկավարժի, ճարտարագետի, իրավաբանի մասնագիտությունների տիրապետողների թիվը:

6. Ժամանման երկրներում միգրանտները զբաղվածություն են գտել ծառայությունների (ներառյալ՝ սպասարկում), տրանսպորտի ոլորտներում (մեծ մասամբ՝ որպես վարորդ): Այլ ոլորտներում զբաղվածները հիմնականում սովորողներ են, ծերերի, երեխաների խնամքի, տնային աշխատանքներում ներգրավված անձինք: ՌԴ մեկնածները հիմնականում զբաղված են շինարարական աշխատանքներում, ծառայությունների ոլորտում և առևտրում:

7. Ըստ առանձին մարզերի միգրանտների զբաղվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Երևանից մեկնածների 1/4-ից ավելին աշխատանք է գտել ծառայությունների ոլորտում, այն դեպքում, երբ Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Լոռու, Սյունիքի մարզերից էմիգրացվածների մեծ մասը ներգրավված է շինարարության ոլորտում, Արմավիրի և Վայոց ձորի մարզերից մեկնածների զգալի մասը զբաղված է ծառայությունների և սպասարկման ոլորտներում, Տավուշի մարզում գերակշռում են առևտրի ոլորտում զբաղվածները:

8. Հարցված էմիգրանտներն առավելապես (89.5%-ը) արտագաղթել են օրինական հիմունքներով:

9. Տարբեր նպատակներով ՌԴ մեկնածների թվաքանակում գերակշռում են աշխատանքային միգրանտները, բարձր է նաև ընտանիքի վերամիավորման և մշտական բնակություն հաստատելու նպատակներով միգրացվածների տեսակարար կշիռը: Աշխատանքային միգրացիայի հոսքերը տեղ են գտել նաև Եվրամիության երկրներում, սակայն այստեղ բավականին բարձր է կրթության նպատակով մեկնածների տեսակարար կշիռը: ԱՄՆ-ն ՀՀ-ից միգրացվածների թվաքանակի առումով երրորդ ռեցիպիենտ երկիրն է: Աշխատանքային միգրանտների տեսակարար կշիռը բարձր է Կոտայքի, Լոռու, Վայոց ձորի, Տավուշի, Արմավիրի և Արագածոտնի մար-

զերում, ընդհանուր միգրացվածների կառուցվածքում ամենացածրը Երևանից մեկնած աշխատանքային միգրանտների տեսակարար կշիռն է: Մնացած թիրախների համեմատությամբ բավականին բարձր է մշտական բնակություն հաստատելու (Արարատի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի մարզեր) և ընտանիքի վերամիավորման նպատակով (Գեղարքունիքի մարզ) միգրացվածների տեսակարար կշիռը: Կրթության նպատակով միգրացվածների ամենաբարձր ցուցանիշը Երևանինն է:

10. Էմիգրացիայի դրդապատճառներից հիմնականները կապված են զբաղվածության հիմնախնդիրների՝ աշխատատեղերի և, մասնավորապես՝ մասնագիտական աշխատանքի բացակայության, ՀՀ-ում բավարար կենսապայմաններ ապահովելու համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինության հետ:

11. Երևանից էմիգրացվածների կեսից ավելին վերադառնալու մտադրություն չունի, վերադառնալու մտադրություն ունի միգրացվածների 1/3-ը: Ռեէմիգրացման ամենաբարձր ներուժն ունեն Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Սյունիքի և Տավուշի մարզերը, իսկ ամենացածրը՝ Երևանը, այնուհետև Շիրակի մարզը: Հայրենիք վերադառնալու որոշակի ներուժ կարելի է գտնել դեռևս վերադառնալու որոշում չկայացրածների շրջանակներում, այն հաշվով, որ նրանց փոխարեն նշված պատասխանը տվել են ընտանիքի անդամները՝ չունենալով հավաստի այլ պատասխան:

12. Սույն հետազոտությունը փաստում է միջազգային տնտեսագիտության մեջ ամրագրված կարևոր մեկ օրինաչափություն. ավելի հեռավոր զարգացած տարածաշրջաններ կամ երկրներ միգրանտները տեղափոխվում են ընտանիքներով և կայացնում մշտական բնակության որոշում:

13. 1706 միգրանտից հայրենիքում բնակվող իրենց ընտանիքների անդամներին, հարազատներին դրամական փոխանցումներ կատարում են 889-ը, որոնցից միայն 49 միգրանտի դրամական փոխանցումներն են կազմել հայրենիքում բնակվող ընտանիքի անդամների և հարազատների եկամտի 81-100%-ը:

Երիտասարդների միգրացիայի համայնքային հետազոտության արդյունքներից պարզվում է.

1. Վեղի և Մեծամոր, Փամբակ խոշորացված համայնքներում, Վանաձոր խոշորացված համայնքի Գուգարք բնակավայրում առկա բնակչությունը կազմում է մշտական բնակչության 94.0%-ից ավելին: Համայնքների պատասխանատուները պարզաբանում են, որ վերջին տարիներին արտագնա աշխատանքի նպատակով իրականացվող միգրացիան բավականին նվազել է ոչ միայն Ռուսաստանում ձևավորված իրավիճակով, այլ նաև սուբվենցիոն ծրագրերի հիման վրա իրականացվող լայնածավալ շինարարական աշխատանքներով պայմանավորված: Արտագնա միգրացիան աստիճանաբար փոխակերպվում է ներգնա միգրացիայի:

2. Չափազանց խնդրահարույց է Միսիան խոշորացված համայնքում ստեղծված իրավիճակը (առկա բնակչությունը կազմում է մշտական բնակչության 1/3-ից պակաս մասը): 20–30%-ի չափով առկա բնակչությունը պակաս է մշտական բնակչությունից Մարտունի, Բերդ և Բյուրեղավան համայնքներում:

3. Ինչպես մշտական, այնպես էլ առկա բնակչության կազմում 15–34 տարեկան երիտասարդների բաժինն աննշան է (11%-ից պակաս) Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում, պատկերը հուսադրող չէ նաև Միսիան և Ախուրյան խոշորացված համայնքներում, Շիրակի մարզի Աշոցք խոշորացված համայնքում, որտեղ 15–34 տարեկան երիտասարդները կազմում են առկա բնակչության ընդամենը 3.4%-ը:

4. 2023 թ. դրությամբ, ի տարբերություն դաշտավայրային համայնքների, լեռնային համայնքներում առկա տնային տնտեսությունների թիվը կրճատվել է: Միսիան, Փամբակ, Մարտունի և Եղեգնաձոր խոշորացված համայնքներում ուսումնասիրվող բոլոր տարիներին գյուղացիական տնտեսությունների քանակը նվազել է:

5. Բոլոր խոշորացված համայնքներում, հողագործությանը զուգահեռ, գյուղական բնակչության զբաղվածությունը բավականին ակտիվ է նաև անասնապահության ոլորտում:

6. Մարզերում երիտասարդները հիմնականում զբաղված են բիզնեսի ոլորտում, հողագործական աշխատանքներում, ինչպես նաև սովորողներ են:

7. Երիտասարդների արտագաղթի հիմնական պատճառներից շեշտադրվել են աշխատատեղերի, բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում մասնագիտական աշխատանքով զբաղվածության հնարավորության բացակայությունը և բավարար կենսամակարդակ ապահովելու համար անհրաժեշտ գումարներ վաստակելու անհնարինությունը: Հարցվողներից և ոչ մեկը երիտասարդների արտագաղթի պատճառների շարքում «բարոյահոգեբանական, սոցիալական և քաղաքական անատողջ մթնոլորտ», «անարդարություն» տարբերակները չի ընտրել:

8. Դրամական փոխանցումների ամենամեծ բաժինը ծախսվում է ընթացիկ անձնական սպառման վրա: Դրանք ունեն նաև որոշակի ներդրումային ակտիվություն, որն առնչվում է մարդկային կապիտալի զարգացմանը (կրթության, ուսման ծախսեր), բնակարանների վերանորոգմանը և բնակարանային շինարարությանը: Խնայողությունների կամ ավանդների առումով դրամական փոխանցումներն ունեն աննշան դերակատարություն:

Փորձագիտական հարցումների արդյունքներն այսպիսին են.

1. Փորձագետների առավել հավաստի, անկողմնակալ և խորքային մասնագիտական, որակական գնահատումների հիման վրա փորձ է արվել բացահայտելու և պարզաբանելու երիտասարդների շրջանում աշխատանքային միզբացիայի առկա դրդապատճառները, դրա կանխարգելման հնարավոր ուղիները, ինչպես նաև հատկորոշել երիտասարդների միզբացիայի իրավի-

ճակի բարելավման հնարավոր միջոցառումներն ու համարժեք գործողությունները՝ ՀՀ միգրացիոն քաղաքականության համատեքստում:

2. Պարզաբանվել է, որ գյուղական բնակավայրերում երիտասարդների համար արդյունավետ և կայուն զբաղվածության անհրաժեշտ՝ հանգիստը և առօրյան կազմակերպելու հնարավորություններ գոյություն չունեն: Արդյունավետ զբաղվածության ապահովման խնդիրներն առավել ցայտուն են հատկապես հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում:

3. Արտաքին և ներքին միգրացիայի համար հենքային գործոն են նաև Երևանի և խոշոր այլ քաղաքների ու փոքր քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև աշխատաշուկայի խիստ արտահայտված անհամաչափությունը, ծառայությունների ոլորտում հնարավորությունների ընդգծված բևեռացումները: Մարզերից երիտասարդության շարունակվող ներքին շարժերը դեպի Երևան էապես նվազեցնում են մարզային բնակավայրերում մարդկային կապիտալը և դրանով պայմանավորված՝ սոցիալ-տնտեսական համաչափ զարգացման հնարավորությունները:

4. Մարզերում չափազանց սուր են արտահայտված ժողովրդագրական խնդիրները, գյուղատնտեսական արդյունավետ և ակտիվ այնպիսի զբաղվածությունը, որը գյուղի երիտասարդությանը կապահովի բավարար և կայուն եկամտով, մասնագիտական, մասնավորապես՝ միջին մասնագիտական արդիական կրթություն ստանալու հնարավորություններով: Ներքին և արտաքին միգրացիան կանխարգելելու առումով բավարար արդյունավետ չէ նաև զբաղվածության պետական աջակցությունը:

5. Համայնքներում համաչափ չի զարգանում նաև մշակութային կյանքը: Մշակութային օբյեկտների, զվարճանքի վայրերի, սրճարանների, այգիների, անվտանգ զբոսնելու կամ հաճելի այլ ժամանց կազմակերպելու հնարավորությունները երիտասարդության համար խիստ սահմանափակ են:

6. Բավարար ուշադրության չի արժանանում մարզերի, քաղաքային բնակավայրերի (Գյումրի, Վանաձոր, Իջևան, Դիլիջան, Գորիս, Միսիան, Կապան, Գավառ, Արտաշատ և այլն) համաչափ զարգացումը՝ ներքին միգրացիոն հոսքերը կարգավորելու առումով:

7. Հայաստանը չի իրականացրել Աշխատանքի միջազգային կազմակերպության 122-րդ կոնվենցիայով ստանձնած այն պարտավորությունը, ըստ որի պետք է սոցիալական գործընկերության ձևաչափում մշակվել զբաղվածության նոր ռազմավարություն: Զբաղվածության քաղաքականության գործող կարգավորումները արդյունավետ չեն. գործատուները խուսափում են զբաղվածության պետական ծրագրերում ներգրավվելուց, որովհետև դրանց իրականացման կարգերը խիստ բարդ են, սահմանափակումները շատ են, իսկ վերահսկողական մեխանիզմներն անկատար են:

8. Առավել մտահոգիչ է, որ նախորդ հինգ տարիներին գյուղական բնակավայրերում առկա են շուրջ 132 հազար աշխատուժից դուրս երիտասարդ-

ներ կամ Հայաստանում աշխատուժից դուրս է երիտասարդների 43%-ը: Մյուս կողմից՝ վերջին հինգ տարիներին ՀՀ մարզերում տեղի են ունեցել և, ըստ այդմ, կանխատեսվում են մի շարք զարգացումներ, որոնք կարող են դրական ազդեցություն ունենալ երիտասարդների զբաղվածության առումով: Մասնավորապես՝ կայուն աճել են զբոսաշրջության հիմնական ցուցանիշները: Հատկանշական է նաև շինարարության ոլորտի աճը բացառապես բոլոր մարզերում և մինչև 2021 թվականը ներառյալ՝ Երևանում այս ցուցանիշի նվազումը:

9. Հիմնական խնդիրներից է նաև այն, որ գյուղական բնակավայրերի զարգացման ծրագրերին բավարար ուշադրություն չի դարձվում: Այսօր ևս այդ ծրագրերը դեռևս ամբողջական չեն, և բոլոր խնդիրները լուծված չեն: Կարևոր է շարունակում մնալ գյուղում բնակվող երիտասարդների կայուն և բավարար եկամտի ապահովումը: Միայն կլիմի կարծել, թե նրանք չեն ուզում աշխատել: Հողագործությամբ և անասնապահությամբ կարող են զբաղվել, սակայն դա չի դառնում կայուն եկամտի բավարար աղբյուր: Եթե չեն լուծվում ենթակառուցվածքների խնդիրները, ապա անհրական են դառնում բարձրարժեք գյուղատնտեսության գոյությունը և զարգացումը: Բնականաբար, պետք է հաշվի առնել նաև, որ ունենք սահմանամերձ բնակավայրեր, և անհրաժեշտ է հնարավոր ամեն ինչ անել, որպեսզի այնտեղ կյանքը լինի անվտանգ և բարեկեցիկ՝ երիտասարդների արտագաղթը կանխելու նպատակով:

10. Փորձագետների գնահատմամբ համայնքներում հիմնական փոփոխությունները եղել են ենթակառուցվածքների ոլորտում՝ ճանապարհաշինություն, սոցիալական ենթակառուցվածքներ, դպրոցներ, բայց դեռևս մարզերում երիտասարդների կյանքը էականորեն չի բարելավվել և ավելի հետաքրքիր չի դարձել, քանի որ հանրային կյանքի մնացած կարևոր խնդիրների լուծումներն առայժմ նույնիսկ ծրագրված չեն, այդ թվում՝ արդյունավետ կրթության հասանելիությունը, մշակութային կյանքը, հանգիստը, զվարճանքը և այլն:

11. Ինչ վերաբերում է գործարարությանը, ապա մարզերում այն ունի ակտիվացման լրացուցիչ խնդիրներ: Խոցելի տարածաշրջաններում նոր աշխատատեղերի առումով ևս էական տեղաշարժեր չեն արձանագրվել: Հետևաբար՝ պետությունը համայնքների զարգացման ծրագրերով պետք է թիրախավորի նաև կայուն և արդյունավետ զբաղվածության խնդիրները՝ ծրագրային աջակցության որոշակի հենքով:

12. Փորձագետների գնահատման ընդհանուր արդյունքներով կարելի է եզրակացնել, որ զբաղվածության թիրախային պետական քաղաքականության կարիք կա հատկապես երիտասարդների և կանանց մասով: Հետագոտությունները ցույց են տվել, որ խնդիրներ կան նաև փոքր և միջին ձեռնե-

րեցության ոլորտում կանանց ներգրավման առումով, թեև կին հաջողակ գործարարները շատ են:

Այսպիսով՝ կարելի է առանձնացնել երիտասարդների միգրացիայի հստակ ընդգծված երեք հոսք. **կրթական միգրացիա, ինտելեկտուալ միգրացիա՝** երիտասարդ, բարձր որակավորում ունեցող մասնագետների և շրջանավարտների արտահոսք, և տարածաշրջանային զարգացման անհամասնություններով, աշխատաշուկայի վիճակով, բնակչության կենսամակարդակով պայմանավորված **աշխատանքային միգրացիա:** Ընդ որում, եթե կրթական միգրացիան համեմատաբար կառավարելի է, ապա նույնը չի կարելի ասել մյուս տեսակների մասին:

Որպես արձանագրված խնդիրների լուծումներ՝ առաջարկվում են.

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- ✓ *Պերության և հասարակության կողմից ժողովրդագրական գործընթացների կարգավորում*, նոր, արդի պայմաններին համապատասխանող ժողովրդագրական ռազմավարության մշակում, որում հաշվի կառնվեն նաև սույն հետազոտությունում արծարծված՝ երիտասարդ տարիքի բնակչության արտագաղթի դրդապատճառները և դրա՝ սոցիալ-ժողովրդագրական հետևանքներով պայմանավորված մարտահրավերները:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐՏԱԳԱՂԹԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- ✓ *Տարեսական աճի ապահովման քաղաքականություն*
Միգրացիոն հոսքերը կանխարգելելու առումով առաջնահերթ նշանակություն կունենա մարզերի, քաղաքային բնակավայրերի սոցիալ-տնտեսական համաչափ զարգացումը, իսկ Տավուշի և Սյունիքի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացումը, ընդհանուր առմամբ, ռազմավարական առաջնահերթության կարգավիճակ պետք է ստանա: Մարզերում առկա է էական մեծ ներուժ՝ նպատակային պետական աջակցությամբ և մարզերի առանձնահատկություններն ու համեմատական առավելությունները հաշվի առնելով, նաև կանանց ներգրավմամբ թիրախային բիզնես ծրագրեր մեկնարկելու:
Մարզերի համար դրական արդյունք կարող է արձանագրվել նաև եկամտային հարկի վերադարձի պայմաններով հիպոթեկային վարկավորման աջակցության պետական ծրագրից Երևան քաղաքի դուրսբերումը:
- ✓ *Արժանապարհիվ գրադվածության ապահովման քաղաքականություն*
Եկամուտների արդար բաշխումը, ցածր եկամուտներ ունեցող երիտասարդների և նրանց ընտանիքների եկամուտների առաջանցիկ, կայուն

աճի ապահովումը դրական ազդեցություն կարող են ունենալ միգրացիոն ճնշումները զսպելու և երիտասարդների շրջանում միգրացիոն հակումները նվազեցնելու առումով: Դա ենթադրում է՝

• *Աշխատաշուկայի ակտիվ քաղաքականություն*

1. Հեռավար աշխատանքի հնարավորությունների լիարժեք ապահովում. անհրաժեշտ է խթանել հատկապես գյուղական բնակավայրերում հեռավար աշխատանքը՝ բարելավելով համացանցային ենթակառուցվածքը, ստեղծելով համատեղ աշխատանքային տարածքներ (co-working): Հարկ է պետական ծրագրերով և խթանիչ կարգավորումներով խթանել քաղաքային բնակավայրերի գործատուներին՝ հեռավար եղանակով վարձելու գյուղական շրջաններից երիտասարդ աշխատողների՝ նրանց ապահովելով կայուն աշխատանքով:
2. Գյուղական նորարարական կենտրոնների հիմնում և զարգացմանն աջակցություն. պետական մասնակցությամբ և օժանդակությամբ անհրաժեշտ է հիմնել գյուղական ինովացիոն կամ տեխնոլոգիական կենտրոններ, որոնք կապահովեն ժամանակակից տեխնոլոգիաներին հասանելիությունը, թվային հմտությունների ուսուցումը և տեխնոլոգիական ստարտափների խթանումը: Կենտրոնները կարող են հնարավորություններ ստեղծել երիտասարդների բիզնես մտահղացումների իրագործման համար:
3. Զբաղվածության պետական աջակցության ծրագրերը պետք է ոչ թե վերացական, ընդհանրական և ստանդարտացված լինեն, այլ ներառվեն տվյալ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում՝ հաշվի առնելով տարածաշրջանային առանձնահատկություններն ու համեմատական առավելությունները:
4. Արդյունավետ և կայուն զբաղվածության ապահովման տեսանկյունից էական են կրթության ոլորտում առկա խնդիրների համակարգային լուծումները, այդ թվում՝ կրթություն-աշխատաշուկա քանակական ու որակական արդյունավետ կապի և հավասարակշռության ապահովումը: Այստեղ հատկանշական խնդիրներ են շարունակում մնալ աշխատանքի և զբաղվածության, կրթության և էկոնոմիկայի ոլորտներում լիազոր մարմինների սերտ և համակարգված աշխատանքի ապահովումը, զբաղմունքի դասակարգիչների և կրթական չափորոշիչների վերանայմանն ու համապատասխանեցման գործընթացների իրականացումը՝ ըստ ժամանակակից պահանջների:
5. Զբաղվածությունը, ինչպես նաև բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգաղթը խթանող՝ գործող և ընդունման ենթակա պետական քաղաքականության բոլոր փաստաթղթերում 18–35 տարեկան երիտասարդների համար աշխատանքային ստաժով պայմանավոր-

ված սահմանափակումների մեղմման կամ վերացման հնարավորության դիտարկում:

- *Դրամաշնորհների, սուբսիդիաների և կրթաթոշակների հասրուկ սիսեմանների ներդրում*, ըստ որի, մասնագիտական կրթությունը և մասնագիտական փորձառության ձեռքբերումը զուգակցվում են, որից հետո 29 տարեկանից ցածր տարիքի բոլոր երիտասարդները պետք է ստանան պատշաճ և ըստ մասնագիտության զբաղվածության, կրթությունը շարունակելու, մասնագիտական փորձառություն անցնելու առաջարկ՝ աշխատանքը կորցնելուց կամ ֆորմալ կրթությունը ավարտելուց հետո 4 ամսվա ընթացքում:
- *Աշխատողների իրավունքների հավասարակշռված պաշտպանություն*, ըստ որի, անհրաժեշտ է աշխատանքային օրենսդրության կառուցակարգերի հետևողական բարելավմանը և միջազգային իրավունքի չափանիշներին համապատասխանեցմանը զուգահեռ ձևավորել այդ նորմատիվ պահանջների նկատմամբ արդյունավետ պետական հսկողության և վերահսկողության գործուն համակարգ: Սոցիալաշխատանքային լրացուցիչ երաշխիքների զարգացման համար օբյեկտիվ անհրաժեշտություն է ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին և աշխարհում առկա լավագույն փորձին համապատասխան աշխատանքային հարաբերությունների ոլորտում սոցիալական երկխոսության հարթակի զարգացումն ու գործնականում կոլեկտիվ համաձայնագրերի ինստիտուտի դերի բարձրացումը և հնարավորինս լայն կիրառության ամբողջական հիմքերի ապահովումը: Մյուս մակրոուղղությունը վերաբերում է աշխատողների իրավունքների դատական և արտադատական պաշտպանության հասանելիության աստիճանի բարձրացմանը, աշխատողների իրավագիտակցության մակարդակի հետևողական բարձրացման պետական քաղաքականության շարունակական իրականացմանը:
- *Սոցիալական երկխոսության և կոլեկտիվ համաձայնագրերի ինստիտուտների դերի բարձրացում*
- *Զբաղվածության ֆորմալացում*
Անօրինական աշխատանքի դեպքերի բացահայտում և օրինական աշխատանքի ու ֆորմալ զբաղվածության սոցիալ-տնտեսական բավարար խթանների գործնական ապահովում:

✓ *Կրթության ոլորտի քաղաքականություն*

- *R&D ծախսերի աճ, կրթական ենթակառուցվածքների սրելծում* Բակավարական կրթաձևում տեխնիկական վերապատրաստումների համակարգի ներդրում, որի շնորհիվ տեխնիկական գիտությունների

ուղորտում գիտական աստիճան ունեցողներն առավել խոր մասնագիտական հմտություններ ձեռք բերելու հնարավորություն կստանան:

- Մասնագիտական կրթության և վերապատրաստման, բուհերի կրթական ծրագրերի բարելավում:
- Հմտությունների զարգացում և մասնագիտական շարունակական ուսուցում. գյուղական բնակավայրերում մասնագիտական ուսուցման կենտրոնների գործունեության ակտիվացում՝ երիտասարդներին տեղական աշխատաշուկայի կարիքներին և որակական պահանջներին համահունչ հմտություններով օժտելու նպատակով: Կենտրոնները պետք է առաջարկեն վերապատրաստումներ գյուղատնտեսության, տեխնոլոգիաների, զբոսաշրջության, սպասարկման և տարածաշրջանային կարիքներին համապատասխանող այլ ոլորտներում:
- Պետական աջակցության ծրագրերը պետք է լինեն առարկայական, թիրախավորված և արդյունքահենք: Պետության կողմից որոշակի տարածաշրջանում պահանջարկ ունեցող մասնագիտությունների թիրախավորում և պայմանագրային հիմունքներով դրանց ապահովում, այն հաշվով, որ տարածաշրջանի երիտասարդները ընտրած մասնագիտությունները կտվորեն անվճար, կստանան բարձր կրթաթոշակ՝ ավարտելուց հետո իրենց բնակավայրեր վերադառնալու և աշխատելու պայմանով:
- Ներդրումներ «նոր տնտեսությունում» պահանջվող այնպիսի հմտությունների զարգացման մեջ, ինչպիսիք են նորաստեղծական, սոցիալական, խնդիրներ լուծելու և նոր մարտահրավերներին ճկուն արձագանքելու կարողությունները:
- Ընկերություններում իրականացվող վերապատրաստումների խթանում:
- Ընդունող երկրների հետ համաձայնագրերի կնքում՝ արտերկրում ուսանողների որոշակի վերապատրաստում անցնելու և պարտադիր վերադառնալու նախապայմանով: Դա սովորողների համար կապահովի նաև արժանավայել աշխատանքային պայմաններ:

✓ *Մտավոր սեփականության արտահոսքի կարգավորման քաղաքականություն*

- Մտավոր սեփականության արտահոսքը կարգավորելու քաղաքականությանը բնորոշ են սոցիալական, տնտեսական և ինստիտուցիոնալ ընդհանուր մեխանիզմներ:

Սոցիալական և տնտեսական մեխանիզմները ներառում են կրթության ոլորտում ներդրումների միջոցով տարրական և միջնակարգ դպրոցների և մասնագիտական ծրագրերի աջակցում ու զարգացում, բարձրագույն կրթության որակի բարձրացում, «նոր տաղանդների» ներգրավում՝ հիմնականում արտերկրից, գիտության և նորարարական տեխնոլոգիաների ֆինանսավորման ավելացում և կրթության բարե-

փոխումներ, հայրենադարձների ներգրավում տեխնոլոգիական պարկերի և ազատ տնտեսական գոտիների կառուցման գործընթացներին: «Ուղեղների արտահոսքը» կանխելու արդյունավետ ինստիտուցիոնալ մեխանիզմ է «ուղեղների շրջանառության» քաղաքականությունը: Դա ենթադրում է մի շարք ծրագրերի միջոցով արտասահմանում աշխատող երիտասարդ գիտնականների մասնակցություն հայրենիքում իրագործվող գիտաարտադրական նախագծերին:

